1897

ԹԻՒ Ե· ՄԱՅԻՍ

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՐԱՐԱՏ



ՏՊԱՐԱՆ Մ· ԱԹՈՌԻՈՅ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

ՀՐԱՄԱՆԵՑԵՔ

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՒԻՐԱԿԱՆ,
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹՃԽԵ Լ. ՏԱՐԻ ՀԱՄԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՅԻՍ 1897 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԻ ԴԵՐԱԿԱՅ ԴԱՂԱՓԱՐԸ.

Զիմ այլով իրիմ փրկութիւն, զի եւ ոչ առնուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցի կեալ մեզ:

Գործք. Դ. 12:

Իւրաքանչիւր անհատ, հասարակութիւն կամ ազգ իւր դերակայ դաղափարն ունի: Դերակայ դաղափարն այն լուսաւոր նպատակն է, որին ձգտել է կամենում անհատը, հասարակութիւնը կամ ազգը: Դերակայ դաղափարը կարող է երբեմն սխալ լինել, բայց և այնպէս լաւ է սխալ դերակայ ունենալ, քան առանց դերակայի լինել: Առանց դերակայի կեանքը մեռելութիւն, անխմաստ դատարկութիւն կլինէր: Իրականութիւնն ու դերակայ դաղափարները իրարից շատ հեռու են ի հարկէ, բայց մարդկութեան սուրբ ձգտումն ու նպատակն է եղել այդ անդունդի վերայ մի հաստատուն կամուրջ ձգել: Մեր կեանքն անխորհուրդ կլինէր, մի անցոյս լաստեր կըդառնար առանց այդ ձգտման:

Դերակայ դաղափարները դանազան են. արուեստի մէջ, օրինակ, դեղեցկութիւնն է, պետութեան մէջ՝ ճշմարտութիւնը, բայց մենաւորապէս դերական, որ մարդկային ձգտման

էութիւնն է կազմում դա բարոյական գերագոյն էութեան։ Որովհետև ինչ տեսակ գերակայ էլ վերցնելու լինինք առանց առընչութեան չէ բարոյական գերակայ գաղափարի հետ։ Գիտակցութիւնը կամ ճշմարտութիւնը կեանքի միայն մի մասն են կազմում այն ինչ բարոյական իդէալը նորա ամբողջութեան էութիւնը։ Եթէ գիտականի իդէալը ճշմարտութիւնն է, նորա անձնաւորութեան ամբողջութիւնը գնահատելու համար՝ չենք մոռանում նորա բարոյական թերութիւններն ու արժանիքները։ Բարոյական գերագոյն կեդրոնն է, միւսները օժանդակ գեր են կատարում բարոյականի կատարելութեան վերաբերութեամբ։

Մենք քրիստոնեաներս պարծենում ենք, որ քրիստոնէութիւնն է տուել աշխարհին փրկութիւն բերող գերագոյն, և պատմութիւնը վկայում է, որ մենք իրաւունք ունինք։ Հեթանոս աշխարհի առաջ գերագոյնները անզօր էին ընդհանուր մարդկութեան մէջ կենդանութեան ոգի ներշնչելու։ Յունական քաղաքակրթութեան ամենափայլուն ժամանակն իսկ, երբ ազատութեան և ազնիւ կրթութեան դաղափարների միութիւնը յոյների գերագոյն էր, ազատ չէ մութ տեսութիւններից։ Հպարտ ինքնագիտակցութիւնը իշխում է տեղական սուրուկ ժողովրդի վերայ և շրջապատող ազգերի ճնշկատին «բարբարոս» անունն է դրոշմում։ Ոսկ յունական փիլիսոփայութեան առաջ բերած գերագոյնները մարդկային իրական կեանքի և սրտի հետ ոչ մի կապ չունեցող, գժգոյն, անկենդան պատկերներ են և ոչ պատմական անձնաւորութիւններ։ Յունական փիլիսոփայութեան գերագոյնները կարելի է մարմարեայ գեղեցիկ արձանների նմանեցնել, որոնք սակայն, իրենց բոլոր գեղեցկութեամբ հանդերձ՝ կեանք չունին։ Տոյիկեան բարոյականութեան, օրինակ, պակասում էր այն կենդանի ոյժը՝ կրօնը, որ սառն արձանին ոգի պիտի ներշնչէր։ Սոկրատես, Պղատոնի և Արիստոտելի փիլիսոփայութիւնների մէջ շատ ազնիւ գծեր կան, բայց այդ փիլիսոփայութիւնը միայն անհատ ընտրեալների սեպհականութիւն էր։ Հետևանքն այն էր, որ հին մարդկութիւնը զրկուած էր կենսաբեր գերակայ գաղափարից։ Բայց և այնպէս ի լուր չէին հին քաղաքակրթութեան ջանքերը. լուսոյ շատ ազնիւ ճառագայթներ պիտի երևան դային այն կենսատու արեգակի մէջ, որ մեռնող մարդկութեան վերակենդանութեան շունչ տուեց։ Կարելի է ասել ամբողջ հին աշխարհը երկունքի մէջ էր. և նորա ծնունդը քրիստոնէութիւնն էր։ Բայց երկունքի այդ պատուղը փոքր ինչ ուրիշ բան էր, քան նորա մայրը։ Մինչև այդ ժամանակ մարդկութեան ձգտումն էր բարձրանալ, աստուածութեան հասնել, բայց մինչև «ի դժոխս» էր իջել։ Պէտք է դար «լրումն ժամանակին», երբ աստուածայինը մարդանայ և առօրեայ մարդկութիւնը դէպի Աստուած բարձրացնէր։ Ծանձին Քրիստոս Քրիստոսի մարդանում է աստուածայինը։ Այս իրողութեան մէջ է կենդրոնացած այն դօրութիւնը, որ քրիստոնէութեան բարոյական յաղթութեան գրաւականն էր։ Յաւարի մէջ խարխափող մարդկութեան համար լուսոյ մի աստղ էր ծագել, կենդանի, իրական, բարոյական գերակայ, ամենքի համար տեսանելի, ամենքի համար շոշափելի։ Քրիստոնէութիւնը յունական փիլիսոփայութեան նման վերացական, կեանքի հետ առնչութիւն չունեցող տեսութիւններ չէր տալիս, կամ քաղաքական և ծիսական պայմաններով խճողուած աստուածպաշտութիւն, այլ մաքուր կրօնական կեանք։ Կրօնը կեանք է և ոչ տեսութիւն։ Այդ կեանքը Աստուծոյ արքայութեան գաղափարն է, նորա զարգացումն ու կատարելութիւնը Աստուածոյ արքայութեան կատարելութիւնը։ Այդ արքայութեան մէջ Աստուծոյ կամքն է իշխում և այդ կամքի բովանդակութիւնն է սէրը։ Աստուծոյ արքայութիւնը ուրիշ անրիծ սիրոյ թագաւորութիւն է։

Հին աշխարհը մի աշխարհ էր առանց ճշմարիտ սիրոյ, ուսաի և ազգանուեցաւ մեռաւ։ Քրիստոնէութիւնը ճշմարիտ սիրոյ կրօնն էր և եթէ նա աշխարհին փրկութիւն բերեց, այդ սիրոյ կեանքն էր։ Քրիստոս ինքն աստուածային պատուիրանների կեդրոնն ու էութիւնը սիրոյ պատուիրանն է համարում։ Սէր առ Աստուած և սէր առ ընկերն նոր վարդապետութեան հիմնաքարերն են։ Քրիստոսի վերջին խօսքը սիրոյ պատուիրանն է և նորան աշակերտ լինելու նշանը սէրն է. «Ցայսմ

պատասխան ամենեքեան՝ եթէ իմ աշակերտ էք, եթէ սիրիցէք զիմեանս»: Նոյն ոգին ենք տեսնում և առաքելական թղթերի մէջ: Ճշմարիտ աստուածասիրութիւնն ու եղբայրսիրութիւնը կցորդուած, անբաժան գաղափարներ են: Ուսոի և Պօղոս առաքեալը քրիստոնեական կեանքի էութիւնը սիրոյ մէջ է տեսնում և բարոյական գերագոյն պատկերը իւր սիրոյ ներբողի մէջ նկարագրում: «Եթէ ըղեղս մարդկան խօսիցիմ և հրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ եղէ ես իբրև զպղինձ, որ հնչէ, կամ իբրև ղօնդոյա, որ ղօդանջէ: Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև ըլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ ոչինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրուձին, և սէր ոչ ունիցիմ ոչինչ օգտիմ: Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յամրմնի, ոչ խնդրէ զիւր, ոչ զբոսի, ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն . . . ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ»:

Որքան վեհ և սքանչելի պատկեր: Քրիստոնէական սիրոյ օրհներգն էր սա: Բայց Պօղոս առաքեալը իւր գլխից չէ հնարում այս պատկերը. երկնաւոր վարդապետի աշակերտներին հայածող Սօղոն այս տողերը գրել չէր կարող: Քրիստոսի հոգին է, այսպէս խօսողը: Քրիստոսի անձնաւորութեամբ գեղեցիկ, Նորա սուրբ սիրով վառուած առաքեալի սրտից կարող էր բղխել այս «սիրոյ երգ երգոցը»: Սա տեսութիւն չէ. անձնաւորեալ Սիրոյ պատկերն է, որ կենդանանում է Նորա հոգու առաջ. «ետմանողք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի»:

Այո՛ քրիստոնէութեան արեգակը Յիսուսի անձնաւորութիւնն է, որից կեանքի ճառագայթներ էին հոսել առաքեալների սրտերի և այնտեղից ամբողջ մարդկութեան մէջ: Կրօնական անձնաւորութեան կատարելատիպն էր Նա, մի կատարելութիւն, որ մարդկային մտքի համար անըմբռնելի երկու ծայրահեղութեան ներդաշնակ միութիւն էր կազմում անհասանելի բարձրութիւն և խոնարհութիւն, մեծութիւն և ծառայական պատրաստակամութիւն: Աղբերի պատմութիւնը քրքրենք, տակն ու վրայ անենք, չկայ սիրոյ այնպիսի կատարելատիպ, ինչպէս կեանքի Առաջնորդն էր: Ո՞նչ էր նորա ամբողջ կեանքի ընթացքը, եթէ ոչ անհուն սիրոյ մի շղթայ: Ո՞ր կարիքն, նեղութիւն կար և Նա օգնութեան չէր հասնում, որ հիւանդին Նա չէր բժշկում, որ աղքատի համար Նա սիրտ չունէր, որ սգաւորին չէր մխիթարում: Ո՞ր մեղքին, ապականութեան գոհը կային և Նա իւր ձեռքը չէր մեկնում նրանց բարձրացնելու: Թշնամի կա՞ր, որին Նա չէր սիրում: Նա մարդու էր և անարատ, քան լոյսը: «Աստուած սէր է» և Նա այդ սիրոյ մարմնացումն էր: Նա սէր էր իւր վարդապետութեան մէջ, Նա սէր էր իւր գործունէութեան մէջ, Նա սէր էր իւր չարչարանքի մէջ, Նա սէր էր և խաչի վերայ:

Կենսատու սէրը քառաթև խաչի վերայից է հոսում դէպի մարդկանց սրտերը. այնտեղ գարձնենք մեր աչքը, այնտեղից սպասենք փրկութիւնը: Որովհետև չէք պղտոր իւք փլկութիւն. դի և ոչ անուն այլ պայ ի նեղքոյ երկնից առնել ի մարդիկ՝ որով արժան լիցի, կալ մեզ»:

Գարեգին Սարկաւագ.

ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՒ
ԸՂՋԻՑՆԵՐԻ ԽՆԴՄՈՏՈՒԹԻՒՆԸ ԳԻՐՔԸ.

Բացցեայ՝ եւ եհաս ինձ ոտիկ, ծառաւեցի՝ եւ արբուցի ինձ. օսար էի՝ եւ ժողովեցէք զիս. մերկ՝ եւ զգեցուցէք զիս. հիւանդ եի եւ տեսէք զիս՝ ի բանտի էի, եւ ելիք առ իս:

Մատթ. ԻԵ. 35—36.

Հայ ազգն այժմ օրհասական վիճակի մէջ է. անցեալ տարիների տխուր դէպքերը վտանգի ենթարկեցին նորա գոյութեան խընդիրը: Հազարաւոր մարդիկ զրկուած ամա-

յուսածքից, հայրենիքից, բաղխում են ազգային և եկեղեցական հաստատութիւններին, իրենց հաւատակիցների դռները՝ հայց խընդրելով: Սա մի ձգնաժամ է, որ կարող է նաև դէպի բարոյական կորուստ տանել: Մեծ ճգնաժամերը փրկում կամ կործանում են ազգերին. մեր գլխին եկած փորձանքի հեռևանքները յուսահատականի չափ ծանր են: Մենք միայն մի կէտի՝ գաղթականների խնամատարութեան գործի վերայ, կկամենայինք դարձնել մեր ընթերցողների ուշադրութիւնը:

Մեծ է այն զոհաբերութիւնը, որ առնում է մեր ժողովուրդը, բայց և մեծ են այն արտունջները, որ լսուում են զանազան կողմերից: Շատ աղքատներ գրկուում են նպաստից, այն ինչ միւսները կրկնակի են տանջում: Շատերը հարստանալու միջոց են համարում նուէրները և տասցած վողերով վաշխառութիւն անում: Մ՚իւսները տացածները յետ պարձնում՝ *նրանով* հատարելով տանջապարիկ աւելի պահանջել: Գլուխում տանջակ լուրլիներ ունեցողը նոյնպէս ձեռք է մեկնում ինչպէս քաղցից տանջուողը: Աշխատանքի ընդունակ առողջ երիտասարդը նոյնպէս օգնութիւն է տանում ինչպէս գործելու անընդունակ մուրացիկը: Բայց որ ամենից ցաւալին է՝ աշխատասէր երեսի քրտինքով հաց վաստակելու սովոր ժողովրդի զաւակները այսօր գործակատութեան մէջ են աշխատանքից խուսափելու և ձրիակերութեան վարժուելու: Մ՚իւս կողմից այն ներքին, ազնիւ շարժառիթները, որ օրական պարկնը հազիւ հայթայթող ժողովրդին առիթ են բաժին հանել իրենց եղբայրների համար՝ հետզհետէ թուլանում և անհետանում են այդպիսի գործակցեցուցիչ դէպքերի պատճառով: Մեր կարծիքով այս վէրքերը յառաջանում են մասամբ և անկանոն բաշխման պատճառով: Ուստի և պարտք համարեցինք «Արարատ»-ի ընթերցողներին ծանօթացնել, թէ ի՞նչ սկզբունքներով և ի՞նչպէս է կազմակերպուել աղքատների խնամատարութեան գործը քրիստոնէական եկեղեցու մէջ անցեալում և թէ ինչպէս է այժմ քաղաքակիրթ աշխարհում յուսալով՝ որ շատերի համար կարող է օգտակար լինել:

Ա.

Աղքատների խնամատարութիւնը մինչև Կոստանդին:

Աղքատների խնամատարութիւնը գուտ քրիստոնէական երևոյթ է և նորա ծագումն ու զարգացումը սերտ կապ ունի քրիստոնէութեան ծագման և տարածման պատմութեան հետ: Այստեղ ևս պէտք է փնտռենք այն սկզբունքները, որոնցով պէտք է ղեկավարուել աղքատների խնամատարութեան գործում: Աղքատներ եղել են նաև նախաքրիստոնէական ժամանակներում և նպաստներ են տացել իրենց համաքաղաքացիներից, բայց հեթանոսութեան մէջ այդ գործը բոլորովին ուրիշ սկզբունքների վերայ էր հիմնուած, քան քրիստոնէութեան մէջ. մէկի մէջ եսական շարժառիթներն են գործում միւսի մէջ մաքուր սէրը. այնտեղ քաղաքացիական ու պետական շահերը, այստեղ բարոյական պարտքի զգացումը: Բայց ոչ միայն շարժառիթներն են տարբեր, այլ և օժանդակութեան հետևանքները: Հեթանոսութեան մէջ աղքատը իւր նպաստն տանելուց յետոյ՝ գործադրում էր իւր շռայլութեան, զուարճութեան համար, այն ինչ քրիստոնէութեան մէջ նիւթական օգնութեան հետ կապուած էր, և մինչև իսկ դլխաւոր նպատակն էր՝ բարոյական կրթութիւնը. մէկում ծուլութեան առիթ էին այդ նպաստները, միւսում աղքատի անկախ գործունէութեան օժանդակելու միջոց, եթէ նա գործելու ընդունակ էր: Երկրորդ կէտի ճշմարտութեան մէջ համոզուելու շատ առիթ կունենանք, մի քանի փաստ բերենք առաջինը ապացուցանելու համար:

Հռովմում ինչպէս և առհասարակ հեթանոսութեան մէջ աղքատանոցներ, հիւանդանոցներ այն մտքով, ինչպէս մենք ենք հասկանում չեն եղել: Հռովմի հիւանդանոցները միմիայն սպասու կնեղի և պինդուորների համար էին. սպասուհիներին խնամում էին աշխատող ձեռքերից չզրկուելու, իսկ պինդուորներին՝ պետութիւնն ընդարձակելու, ազգերին սարկութեան մէջ պահելու և Հռովմում կապուտ ու կողոպուտ հաւաքելու համար: Հիւանդանոցներն ուրիմն գուտ շահագիտական միտումներով

հիմնուած հաստատութիւններ էին։ Հակառակ նոյնպէս որբերի և այրիների խնամատարութիւն համար այդ նպատակով հիմնուած հաստատութիւններ։ Սպարտացիների օրէնքը թոյլ կազմուածք ունեցող երեխաների վերաբերութեամբ յայտնի է ամենքին։ Հռովմէական կայսրութեան ժամանակ մանուկները կրթելու հաստատութիւններ են հիմնուում բայց ոչ սիրոյ շարժառիթներով, այլ ժողովրդի աճեցողութեան զգալի նուազման առաջն առնելու համար։ Հռովմէական հասարակ ժողովրդին բաժանած նուէրները ու նպաստները միմիայն քաղաքական դիտումներով էին կատարուում։ այսպէս էին Յուլիոս Կեսարի և ուրիշ հերոսների տուած ճաշկերոյթները ու պարգևները։ Կայսրները գահ բարձրանալիս, իրենց յոբելեանները կատարելիս կամ յաղթութիւն տօնելիս պրամ էին բաշխում ժողովրդին, շքեղ ճաշկերոյթներ տալիս, թատրոնում կամ կրկէսներում ձրի զուարճացնում։ Այս կարգի նուիրատուութեան մէջ պէտք է հաշուել նաև կայսրների կատկով թողած նուէրները։ Հացահատիկների բաշխումն էս գուտ քաղաքական դիտումներով սկսուած գործ էր և նոյն դիտումներով էլ շարունակւում էր կայսրութեան ժամանակ։ Հռովմէական պատմութեան ծանօթ անձինք լաւ գիտեն, թէ ինչպիսի ապականող ազդեցութիւն էին անում այս հըրապուրիչ պարգևները։ Ամբոխը պատրաստ էր այսօրուայ պաշտած հերոսի կամ կայսր ապանող յաջորդին ցնծութեան ազաղակներով ընդունել, եթէ նորանից էս սպասելիք ունէր։ Շատ բնորոշ է այն հանգամանքը, որ ամենանպաստաբոյական կայսեր՝ մայրասպան Ներոնի, ժամանակ պարգևները ամենից առատ էին։

Անհրաժեշտ է մի ուրիշ կէտ էս պարզել հեթանոսութեան և քրիստոնէութեան մէջ եղած աղքատների խնամատարութեան պահանջութիւնը շօշափելի դարձնելու համար։ Քրիստոնէական բարեգործութեան հետ սերտ կապուած էր աշխատանքի նուիրականութեան գաղափարն, ինչպէս կանանչնք, որից զուրկ էր հեթանոսական աշխարհը։ Սակայն հեթանոսութեան սկզբնական ժամանակներում էլ երևում է, որ արհեստը պատուաւոր զբաղմունք է եղել։ Հեթանոսական քաղաքակրթութեան հետ ընկնում է և ձեռքի աշխատանքի արհեստի յարգը։ Երկրագործութիւնը համեմատաբար աւելի երկար ժամանակ ազնիւ պարապմունք էր համարուում սակայն սարկութեան տարածման հետ զարգանում է և ազատ ժողովրդի արհամարհանքը դէպի աշխատանքը։ Դա այժմ միայն սարուկներին է վայել, իսկ կրթուած քաղաքացին փիլիսոփայական տեսութիւններով, արուեստներով պիտի զբաղուէր։ Յունական և հռովմէական փիլիսոփայութեան մէջ յեղյեղւում է այն միտքը, թէ արհեստն ազատ մարդուն անվայել գործ է։ Եթէ ազատ քաղաքացիներից արհեստաւորներ էլ կային, սարուկներից շատ աւելի յարգ չունէին։ Աշխատանքը, որ կեանքի հիմնաքարն է, հեթանոս քաղաքակրթութեան մէջ իր արժանաւոր յարգը չէ ստանում։ Սորա վերայ պիտի աւելացնենք նաև, որ աշխատանքի նուազման հետ չէր նուազել և ագահութեան անկշռը։ Ոչ մի տեղ վաշխառութիւնն այնպիսի չարիք չէ գործել, ինչպէս կայսրութեան ժամանակին հռովմում։* Չրիակերութիւնը, որին սովորել էր ժողովուրդը պատերազմի դաշտում ձեռք բերած աւարների փշրանքներից բաժին ստանալով և կայսրների տուած պարգևներով, ինչպէս և աշխատանքի բարոյական գնահատութեան բարձակայութիւնը որպէս էին, որ հռովմէական պետութեան արմատները կտծելով՝ նորա անկումը պատրաստեցին։

Ուրիշ պատկեր է տալիս մեզ քրիստոնէութիւնը։ Նոր կրօնի հիմնադիրը աղքատների բարեկամն էր (Մատ. Ե. 2, Ժա. 5) և ողորմածութեան չատագովը (Մատթ. Ե. 7)։ Ողորմութեան քանակութիւնը չէր որ նա գնահատում էր, այլ այն սիրտը, որից բղխում է ողորմութիւնը։ Այրի կնոջ լուման աւելի արժէք ունէր Նորա աչքում, քան բոլոր մեծատուների նուէրները։ Աղքատներին, կարօտեալներին խնամելը բարձր առաքինութիւն էր համարում Նա (Մատթ. ԻԵ. 35-36. 40). բազմաթիւ առակներով և քարոզներով այն միտքն էր շեշտում Քրիստոս, թէ երկրաւոր բարիքը չի կարող կեանքի բարձրագոյն նպատակ լինել, թէ քրիստոնեան ուրիշ գանձ ունի պահելու, որ «ոչ ցեց և ուտիճ ապականէ», և թէ երկրաւոր բարիքը միայն միջոց է

* M. v. Nathusius.-Die Mitarbeit der Kirche an der Lösung der socialen Frage, Leipzig, 1895, եր. 210.

աւելի բարձրը ձեռք բերելու համար: Ասել է թէ քրիստոնեայի իւր հաւատակիցին տուած նիւթական օժանդակութիւնը չէր կարող միայն նորա կեանքի արտաքին ապահովութեան նպատակով սահմանափակուած լինել, քանի որ երկրայինը ոչինչ էր առանց աւելի մի բարձր նպատակի, այլ այդ նիւթական օժանդակութիւնն էլ ուղղուած պիտի լինէր դէպի այն բարձր նպատակը, որ է իւրաքանչիւր քրիստոնեայի տենչը, այսինքն արքայութեան ժառանգ լինելու: Աստուծոյ արքայութեան գաղափարը քրիստոնէութեան կեդրոնական գաղափարն էր և նորա օրէնսգիրքը սիրոյ օրէնքը: ապա ուրեմն և այդ արքայութեան քաղաքացու կեանքը սիրոյ օրէնքի համեմատ կազմակերպութիւն պիտի ստանար: Ա՛յդ, այդ սէրը անտարբեր մնալ չէր կարող, երբ ժառանգակից-ներից մէկը քրիստոնէութեան բարձր նպատակից շեղուելու պայմանների մէջ էր: Ինչպէս քրիստոնեայի արտաքին կեանքը, այնպէս և նորա բարեգործութիւնը պէտք է քրիստոնէութեան հիմնական սկզբունքների համեմատ կազմակերպութիւն ստանար: «Ողջոյնք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է», պատուիրել էր Քրիստոս: Բայց միւս կողմից քրիստոնէի ողորմածութեան միայն հաւատակիցը կամ քաղաքային չափով է արժանանար, ինչպէս հեթանոսութեան մէջ էր, այլ ամեն մի կարօտեալ. այն Երկնաւոր Հայրը, որի կատարելութեան պիտի ձգտէր քրիստոնեան, «զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց»: Այսպէս պիտի լինէր և քրիստոնեան: Քրիստոսի մի ուրիշ խօսքը. «Ողջոյնք զթածք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր զթած է» և Սամարացու առակը (Ղուկ. Ժ. 25-37) աւելի որոշ կերպով ցոյց են տալիս, որ քրիստոնեան օգնութեան պիտի հասնէր ամեն տեղ, ուր կարիք կար, առանց խտրութեան: Նա յիրաւի եկեղեցական պատմութիւնը վկայում է, որ այս հիմունքների վերայ է սկսուել և զարգացել քրիստոնէական բարեգործութիւնը: Քրիստոնէական եկեղեցին ամենայն զգուշութեամբ խուսափել է այնպիսի բարեգործութիւնից, որ սատցողի բարոյական շինութիւնը վտանգի էր ենթարկում, թէև աշխարհը ոչ մի տեղ այնպիսի զոհաբերութեան պատրաստակամութիւն չէ տեսել, ինչպէս քրիստոնէութեան մէջ:

Առաքելական շրջանում արդէն նկատելի են աղքատների խնամատարութեան այն սաղմերը, որոնք հետզհետէ պէտք աւելի զարգացային կատարելագործուէին: Քրիստոնէական առաջին համայնքի մէջ եղբայրութիւնը մինչև ստացուածքի հաւասարութեան է հասնում: Հաւատացեալները կամաւ նուէր են բերում իրենց գոյքը, որպէս զի ամենքն էլ, որոնց մէջ և աղքատները, իրենց կարիքները հոգալ կարողանային: (Գործք, Բ. 44, Դ. 34-35): Օրթոդոքսիկաւանների ընտրութեամբ սկսուում է աղքատների խնամատարութեան կազմակերպութեան գործը: Այս դէպքը մի օրինակ է, թէ սիրոյ ամենաւառ ժամանակն էլ կանոնաւորութիւնը և կարգապահութիւնը անհրաժեշտ պայման է գործի յաջողութեան համար: Այնուհետև առաքեալի թղթերից տեղեկանում ենք, որ նա նուէրներ էր հաւաքում Երուսաղէմի քրիստոնեայ աղքատների համար. Գաղ. Բ. 10. Ա. Կորնթ. Ժ.Զ. 1-4. Բ. Կորնթ. Ը. 2-3: Աշխարհի համար չեռնուաճ, չլսուած մի գործ էր սա: Մենք յիշեցինք, որ հեթանոսութեան մէջ միայն քաղաքացիները էին նպաստ ստանում պետութիւնից կամ հարուստ համաքաղաքացիներից, ուրիշ ազգութեան պահանջների մասին ոչ ոք չէր հոգում իսկ հրէաների մասին երևակայելն անգամ անկարելի էր: Այդ դժբաղդ ժողովուրդն այն ժամանակ ևս ատելութեան առարկայ էր: Ոչ միայն հեթանոսն էր ատում կամ արհամարհում նորան, այլև հրէան ինքը պղծութիւն էր համարում հեթանոսի հետ նիստ ու կաց ունենալ, բայց այդ հեթանոս ժողովրդի անդամները՝ աւետարանի քարոզը լսելուց յետոյ՝ նուէրներ են ժողովում Երուսաղէմի հրէայ հաւատացեալների համար:

Բայց ամենից զարմանալին այն հանգամանքն է, որ քրիստոնէական բարեգործութեան հետ սերտ կապուած է աշխատանքի նուիրականութեան գաղափարը: Նուիրատուն և ստացողը պարտաւոր են հաւասարապէս աշխատել. առաջինը ուրիշին օգնելու համար միջոց

ունենալու, իսկ երկրորդը ձրիակեր չգառնալու համար։ Ասել է, աշխատանքի ընդունակ ապրքատը միայն ամենահրաժեշտ դեպքում էր նպաստ առանում, որից յետոյ պարտաւոր էր անձամբ իւր հացը վաստակել։ «Որ գողանային՝ մի՛ ևս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս, զի ընաւական իցէ տալ ումՙ պիտոյ իցէ»։ Եփես. Դ. 28 յորդորում է առաքեալը։ Նուիրատուի գնահատութեան չափը սէրն է, որից բղխում է նուէրը, և ոչ քանակութիւնը։ Նոյն իսկ ապրքատ հաւատացեալներն էլ իրենց ունեցածից բաժին են հանում իրենցից աւելի ապրքատների համար։ Բ. Կորնթ. Ը. 2—4։ Ուրաքանչիւր քրիստոնեայ պարտաւոր էր իր ընտանիքի պարէնը հայթայթել։ «Իսկ եթէ ոք իւրոց, և մանաւանդ և ընտանեաց խնամ ոչ տանիցի, ի հաւատոյն ուրացեալ է, և չար ևս քան զանհաւատան է»։ Ա. Տիմոթ. Ե. 8։ Աշխատանքի գաղափարը աւելի որոշ է արտայայտուած Բ. Թեսաղ. Գ. 12, ուր առաքեալը Տիրոջ անունով ազաչում է նրանց, որոնք «առանհակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յուլայցեալ հեռաքրքիր լինիցին», զի հանդարտութեամբ գործեսցեն՝ և ուրեմն հայ կերիցեն»։ Նա մինչև իսկ պատուիրում է «խորշել յամենայն եղբօրէ՝ որ առանհական գնայցէն»։ Բ. Թես. Գ. 6. այսինքն համայնքից գուրս հանել և յիշեցնում է իւր քարոզչութիւնը՝ «թէ որ ոչ կամիցի գործել՝ և կերիցէ մի»։ Բ. Թես. Գ. 10։ Նոյն առաքեալն աշխատաւորներին յորդորում է. «Մի՛ ձանձրանայք զբարիս գործել», հասկանալի է որ ձշմարիտ կարօտեալների համար։ Այսպէս ուրեմն համայնքի լաւ անդամ լինելու պայմաններից մէկն էլ աշխատասիրութիւնն է։ Բայց այդ աշխատանքը հարստութիւն պիտելու համար չէ, այլ աւելի ազնիւ նպատակի համար՝ «զի բաւական իցէ տալ ումՙ պիտոյ իցէ»։ Մենք աւետարանների և առաքելական թղթերի մէջ շատ կէտեր ունինք, ուր նիւթական ապահովութիւնը դատապարտուում է. «Ցնծա՛ք և ղեղչ լերուք յամենայն ապահովութենէ, զի ոչ եթէ ի մեռելից ընչից ուրուք իցեն կեանք նորա»։ Ղուկ. ԺԲ. 15. իսկ առաքեալն ամենայն չարեաց արմատը ապահովութիւնն է համարում։ Ոչ միայն Պօղոս, այլ և միւս առաքեալները յորդորում են բարեգործ լինել. «Հաւատոք առանց գործոց մեռեալ են»։ Յակ. Բ. 26. «Որ ոչ սիրէ զեղբայր իւր, զոր տեսանէ, զԱստուած, զոր ոչն տեսանէ, զինքն կարիցի սիրել»։ Ա. Յովհ. Դ. 20։

«Որբոց և այրեաց» խնամատարութիւնը նոյնպէս համայնքի գլխաւոր ուշադրութեան առարկայ էր։ Ձշմարիտ կրօնասէր լինելու պայմաններից մէկն էր ըստ Յակ. Ա. 27. «այցելու լինել որբոց և այրեաց ի նեղութեան իւրեանց»։ Բայց այրիներից միայն արժանաւորներն էին համայնքից օժանդակութիւն ստանում. «եթէ մանկունս անուցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ զսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց զհետ երթեալ իցէ, Ա. Տիմոթ. Ե. 10։ Ինչպէս պատարկաշրջիկը, աշխատանքից խուսափողը համայնքից նպաստ չէր ստանալ, այնպէս և անարժան այրին։ Օժանդակութիւն չեն ստանում և այն այրիները, որոնք որդիք և թոռներ ունին. Ա. Տիմ. Ե. 3—4.

Կը շարունակուի.

Դաբրիէլ Սարկաւագ։

ԻՐԵՆԷՈՍ
ԵՒ
ՆՇԽԱՐՆԵՐ ՆՈՐԱ ԴՐՈՒԱԾՆԵՐԻՑ.

Իրենէոս, կամ ինչպէս մեր ազնագոյնի մէջ և մեր նախնեաց գրուածներում սովորաբար յիշուում է՝ Երանոս հեռուէն առաքելոց, մին է եկեղեցւոյ այն ամենահին հայրերից, որոնք, առաքելական աւանդութեան ներկայացուցչ և զօրեղ չառագումներ հանդիսանալով՝ մեծապէս նպաստել են իրենց բազմակողմանի գործունէութեամբ երկրորդ դարու նորակազմ, նեղբուսա և արատաբուսա անչափ վտանգների ենթարկուած եկեղեցին անարատ պահելու և որոշ կարգերով, որոշ գաւանական սկզբունքներով հաստատուն հիմունքների վրայ հաստատելու։ Նորա կեանքի վերաբերմամբ մեր ունեցած հաւատարմագոյ տեղեկութիւններից

ոմանք եզրակացնում են, թէ նա ծնուած պէտք է լինի մօտաւորապէս 140 թ··ին· ուրիշներն աւելի իրաւացի կերպով նորա ծնունդը մինչև 115 թ· են տանում: Յօսելով Ծովհաննէս աւետարանչի աշակերտ Պողիկարպոսի մասին, որ նորագոյն հետազօտութեանց համաձայն 155 թ··ին վախճանած պէտք է լինի, նա ինքն ասում է·* «Պողիկարպոս ոչ միայն յառաքելոց անտի ուսաւ, և շրջեցաւ ընդ բազումս ի նոցանէ, որ տեսին զՏէրն մեր, այլ ի նոցունց իսկ յառաքելոց կարգեցաւ եպիսկոպոս յԱսիա յեկեղեցւոջ Զմիւռնացւոց, զոր և տեսաք մեք ի մանկութեան մերում, զի երկարակեաց եղև նա և ծերացաւ շատ, և յայտնապէս փառօք վկայեալ կնքեաց զկեանս»: Այս և ուրիշ վկայութիւններից հետևում է, որ ըստ ամենայն հաւանականութեան նորա ծննդավայրն Ասիան է (Եփեսոսի նահանգը) և նորա ծնողները արդէն քրիստոնէութիւն ընդունած յոյներ· յամենայն դէպս նա այդտեղ է ստացել իւր կրթութիւնը՝ այնպիսի մարդոց մօտ և այնպիսի հոգի վերայ, ուր գեռ բոլորովին թարմ էին ամենանշանաւոր առաքեալների գործունէութեան հետքերը և կենդանի առաքելական դարու յիշատակներն ու աւանդութիւնները: Թէ ինչպէս նա այդտեղից Գալլիա եկաւ, որ նորա գործունէութեան գլխաւոր ասպարէզն է եղել, որոշ յայտնի չէ· մի աւանդութեան համաձայն նա գնում էր Հռոմում նոյն տարին, երբ Պողիկարպոս այցելութեան էր եկել Անիկետոս եպիսկոպոսին,** և ուսուցիչ էր այնտեղ նորա մահուան ժամանակ, ուրեմն 155 թ··ին: Հաւանականապէս այդտեղից և նա Գալլիա եկաւ, ուր Փոքր Ասիոյ հետ սերտ կապեր ունեցող Լուգդունումի (Լիոնի) համայնքի երէց եղեռնաքարոզեցաւ: Այնուհետև նորան տեսնում ենք կրկին Հռոմում 177 թ··ին, մինատանական վէճերի առթիւ նա մի թուղթ բերաւ Հռոմի Եղեւթերոս եպիսկոպոսին հարաւային Գալլիայի համայնքների կողմից· նոյն ժամանակին էր, որ այս համայնքները մեծ հալածանքի ենթարկուեցան հռոմէական կառավարութեան և ամբոխի կողմից, և նահատակուեցաւ Պոնթինոս եպիսկոպոսը, որին և յաջորդեց Իրենէոս վերոգրեալ յիշոյ: 190 թ··ից վեր նորա անունն այլ ևս չէ յիշուում: ըստ աւանդութեան նա ևս մարտիրոսական մահով է վախճանուել, 202 թ··ին: Այսպիսով նա կենդանի յարաբերութեան մէջ է եղել իւր ժամանակակից քրիստոնէութեան կարևորագոյն կենդրոնների հետ և եւանգելն մանանակցութիւն ունեցել այս դարում յուզուղ գրեթէ բոլոր կրօնական խնդիրների և վէճերի մէջ: Ուստի իւրաքանչիւր մի փոքրիկ հատուած նորա գրուածներից իւր որոշ պատմական արժէքն ունի· Եւսեբիոսից առաջ ապրող հայրերից ոչ ոք իւր գործերով այնքան չէ նպաստում ծանօթանալու եկեղեցական պատմութեան այս նախկին շրջանին և պարզաբանելու նորա շատ մութ կողմերը, որքան նա:

Տարաբախտաբար նորա բազմաթիւ գրուածներից միայն մէկն է ամբողջովին մեր ձեռքը հասել, այն ևս լատիներէն թարգմանութեամբ: Մնացածներից միայն հատուածները կան յունարէն բնագրով և լատիներէն, ասորերէն, հայերէն թարգմանութիւններով, որոնք ի հարկ է բոլորը մեծ խնամքով ժողովուած են: Հայերէն մինչև այժմ յայտնի եղող հատուածները իւր ժողովածուի մէջ է առել Պիտրա Ծիրանաւորը, որից և արտատպել է Հարվէյ անգլիացին:* Աւելորդ չհամարեցինք Արարատի ներկայ համարում յառաջ բերել նաև մի քանի փշրանք դոցանից, որոնք մեր ձեռագրի մէջ (Տ· 1946 Մայր Աթոռի մատենադարանի մայր ցուցակի· Ոճծա թուին Ընէնէ—երևի Ըաիրնէ—քաղաքում գրուած մի ժողովածու, որի կազմողն է ոմն Վարդան) մի քանի տարբեր ընթերցուածներ են ներկայացնում:** Ներկայ յօդուածի ուշադրութեան բուն առարկան կազմում են սակայն սորան կցուած երեք գլխաւոր հատուածները, որոնցից այդ ժողովածուների մէջ գտնուում է միայն առաջինը (Աբէննն և մարգարէք), այն ևս, գոնէ ինչպէս Զարբհանալեանի յառաջ բերած նախադասութիւնից երևում է, տարբեր թարգմանութեամբ:

* Եւսեբիոս· Եկեղ· Պատմութիւն· Դպր· Դ· Գլ· ԺԴ:
** Տես Արարատ 1897, ապրիլ· եր· 448:

* Տես Զարբհանալեան, Թարգմանութիւնք· եր· 419:
** Համ· նոյն:

մանութեամբ։ Մ՚իւս երկու հատուածները լոյս են տեսնում այստեղ առաջին անգամ։ Սոցա վաւերականութեան համար բացի նկրքին վկայութիւններից (ա. ի մէջ օր. որպէս ծանայ Աստուծոյ՝ դաւանաբանութեան ու ս. Գրքի մեկնութեան տեսակէտից կշիռ ունեցող նախնական դարձուածքը. բ. ի մէջ պարզ, նիկիական դաւանանքի ազդեցութեան դեռ չենթարկուած—վերջին նախադասութիւնը հարկաւ յետոյ է աւելացրած—և առաքելական հանգանակին աւելի մօտ եկող արտայայտութիւնները) նպաստաւոր մի հանգամանք է նաև այն, որ այդ հատուածները գտնուում են Մայր Ամոռի մատենադարանի ամենահին ձեռագիրներից մէկի մէջ։ Այդ ձեռագիրը (Հ. 1955 մայր յուցակի) միջակ երկաթագիր է, խոշոր մատղաշի վերայ. սկզբում աւելացրած կայ եօթ թերթ և վերջը մի թերթ հատ թուղթ հին շղագրով, որոնք այժմ արդէն կիսամաշ դրութեան մէջ են։ Այս ձեռագիրը ներկայացնում է վկայութիւնների մի ընդարձակ ժողովածու, բոլորովին տարբեր նման նիւթերի վերաբերեալ մեր տեսած միւս ժողովածուներից, և պարունակում է իւր մէջ բազմաթիւ դեռ չհրատարակուած հատուածներ նախնի հայրերի գրուածներից, որ և կաշխատենք մենք հետզհետէ լոյս ընծայել Արարատի էջերում։ Դժբաղդաբար այս կարևոր ձեռագիրը յիշատակարան չունի, որից կարելի լինէր ժողովածուի ծագման ժամանակն ստուգել. ուստի մի գաղափար տալու համար նորա մասին, բերում ենք ստորև առաջին թերթի վերայ գտնուած, գժուարութեամբ կարդացուող նախաբանը։ Ինչ վերաբերում է լոյս ընծայած յիշատակարանների բուն նիւթին, ձեռքի տակ անհրաժեշտ տղիւրներ չունենալով, նորա արժէքը որոշել թողնում՝ ենք աւելի ձեռնհասներին։

Կ. Վ.

Յաղագս մի ասելոյն զՏէր մեր և զԱստուած Յիսուս Քրիստոս հանդերձ իրով մարմնով և նմին զամենայն ? հաստուցանել զաստուածավայելչականին և զարդիականին, և զի հաւատոյական մեզ եղեալ քան մարմնոյ, նկաց մեզ և այսպէս Աստուած, և երկ յերկուս բաժանելոյն զնա առ պարշտութիւն ի * —Աստուծոյ վարդապետութեանն խառնակելոյ զերանելովք արդոցն և ուղղափառ հարանցն մերոց, և եպիսկոպոսաց, հաւատացեալոյ, խնդիր մեզ առաջի կայ, զրծանից եղելոց Աստուծոյ զնդիկ ասել հայհոյութեանցն, որոց ի տուեարեն Լիտոնի և հետացելոյ սահմանիսն, որ ի ժողովոյն Քաղկեդովնի եղելոյ չաղագս հաւատոց, գնոցունց իսկ զվկայութիւնս զատուր հարանցն, աստուածաշունչս և արտասարս, ընտրեալս չաղագս միութեանն երկնի հանդերձ իրով մարմնովն զՏէրն մեր և զԱստուած Յիսուս Քրիստոս և նմին զամենայն զաստուածավայելչականին և զարդիականին աղնիւ, և երկ մարդկան հաւատացոյականն եղեալ քան մարմնոյ եկաց մեզ հաւատոյական հոդեառն իրով Հարն և Հոգւոյն Սրբոյ, և յերկուս բնութիւնս ոչ բաժանելեացս, զայնսիկ չաղագոյն կարգեցաք, առ հաստատութիւն և զգուշութիւն մեզ. իսկ ինքեանց և այնոցիկ որ պատահեսցին գոցս այսոցիկ, զի գիտեն երբայրով շաղագ ուղիղ լինցա վարդապետութեանն և հետևող ուղղափառութեան հոցունց հաւատոցն, չայտնիցեալք և մեծացեալք գործով բարութեան, արժանի լիցուք զընթացս մեր գայոյ կենաց կատարել ի Քրիստոս. և զուղիղ հաւատսն մինչեւ ի վախճան պահեցեալք, պսակիլ ընդ ամենայն սուրբս պատկաւն արդարութեան չարդար դատաւորին Յիսուսոյ մերոյ Յիսուսէ Քրիստոսէ չարիսեանս չարիսեանից, ամէն։

* Մի կամ երկու բառ եղծուած։

Ձեռ. Հ. 1945

ԵՐԱՆԵԼԻՈՅ ԻՐԷՆԵՈՍԻ ՀԵՏԵՒՈՂԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՂԵԼՈՅ ՂՈՒԿԱՈՒՆԻ, ՈՐ ՓԻԼԻՍՓԱՅԻՑ ՈՒՍՄԱՄԲ ՊԱՅՏԱՌԱՑԵԱԼ ՁԱՆԱՁԷՐ։

Արէնն և մարգարէք և աւետարանք քարոզեցին զՔրիստոս ծնիցեալ ի Կուսէ, և ախտակրելի ի փայտին, և տեսանելի մեռուլոց, և յերկինս վերընթացեալ, և ի հաւրէ փառաւորեալ, և թագաւոր յաւիտեանս. և զի սա է կատարեալ միտք, Աստուծոյն Բանն, որ նախավաղորդայն ազգն ցկին ծնիցեալ, շինակից ամենայնի, ստեղծիչն մարդոյ, յամենայնի ամենայն եղեալն. ի հայրապետեան հայրապետս, յաւրէնսն աւրէն, ի քահանայս քահանայապետս, ի թագաւորս իշխան առաջնորդական, ի մարգարէս մարգարէ, ի հրեշտակս հրեշտակ, ի մարդկան մարդ, ի հաւր Որդի, յԱստուածում Աստուած, յաւիտեանս արքայ։

Սա իսկ է սա, որ զնոյ նաւուղեաց * և զԱբրահամ առաջնորդեաց, ընդ Սահակայ կապեցաւ և ընդ Յակոբայ աւտարակենցաղեաց. ընդ Յովսէփայ վաճառեցաւ և ընդ Մովսէսի գաւրավարեաց. ժողովրդեանն աւրինաւոր[եա]ց և ը[նդ] Յեսուայ Նաւեայ

* Նաւազեաց. (լուսանց քում՝)

վիճակաւորեաց. ի Դաւթի երգիչն եւ ի մարգարէն զիւր կիրն քարոզեաց. ի Կուսի մարմնացեալն եւ ի Բեթղեհեմ ծնիցեալն, ի մուր խառնածարրապատեալն եւ ի հովուացն տեսեալ. ի հրեշտակաց փառաւորեալ եւ ի մոգացն երկրպագեալն. ի Յովհաննէ ընկալեալն եւ ի Յորդանանէ մկրտեալն, յանապատի փորձեցեալն եւ Տէր գտեալ՝ զառաքեալս հաւաքելով, եւ զարքայութիւն քարոզելով, զկաղս բժշկելով եւ զրորոտս մաքրելով, զկոյրս լուսաճելով եւ զմեռեալս յարուցանելով. ի բազմի երեւեալն՝ ի ժողովրդենէ անհաւատացեալն, եւ ի քահանայապետաց ըմբռնեալն, առաջի Հերովդի յառաջ ածեալն եւ առաջի Պիղատոսի դատիցեալն.* ի մարմնի լուեալն եւ ի փայտի կախեցեալն, յերկիր թաղեցեալն եւ ի մեռելոց յարուցեալն, եւ առաքելոց երեւեալն, եւ յերկինս ընդունելեալն, յաջմէն Հօրն նստեալն եւ ի նմանէ փառաւորեալն. որպէս է յարութիւն թաղեցելոյն եւ փրկութիւն կորուսելոյն, լուսաւորն խաւարելոյն եւ փրկանակ բացածելոյն, հովիւ ապրեցելոյն եւ փեսայ եկեղեցւոյ, երանեալ** ընտրելեացն եւ զարմանալի հրեշտակաց՝ Աստուած յԱստուծոյ, Որդի ի Հաւրէ, Քրիստոս արքայ յաւիտեանս. ամէն:

Նոքին իբրեւ:

Սուրբ զրութիւնք զիտեն զքրիստոս որպէս մարդ զոլով, այսպէս եւ ոչ զոլով մարդ, եւ որպէս մարմին, այսպէս եւ հոգի եւ Բան Աստուծոյ եւ Աստուած. եւ որպէս ի Մարիամայ ի վերջինս առնառակ ծանուցեալ, այսպէս եւ նախածին առնական արարածոց, արտաքս եկեալ յԱստուծոյ. եւ որպէս քաղցընլով, այսպէս եւ յագեցուցանելով. եւ որպէս եւ ծարաւեալ, այսպէս եւ արբուցանել, եւ վաղ հրից յորժամ էր վէմ Քրիստոս, եւ այժմ հաւատացելոց Քրիստոս տայ հոգեկան ըմպել Ջուր, վիճակաւորեալ ի կենդանութիւն յաւիտենական. եւ որպէս վաստակեալ, այսպէս եւ զվաստակելոյն եւ զբնակարարելոյն հանգուցանել. եւ որպէս Որդի Դաւթի, այսպէս եւ Տէր Դաւթի, եւ որպէս յԱբրահամէ, այսպէս եւ նախ Աբրահամու, եւ որպէս ծառայ Աստուծոյ, այսպէս եւ Որդի Աստուծոյ եւ Տէր ամենեցունն. եւ որպէս թուքընկալ առ նախաստանս, այսպէս եւ փչող հոգւոյ իւրոյ աշակերտացն, եւ որպէս տրտմեալ, այսպէս եւ ուրախութեան տուաւղ իւրում՝ ժողովրդեանն. եւ որպէս ըմբռնելի եւ շօշափելի, այսպէս անդա դարձեալ ընդ մէջ հարսնիսացն եկեալ եւ ոչ զրաւեալ, եւ դրացն փակելոց ի ներքս գնացեալ եւ ոչ արգիլեալ. եւ որպէս քունելով, այնպէս եւ հրամայել ծովու եւ հողմոց եւ ոգւոց. եւ որպէս ախտակրեալ, այսպէս եւ կենդանի եւ ապրեցուցիչ եւ բժշկելով յամենայն հիւանդութենէ. եւ որպէս մեռանելով, այսպէս եւ յարութիւն մեռելոց գոլով. յերկրի անապատիս, եւ յերկ[ի]նս ամենայնի պատուոյ եւ փառաց մեծագոյն. խաչեցեալ անդա ի սկզբնութենէ, իսկ կեցեալ ի կարութենէ աստուածայնոյ. վայր անցեալ ի ստորագոյնս երկրի, եւ վեր անցեալ զեր ի վերոյ երկնից. ընտանեանացեալն ի մարդ եւ լցեալ զամենայն. երեղեալն մեռեալ, եւ կենդանացեալ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նոքին իբրեւ:

Սուրբ եկեղեցի, եւ թէպէտ քան զոլոր է աշխարհ է* մինչ յերկրիս սերմնացեալ՝ յառաքելոցն եւ ի նոցանն աշակերտացն ընկալաւ զմին Աստուած Հայր Ամենակալ, զարարողն զերկինն եւ զերկիրս, զծով եւ զամենայն զի նոտայսն հաւատս. եւ ի մի Տէր Քրիստոս Որդին Աստուծոյ, զմարմնացեալն վասն մերոյ փրկութեան. եւ ի Հոգին Սուրբ, զի ձեռն մարգարէից քարոզիչն զտնաւրէնութիւնս Աստուծոյ. եւ զզաւրսն, եւ զի Կուսէն ծնելութիւն, եւ զախտակրութիւնն, եւ զյարութիւն ի մեռելոց, եւ զմարմնաւոր յերկինս հանդիպածումն սիրելոյն Որդւոյ Քրիստոսի Քրիստոսի Տեառն մերոյ. եւ զյերկինից փառաւք Հաւր գալուստ նորա, առ ի վերագլխել զամենայնան եւ յարուցանել զամենայն մարմին ամենայնի մարդկութեան. զի Քրիստոսի Քրիստոսի Տեառն մերում՝ եւ Աստուծոյ, եւ Փրկչի եւ Թագա-

* դատապարտեալն.

** կատարեալ.

* եւ ?

*տալի, ըստ հաձելութեան Հաւր աներեւութի, «ամեն ծունր կորացի երկնայնոց եւ երկ- «րայնոց եւ սանդարամետականաց, եւ ամեն «լեզու արտաքս խոստովանեսցէ Տեմն, եւ դատաստան արդարութեան յամենեսեան ա- րասցէ զ'ի զհոգեկանս չարութեան, եւ զնր- ընշտակս զանցառս եւ ի բացկացութեան եղեալս, եւ զամպարիշտս եւ զանիրաւս, եւ անաւրէնս, եւ զհայհոյիչս մարդկան՝ ի յաւի- տենականն հուր առաքեսցէ. իսկ արդոց եւ արդարոց եւ զպատուիրանս Տոքա պահողաց եւ ի սէր Տոքա մնացելոց, ոմանց ի սկզբան- նէ, իսկ ոմանց յապաշխարութենէ՝ կենդա- նութիւն շնորհեալ, անապականութիւն եւ փա- ռոքս պատրաստեսցէ։ Զայս քարոզութիւն պարտեալ եւ զայս հաւատս, որպէս նա- խասացաք, եկեղեցի, եւ թեպէտ յամենայն աշխարհի սերմնացեալ՝ խնամածութեամբ պահէ, իբր զմի տուն ընակեալ, եւ նմանապէս հաւատացեալոց իբր զմի սիրտ եւ զմոյն ունելով միտս, եւ քաղաձայնաբար զայսոսիկ քարոզէ եւ աւանդէ, իբր մի բերան ստացեալ. հա- ւատս առաքելական ձայնակից եղով նշանաւո- րութեան** ի Տիկնոջ Ժողովոյն։*

Ձեռ. ֆ. 1946.

Երանոսի Հետևողի առաքելոյն.

Որ հերձուած եւ պատառեալ զիրեն, զորոմարու պա- տառեալ բնկալցին, բանիզի բնդունայն եւ սնոտիք են, որ երկու բնութիւնս առեալ բաժանեալ եւ ուրանալ զաստու- ծոյ փրկութիւն, զոր ի դիւանալի իւրում շնորհեաց մեզ։

Նորին յետ սակաւուց.

Որ ակն եւ մի բնութիւն Աստուծոյ եւ մարդոյն գոր- ծեաց, մեր ոչ կարացեալ կցորդ լինել անապականութեան. որ անհերեւոյթն է ի տեսիչ եղեւ տեսանելի, զի բոլ ամենայն մասին կցորդութեան արկցուք զանապականութիւն։

Ի հաւատոյ բանէն Երանոսի Լոգդանայ եպիս- կոպոսի.

Անչափելի են բարք նոցա Աստուծոյ եւ ոչ գիտելով զի արժ սուրբ(?) Բանին Միածինին, որ միշտ ընդ մարդկու- թիւնս միաւորեալ եւ ընդ անոյ զանինալ ընդ իւրում աստի- ծուածիս»։

Նորին.

Ջհերձուածս գործեն—զանձափառաւորեալ մարմինն Քրիստոսի բաժանեն եւ հաւասկոտորեն։

Նորին.

Եւայի ասէ. Մերձեցայ սո կին իմ մարգարէ եւ ծնաւ որդի, սմանչելի խորհրդակից, Աստուած, հզոր իշխան խարոգելով, զմի բնութիւն Բանին սո ի աստիճանած իւր յայտնիին. բանիզի Բանին մարմին եղեւ եւ Որդի Աստուծոյ որդի մարդոյ։

---

* *Տմայութեանն.*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

—

— Ապրիլի 19-ին պապը երեք ժողով (կոն- սիստորիում) ունեցաւ. առաջին գաղտնի ժողովում պապը մի ճառ խօսեց, որի մէջ յայտնեց, թէ մտա- դիր է ծիրանաւորութեան աստիճան տալ մի քանի եպիսկոպոսների։ Այնուհետև յայտարարուեցան եպիսկոպոսական աթոռների համար նշանակուած անձանց անունները։ Անմիջապէս սրանից յետոյ տեղի ունեցաւ երկրորդ գաղտնի ժողովը, ուր պա- պը յայտնեց, որ ցանկութիւն ունի երջանկայիշա- տակ Անտուան Մարի Զաքարիայի և Պիեր Փու- րիէի սրբացումը հանդիսապէս կատարելու։ Ծիսա- կատարութեան միաբանութեան արթա Ալուաղ Մա- զելա կարդինալը մի ճառ խօսեց ապա, որի մէջ առաջ բերաւ յիշեալ սուրբ հայրերի կեանքն ու հրաշքները։ Պապը դառնալով ծիրանաւորների ժո- ղովին՝ հարցրեց, թէ կարելի՞ են համարում այս սրբացումը, նրանք պատասխանեցին դրական կար- պով (placet)։

Սրանից յետոյ պապը բաց արաւ երրորդ հա- րապարակական ժողովը, ուր բացի եկեղեցականնե- րից կային մի քանի արտօնեալ անձինք միայն։ Ծի- րանաւորների հպատակութեան արտայայտութիւնից յետոյ, կոնսիստորիումի փաստաբանն սկսաւ պա- պի աթոռի առաջ ճառել ի պաշտպանութիւն սրբաց- ման երջանկայիշատակ Զաքարիայի։ Մի այլ փաս- տաբան նոյնն արաւ երջանկայիշատակ Պիեր Փու- րնիէի համար։ Հայոց պետական չորս նշանաւոր արձանագրութիւն էին կազմում։ Մինչ փաստաբան- ները ծնկաչոք սպասում էին գահի աստիճանների վրայ, պապը Վոլպինի ծիրանաւորի բերանով պա- տասխանեց, որ սրբացումն հրատարակելը մի շատ ծանրակշիռ գործ է, ուստի յորդորում է հա- ւատացեալներին, որ աղաչեն Աստուծուն, իրենց լոյս տայ, որ չսխալուին։ Վերջնական վճիռը յե- տաձգուեց մինչև մայիսի 15։ Այս պատասխանից յետոյ փաստաբանները յետ քաշուեցան և պապը հանդիսաւոր օրհնութիւն տուաւ ամենքին։

— Լևոն ՓԳ. Սպանիոյ թագուհի խնամակա- լին նուիրել է մի գեղեցիկ ոսկէ պսակ, որ ընդե- լուզուած է թանկագին քարերով։

—Դիանա Վոդհանի փախմանը։—Դժուար թէ երբ և իցէ մի այնպիսի համաշխարհային խաբեբայու- թիւն տեղի ունեցած լինի, ինչպիսին տեղի ունե- ցաւ միսս Դիանա Վոդհանի վերաբերութեամբ։ «Արարատի» ընթերցողները ծանօթ են արդէն այն հրատարակութիւնների հետ, որ վերաբերում են այդ օրիորդին և նրա սատանայի պաշտօնին վերա- բերեալ հրատարակութիւններին։ Պէտք է նկա-

տնեք, որ հէնց սկզբից շատերն եղան, որ կասկած յայտնեցին այդ օրիորդի գոյութեան մասին և մասնականների դէմ նրա գրածների վերաբերութեամբ, բայց կաթոլիկ եկեղեցին պաշտպանեց նրան և կամեցաւ դրանով հարուածել մասոններին: Ահա թէ ի՞նչպիսի խայտառակութեամբ վերջացաւ այդ մասնական արշաւանքը: «Աննալ կաթոլիկ»-ը իւր ապրիլի 24-ի համարում զարմանալի պաղարիւն կերպով պատմում է այդ խաբեբայութեան վախճանը: Ապրիլի 20-ին մի ժողով հրաւիրուեցաւ Փարիզում, Դիանա Վոգհանի, Ամոդէ դևի հարսնացուի և ապա կաթոլիկ դարձած մասնականի իրական գոյութիւնը հաստատելու համար: Այդ ժողովին հրաւիրուած էին յատկապէս մամուլի ներկայացուցիչները բացի սրանցից ներկայ էին և շատ կղերականներ ու հաւատացեալ կաթոլիկներ:

Պ. Լիոն Տաքսէօլը, այս խաբէութեան հեղինակը, կարդաց մի բանախօսութիւն «տասն և երկու տարի եկեղեցու դրօշի տակ»: Նա յայտնեց, որ իւր անունն է Գաբրիէլ Ծոգանդ, ինքն է այն անձը, որ բազմաթիւ հակակղերական հրատարակութիւններ է արել, որոնց մէջ յարձակուել է կաթոլիկ եկեղեցու, նրա վարդապետութեան և քահանաների դէմ, գրել է մի քանի անկրօն վէպեր: Յանկարծ մի օր յայտնել է աշխարհին, որ ինքը դառնում է իւր մոլորութիւնից, նրա այս դարձը ժամանակին մեծ աղմուկ է հանել, մանաւանդ այն պատճառով՝ որ նա յայտարարել է՝ թէ այսուհետև պիտի իւր անձը նուիրէ եկեղեցու պաշտպանութեան:

Իբրև թէ իւր անցեալ յանցանքը քաւելու համար նա սկսել է հրատարակել բազմաթիւ երկեր մասոնների դէմ, բաց է արել նրանց գաղտնիքները: Այս հրատարակութիւնները մեծ յաջողութիւն են գտել, նա ձեռք է բերել բազմաթիւ բարեկամներ, ընթերցողներ և պաշտպաններ: Նրա հրատարակած հանդէսը «Սատանան XIX. դարում» յաջողութեամբ տնօրինում էր շնորհիւ օրիորդ Դիանա Վոգհանի և Սոֆի Վալտերի կեղծիքների: Ահա հանդէս եկաւ օր. Դիանայի պատմութիւնը, նա՝ մասոնների ընտրեալը, Ամոդէ դևի հարսնացուն Թողից մասոնականութիւնը և կաթոլիկ դարձաւ: Նորադարձ մասոնուհու անունով սկսան հրատարակուիլ հետզհետէ ամէն տեսակ անճոռնի զրպարտութիւններ մասոնների դէմ: Կաթոլիկ քահանաները սիրով գնում էին այդ հրատարակութիւնները և հարստացնում Լէօ Տաքսիլի գրպանը: Սկսան կասկածներ յուսուել, շատերը չէին հաւատում օր. Դիանայի գոյութեան, Տրէնտի ժողովում 1896 թ. սեպտ. Կէօլնի եպիսկոպոսը յարձակուեց այդ խաբէութեան հաւատացողների դէմ, սակայն Փարիզի քահանաներից մինը հաստատեց նրա գոյութիւնը և կաթոլիկ դառնալը, սակայն դրան վերաբերեալ պաշտօնական թղթերը չը հրատարակուեցան, ինքը Լէօ Տաքսիլը, որ մասնակցում էր Տրէնտի ժողովին, երդմամբ հաստատեց Դիանայի գոյութիւնը, Խնդիրը փակուեցաւ. չը նայելով դրան գերմանացի կաթոլիկները դարձալ չէին հաւատում օր. Դիանայի գոյութեանը, Այս կասկածների առաջն առնելու համար Լ. Տաքսիլը հրատարակեց Վատիկանից օր. Դիանային գրուած նամակը, ինչպէս և Գրընօբլի եպիսկոպոսի նամակը, որ հաստատում էր օր. Դիանայի գոյութիւնը:

Արդ խնդիրն այս վիճակի մէջ էր, որ ապրիլի 20-ին, Լ. Տաքսիլը յայտնեց իւր հնարած կեղծիքի բոլոր գաղտնիքը 300 ժողովականների առաջ, Այդ պարոնը յայտնեց, որ ինքը բնիկ Մարսիլիացի է և սիրում է խորհրդաւոր կատակներ անել. Միանգամ արդէն խաբել է Վիլլարուայնէ գօրավարին. երկրորդ անգամ մոլորեցրել է հնագէտներին՝ գրելով թէ ինքը մի քաղաք է գտել լճի տակ. այս խաբէութեան հաւատացել են շատերը և մի լեհացի հնագէտ մի ամբողջ գիրք է գրել այդ քաղաքի մասին, որի հրապարակը գտել է, ուր նորան երևացել է նոյն իսկ «Հեծեալի արձանի նման մի բան»: Իւր այս խաբէութեանց մէջ Լ. Տաքսիլին օգնել է իւր հայրենակից յայտնի բժիշկ Բատայլը, Այս յառաջաբանից յետոյ բանախօսը գարձել է ժողովին ներկայ կրօնաւորներին և ասել. «Վերապատուելի հարք, անկեղծօրեն շնորհակալ եմ մամուլի իմ կարողիկ վիճակիցներից եւ մեր արքեպս. եպիսկոպոսներից, որոնք օգնել են ինձ գլուխ հանելու իմ ամենագեղեցիկ խաբէութիւնս, այն որ կը պահի իմ գործունէութիւնս»:

Այս խօսքերից յետոյ նա պատմել է՝ թէ ինչպէս ինքը 1885 թուին կաթոլիկութիւն է ընդունել, մտել է Յիսուսեանների մէջ, ապա ընդունելութիւն է գտել Լևոն ԺԳ. պապի մօտ, որի գրադարանում կան իմ բոլոր շարադրութիւններս ընդդէմ կղերականութեան, Բանախօսի այս յայտարարութիւնները ընդմիջուել են կաթոլիկների զայրոյթով, որոնք նրան «խաբեբայ, աւազակ» և էլն այսպիսի գեղեցիկ ածականներով զարդարել են:

Բանախօսը շարունակելով՝ յայտնել է, որ Զառլըստոնի եպիսկոպոսը Հռոմի գալով բաց է արել կեղծիքը, հերքել է օր. Դիանայի գոյութիւնը, սակայն Վատիկանում պատուիրել են նրան լռութիւն պահել և պապի կողմից օրհնութիւն է ուղարկուել օր. Դիանային, որի գոյութիւն չունենալը գիտէին Վատիկանում:

Մեծ աղմկով է վերջացել այս ժողովը և բանախօսին ոստիկանները հազիւ են կարողացել ազատել կատաղած կաթոլիկների ձեռքից, Այսպէս ահա վերջացաւ օր. Դիանայի խնդիրը ի մեծ խայտառակութիւն պապականութեան, որ միջոցների ընտրութիւն չէ անում երբ կամենում է կռուել մեկի դէմ, Այս անգամ ընտրուած անարգ միջոցին ինքը զոհուեցաւ, սակայն այդ խրատ կը լինի՞ ապագայի համար, կասկածելի է:

— Ապրիլի 11-ին պապն ընդունել է պարսից շահի դեսպանութիւնը, որ եկել էր յայտնելու նոր շահի գահակալութեան մասին։ Պապը շահի համար պարգև է ուղարկել մի մոզաիկ պատկեր, իսկ դեսպանին շնորհել է Պիոս Թ.-ի շքանշանը։

— Ջատկից յետոյ հասարակութեան թոյլ է տուած այցելելու Վատիկանի Բորջիայի ապարանքը, որ 400 տարի է փակ էր։ Այդ ապարանքի նորոգութիւնը Լևոն ԺԳ. պապն արել է իւր սեփական գանձարանի հաշուով. ինչպես լրագիրները հաղորդում են, նորոգութեան ծախքը մի միլիոն ֆրանկ է եղել։

— Ցայտնի Հ. Շարմետանի հրատարակութեամբ լոյս է տեսել մի նոր շարադրութիւն հայոց մասին, որի վերնագիրն է. «Հոգեվարք Հայաստանը և քրիստոնեայ Եւրոպան. կոչումն տէրութեանց գլխապետներին» (L'Arménie agonisante et l'Europe chrétienne. — Appel aux chefs d'Etats.)։ Ցառաջաբանն ուղղուած է տէրութեանց գլխապետներին, դեսպաններին և վեց պետութեանց նախարարութիւններին։ Հայր Շարմետան այս նախաբանի մէջ հետեւեալն է ասում մերձաւորապէս. Մի ամբողջ ազգ անիրաւ կերպով դատապարտուած է կորստեան և մատնուած մի մահմետական իշխանի անագորոյնութեան։ Այս լքուած ազգը ներկայումս ոչ միայն ղոհուում է, այլ և սարսափելի կերպով տանջուում։ Դո՞ւք պիտի ազատէք նրան։ Մինչ դուք խորհրդածում էք, թուրքն աշխատում է իւր սպանութեան գործն աւարտել և Հայաստանում արիւնալի թատերախաղը օրէցօր սոսկալի է դառնում։ Ձեր ժողովրդները վրդովուում են, նրանց քրիստոնեայ խղճմտանքը չէ ըմբռնում այդ մահմետականութիւնը պաշտպանող քաղաքականութիւնը։

Կարդացէք այս կոչումն, որ անում է ձեզ հոգեվարք Հայաստանը։ Կարդացէք այս արիւնով և արտասուքով գրուած հրիսները, որ իմ ձեռքս են հասցրել այդ թշուառ ազգի կրօնապետները, այն ազգի, որի հաւաքական պաշտպանութիւնը հանգիսաւոր կերպիւ ստանձնել էք Բեռլինի Վեհաժողովում, որին թոյլ էք տալիս այժմ ջնջուել ձեր աչքի առաջ, իրենց վայրենի նեղիչների ձեռքով։

Այն նուաստ քահանան, որին նրանք ընտրել են միջնորդ երկրիս մեծամեծների առաջ, ձեզ է դիմում ի սէր Քրիստոսի, ձեր Տիրոջ և Դատաւորի. . . .

Երկիւղ ունեցէք պատմութեան դատաստանից։ Առաւել ևս թող երկիւղ ազդէ ձեզ Աստուծոյ դատաստանը։ Արդարութիւնը յաւիտենական է։ Այս հոգեվարք ազգը, որ քաղաքակիրթ ազգերի աւազն է, իրաւունք ունի ապրելու։ Արդարութիւնը հրամայում է ձեզ փրկել նորան մօտալուտ կորստից։ Ձեր իսկ շահը վերջապէս հարկ է դնում ձեր վրայ գործակից չը դառնալու իսլամին այս ոճրագործ ջնջման։ Թողնելով որ այդ կատարուի, դուք կը մեղանչէք ձեր եղբայրների և Աստուծոյ առաջ։. . .

Բուն թուղթը գրուած է 1896 թ. դեկտ. 15-ին և մի ներածութիւնից զատ ունի առանձին առանձին գլուխներ, նուիրուած հալածանքի տեսակներին։ Ահա այդ գլուխների վերնագիրները. 1. Դատավարութիւն. 2. Ջնջումն ժողովրդի գըլխաւորների. 3. Ապստամբութեան ոճիրը. 4. Օրինական պաշտպանութեան դէպքեր. 5. Ջէնքի արգելումն. 6. Բռնի հաւատուրացութիւն. 7. Հայ պաշտօնեայք. 8. Հարկեր. 9. Երկրագործական դրամատներ. 10. Մահմետական վաշխառութիւն. 11. Հարկապահանջներ. 12. Անգործութիւն հարկահանութեան. 13. Տասանորդի վճարումն. 14. Քրդերին տուած հարկը. 15. Գաղթականութիւն. 16. Բռգեառ. 17. Վերանորոգումն. 18. Անտանելի վիճակ. 19. Ցուսահատութիւն. 20. Ի՞նչ անենք, ի՞նչ պիտի լինի մեր վերջը։

Այն վիճակը, որ նկարագրուած է այս թղթի մէջ կատարեալ պէս համապատասխանում է իրականութեան, այդ գիտենք մենք թէ գաղթականների պատմածներից և թէ եկեղեցականների տեղեկագրերից։ Այս թշուառութեան մէջ միակ մխիթարութիւնն է եւրոպական քրիստոնեայ ազգերից ուղարկուած նպաստը, որ մի կաթիլ ջուր է համաճարակ հրդեհի մէջ այրուողների համար, դժբախտաբար այդ ջուրն ևս դառն ու լեղի է երբեմն, որովհետև դրա գինը հաւատափոխութիւն է։ Ը գիտենք զարմանանք թէ ցաւենք այն դատարկագլուխ մրոտողների վրայ, որոնք յանդգնութիւն ունին մեզ վրայ լուտանքներ թափելու, երբ ցաւ ենք յայտնում և ըղդրգում միսիոնարների հաւատ դնելու դէմ։ Հայ եկեղեցականութեան վրայ քարեր են ձգում, որ նա ինքը չէ օգնում ժողովրդին, կոյրերին աչք տալ չենք կարող մենք, բայց ով աչք ունի՝ տեսել է և տեսնում է Հայոց Հայրապետին, սրբազան Պատրիարքների և իրենց կեանքը ժողովրդի վրայ դնող հովիւների անքուն աշխատանքը թշուառներին խնամելու գործում։

— Դրաքննութեան մասին Լևոն ԺԳ. պապի վերջին կոնդակի զօրութեամբ կաթոլիկ եկեղեցականութեան մէջ կարգապահութիւնն աւելի ևս խստացրած է։ Այդ կոնդակի զօրութեամբ այսուհետև ամեն մի կաթոլիկ եկեղեցական, մանաւանդ ստորին կարգի եկեղեցականների, շարագրութիւնները հսկողութեան պիտի ենթարկուին։ Լևոն ԺԳ. պատուիրում է քահանաներին *ամեն տեսակ գրուածներ* (գեղարուեստի, պատմութեան, բնական գիտութիւն և այլն. վերաբերեալ) հրատարակել միայն իրենց եպիսկոպոսների թոյլտուութեամբ։ Ոչ մի քահանայ իրաւունք չի պիտի ունենայ այսուհետև իմարդիր գառնալու որևէ օրաթերթի կամ հանդիսի առանց իւր առաջնորդի թոյլտուութեան։ Այս

կարգադրութեան մեծ նշանակութիւնն ապագայի համար ամենքին հասկանալի է, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք, որ մի քանի կաթոլիկ երկրներում քահանայական դասը հակառակ ընթացք է բռնել կուսակրօն և վարչական մեծ պաշտօններ վարող եկեղեցականների դէմ։

— Վերջին ժամանակներս ռուսաց մամուլը խնդիր է հանել արևմտեան նահանգներում կաթոլիկ եկեղեցիների մէջ փոխանակ լեհերէնի ռուսերէն ժամասացութիւն հաստատելու մասին։ Երկրին և տեղական հանգամանքներին ծանօթ անձինք նշանակութիւն չեն տալիս այդպիսի փոփոխութեան, նրանք պնդում են, որ լեզուն նշանակութիւն չունի կաթոլիկութեան համար, ուստի կառավարութիւնը ոչինչ չի շահուիլ ռուսերէն ժամասացութիւն մտցնելով։ Հակառակ կուսակցութիւնը, գլխաւորապես եկեղեցական թերթերը, այդ կարծիքի չեն. նրանք աւելի ևս հետու են գնում, պահանջելով՝ որ կաթոլիկ քահանայից կրթութիւնը պիտի կառավարութեան ձեռքը լինի և փոխանակ լատիներէնի պիտի դաստատութիւնը ռուսերէն լեզուով տեղի ունենայ, որպէս զի կաթոլիկ քահանաները հաւատարիմ հպատակներ մնան։

— Փարիզում մի սոսկալի հրդեհի զոհ գնացին մերձաւորապէս 150 անձինք, ըստ մեծի մասին աղնուական և հարուստ դասի կանայք, որոնք մի բարեգործական վաճառանոց (բազար) էին կառուցել Ֆան-Գուժոն փողոցի վրայ։ Այդ փայտակերտ շէնքը անզգուշութեան շնորհիւ բռնկեց և գրեթէ քառորդ ժամում մոխիր դարձաւ։ Այրուածների մէջ շատերը պատկանում են եւրոպական իշխանական ցեղերի ազգականներին։ Այս դժբախտ պատահարի առթիւ ֆրանսիական կառավարութիւնը ցաւակցութիւններ ստացաւ եւրոպական բոլոր երկրներից։ Դժբախտ զոհերի թաղման հանդէսը կատարուեց Փարիզի Նոտր-Դամ եկեղեցում ուր ներկայ էին նախագահը, կառավարութեան բոլոր պաշտօնեաները, օտար տէրութեանց դեսպաններն ու արտակարգ լիազօրները։ Այս տխուր հանգիսից օգուտ քաղեց յայտնի քարոզիչ Օլիվիէն և հարուածեց հասարակապետական ֆրանսիայի հակակրօնական ընթացքը։ Ուսնկդիրները դժգոհ մնացին քարոզչից, ուստի և ֆրանսիական պառլամէնտի բացման ժամանակ նախագահ Բրիսոնը մի ճառով քննադատեց այդ քարոզն, արտայայտելով՝ որ Աստուծու վեհ գաղափարն սիրալ են ըմբռնում նրանք, որոնք կարծում են՝ թէ երկրի մեղքերը պատժելու համար կարող է Աստուած 150 անմեղ և բարեգործ կանանց կեանքը խլել։ Պառլամէնտը որոշեց այս ճառը տպագրել և հրատարակել ամենուրեք։ Քաղաքակիրթ Ֆրանսիայի ներքին թերութիւններից մէկն էլ երևան եկաւ այս առթիւ։ Հրդեհից ազատուած կանայք սարսափելի գոյներով են նկարագրում այն աղնուական պարոնների ընթացքը, որոնք հրդեհի ժամանակ շէնքի ներսն են եղել։ Այդ պարոնները բռունցքներով, գաւազանի հարուածներով և աքացիով ճանապարհ են բացել սարսափահար կանանց միջով։ Ճատ կանայք դեռ ևս կրում են այդ բարբարոսների հարուածների հետքերը։ Սարսափի ժամանակ ազգականները թողել են իրենց մերձաւորներին, նշանածներն իրենց հօսեցեալներին և փախել։ Մինչդեռ վարձական ծառաներն և հասարակ բանուորները կեանքի վտանգով շատերին են ազատել։ Կատարութիւներ չքանչանով վարձատրել է այս հերոսներին։ Հասարակութիւնը մեծաքանակ գումար է ժողովել աղքատ դասակարգի համար, իսկ ազատած տիկնանցից շատերը մեծաքանակ պարգևներ են տուել իրենց ազատարարներին։ Փարիզում այժմ միայն սկսել են ուշադրութիւն դարձնել այն շէնքերի, ապահովութեան վրայ, ուր բազմութիւն է ժողովուում։ Ֆրանսիական մամուլը պահանջում է գտած մտնել այն աղնուական պարոններին, որոնք հրդեհի ժամանակ իրենց անվայել են պահել։

ՀԻՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ։

— Այս տարի սեպտեմբերին (Ն.տ.) Վիէննայում տեղի պիտի ունենայ հին կաթոլիկների չորրորդ միջազգային ժողովը։ Արդէն հրաւէրներ են ուղարկուած շատ եկեղեցիների և ընդունելութեան մեծ պատրաստութիւններ են տեսնուում, որովհետև մասնակցողների թիւը բաւական մեծ պիտի լինի։ Այդ ժողովին մասնակցելու հրաւէր է ստացել և մեր եկեղեցին, որ նախընթաց բոլոր ժողովներին ևս հրաւիրուած է եղել, բայց դեռ ոչ մի անգամ չէ մասնակցել։ Ահա չորրորդ ժողովի ծրագիրը. Օգոստոսի 31-ին (Ն.տ.) ընդունելութիւն հրաւիրեալների, Սեպտ. 1-ին. ա) հանդիսաւոր ժամերգութիւն աւետարանական եկեղեցում. բ) առաջին գումարում նուիրակների. գ) առաջին հրապարակական ժողով. դ) առաջին հասարակական ժողով։

Սեպտ. 2-ին. ա) Հանգստեան պաշտօն հին կաթոլ. եկեղեցում։

բ) Պատուիրակների երկրորդ գումարում։

գ) Հանդիսաւոր ճաշկերոյթ։

դ) Երկրորդ հրապարակական ժողով։

ե) Կամաւոր գումարում։

Սեպտ. 3-ին. ա) Հանդիսաւոր ժամերգութիւն հին կաթոլ. եկեղեցում։

բ) Պատուիրակների երրորդ ժողով։

գ) Գումարում հին կաթոլիկների դաշնակցութեան, մամուլի ներկայացուցիչների և հրատարակիչների։

դ) Մեծ համերգ։

Սեպտ. 4-ին.—Ուղևորութիւն դէպի Կալեմբերգ։

Ցանձնախումբի որոշած բոլոր հանդեսների համար տոմսակն արժէ 14 ֆլորին կամ 8 ռուբլի։ Այս ժողովին պիտի մասնակցեն պատուիրակներ Ռումինիայից, Բոլղարիայից, Սերբիայից և այլ տեղեներ եկեղեցիներից։ Այս համաժողովն առանձնապէս հետաքրքրական է այնու, որ այդ տեղ պիտի քննուին մի քանի նշանաւոր վաւերաթղթեր, ինչպէս օրինակ՝ Պետերբուրգի այն յանձնախումբի թուղթը, որ կազմուած է հին կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցու միութեան առթիւ, ինչպէս և անգլիական եպիսկոպոսների պապին ուղղած պատասխանը։

— Հին կաթոլիկների եկեղեցական թերթը «Վերմ. Մերկուրը» գովասանքով է խօսում Պորեդոնոցովի «Մոսկովսկի Սբորնիկի» մասին, ուր կրօնական խնդիրների մասին է խօսքը։ Բողոքական թերթերն ընդհակառակն պարսաւով են վերաբերում այդ հրատարակութեան, որի գերմաներէն թարգմանութիւնն արդէն երրորդ հրատարակութեամբ է լոյս տեսել։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

— *Հոլանդական Նիդերլանդ* պատերազմի արհաւիրքներին մասնակից եղաւ. ինչպէս լրագիրները հաղորդում են՝ յոյն—տաճկական պատերազմի ընթացքում տաճիկներից գրաւուած գիւղերի և քաղաքների բոլոր եկեղեցիք կողոպտուած և սրբապղծուած են։ Թեսալիոյ յոյն ժողովուրդը մեծ մասամբ փախուստ է տուել դէպի Լամիա և Ատիկէ, իսկ թափուր մնացած գիւղերը կրակի են մատնուել տաճիկների ձեռքով։ Ահագին բազմութեամբ փախստականներ կան այժմ Լամիաում և նոյն իսկ Աթէնքում, որոնց վիճակը շատ դառն է։ Ընորհիւ Ռուսաց կայսեր վեհանձն միջամտութեան, մայիսի 15-ից արդէն դադարել է արիւհեղութիւնը և յոյս կայ որ շուտով խաղաղութիւն ևս հաստատուի՝ չը նայելով տաճիկների մեծամեծ պահանջներին։ Եւրոպական ամբողջ մամուլը բողոքում է այդ պահանջի դէմ և պնդում է, որ Ցունաստանից մի գիւղ անգամ չի կարելի յանձնել տաճկին, որովհետև Ցունաստանը տաճկի բարբարոս լծից ազատող Եւրոպան թոյլ տալ չէ կարող, որ քրիստոնեայ Ցունաստանից հող առնուի և տաճկին յանձնուի։

— Պատութիւնը սթափուում է յառաջ բերել Ցունաստանում և այժմ քննագատութիւններ են լսուում հելլենական տէրութեան բոլոր վիճակի վերաբերութեամբ։ Աթէնքի համալսարանի աստուածաբանութեան յայտնի ուսուչապետ Դիոմիտ—Կիրիակը մի խիստ քննագատութիւն է հրատարակել հելլենական եկեղեցու մասին։ Մինչդեռ ազատ Ցունաստանում բարեկարգ վիճակ է ստեղծուած քաղաքական հաստատութիւնների մէջ, եկեղեցական դրութիւնը մնացել է անփոփոխ։ Եկեղեցականների մեծ մասը տգէտ է ինչպէս առաջ, ի բաց առեալ մի քանի եպիսկոպոսներից մնացեալ հոգևորականներից 90 տոկոսը մինչև իսկ ժողովրդական դպրոցի կրթութիւն չունի։ Նիւթական վիճակն այնքան աղքատ է, որ շատ հոգևորականներ գրեթէ ողորմութիւնով են ապրում։ Հոգևորականութիւնն իւր աղքատութեան և տգիտութեան պատճառով ոչ մի ազդեցութիւն չունի։ Քարոզից զուրկ է ժողովուրդը։ կան ծխեր, ուր 2—3 տարին հազիւ մի անգամ քարոզ են լսում։ Համայնքները զուրկ հոգևոր կրթութիւնից և հմուտ առաջնորդներից՝ թալուած են կրօնական տգիտութեան մէջ։ Եկեղեցական ճարտարապետութիւնը և պատկերագրութիւնն ևս ընկած է։ Այս բոլոր պատճառներով եկեղեցին ազդեցութիւն չունի ժողովրդի վրայ։ Պ. Դիոմիտ—Կիրիակը մի քանի միջոցներ է առաջարկում այս թերութիւնները վերացնելու համար։ Նախ կարևոր է համարում նուազեցնել եկեղեցականների թիւը, որ այժմ հասնում է 7։000 հոգու. նա կարծում է որ 2000 հոգի բաւական կը լինին ամբողջ հելլէն եկեղեցուն։ Եկեղեցականների թիւը պակսելով՝ կը լաւանայ նրանց նիւթական վիճակը. այն քահանան, որ այժմ հազիւ 30—50 ծուխ ունի, կունենայ 200—300 և փոխանակ ամիսը 12—20 ֆրանկ արդիւնքի կունենայ 100—150 ֆրանկ արդիւնք։ Բացի սրանից պէտք է պահանջել որոշակ ուսման վկայագիր ամէն մի քահանայացուից։ Աթէնքի եկեղեցիների քահանաներից և եպիսկոպոսացուներից կարելի է պահանջել համալսարանի վկայական, իսկ գիւղական քահանաների համար պարտադիր կարող է լինել դպրոցական (սեմինարական) վկայագիրը։ Հելլէն եկեղեցին դեռ ևս երկար ժամանակ պիտի տառապի այդ խեղճ վիճակի մէջ, որովհետև պարտուած և ազգաթացած Ցունաստանը հազիւ միջոցներ գտնի իւր այդ ցաւերը դարմանելու։

— *Տիեզերական Պատրիարքութիւն*.—Կ. Պոլսի այժմեան պատրիարքի մասին հետևեալ կենսագրական տեղեկութիւններն ենք գտնում եկեղեցական թերթերում։ Նոր պատրիարք Կոնստանդինը ծնուել է 1833 թուին Փիլոս կղզում, նրա հայրը քահանայ էր, ուստի հէնց մանուկ հասակում առիթ ունեցաւ իւր աչքի ընկնող ընդունակութիւնը ցոյց տալու Փիլոսի մետրոպոլիտ Սոփրոնիոսին (որ այժմ Աղէքսանդրիոյ պատրիարքն է)։ Սոփրոնիոսի պաշտպանութեան շնորհիւ նա միջին կրթութիւն ստանալուց յետոյ մտաւ Խալկիի աստուածաբանական դպրոցը, որտեղից աւարտեց 1857 թուին և սկսաւ ուսուցչութիւն անել Սինոպում, բայց իւր թոյլ առողջութիւնը կաղդուրելու համար քիչ ժամանակ յետոյ գնաց Աթէնք, ուր մնաց մինչև 1862 թ. լսելով

աստուածաբանութեան դասեր համալսարանում։ 1864 թ. Սոփրոնիոսը իբրև Կ. Պոլսի պատրիարք, սարկաւագ ձեռնադրեց նրան և պահում էր իր մօտ իբրև քարտուղար։ Երիտասարդ սարկաւագը իր պաշտպանի շնորհիւ ուղարկուեցաւ Ստրասբուրգ և աշակերտեց այնտեղի նշանաւոր աստուածաբաններին, Ֆրանկ—Պրուսական պատերազմի ժամանակ նա անցաւ Զուիցերիա, այնտեղից էլ յետոյ Գերմանիա, ապա Փարիզ ու Լոնդոն, ամեն տեղ աստուածաբանութեամբ պարապելով։ 1872 թ. վերադարձաւ Կ. Պոլիս։ Բոլղարական եկեղեցու բաժանումը դատապարտող եկեղեցական ժողովին մասնակցելուց յետոյ գնաց Ալէքսանդրիա Սոփրոնիոս պատրիարքի մօտ, այնտեղից կրկին գարձաւ Կ. Պոլիս Անթիմոս Զ. պատրիարքի օրով։ 1874 թ. աբեղայ ձեռնադրուեցաւ, 1876 մետրոպոլիտ գարձաւ Մետիլինէի, ուր 18 տարի առաջնորդութիւն անելուց յետոյ 1893 ստացաւ Եփեսոսի մետրոպոլտութիւնը։ Այս տարի Զատկից առաջ ընտրուեցաւ Կ. Պոլսի պատրիարք և շուտով արժանացաւ սուլթանի շնորհներին։ Հընայելով յոյն-տաճկական պատերազմին նա պահպանեց իր դիրքը և հովուականներով հրաւիրեց տաճկին հպատակ յոյներին չապստամբել և հաւատարիմ մնալ սուլթանին։ Երբ տաճիկներն առաջարկեցին իրենց տարած յաղթութիւնների համար մաղթանքներ կատարել, պատրիարքը մերժեց այդ առաջարկը։

— Մակեդոնիայում տիրապետող ազգեցութիւն ունենալու ջանքը օրէցօր դրգռում է բալկանեան փոքրիկ տէրութիւններին։ Շնորհիւ վերջին պատերազմի բոլղարներն ու սերբերը մեծ արտօնութիւններ ստացան Բ. Դռնից և տիեզերական պատրիարքի թեմերը հետզհետէ անցնում են բոլղարներին, իսկ յոյն եկեղեցականների և դպրոցների փոխանակ մուտք են գործում սերբիականները։

Ռուսաց եկեղեցի։— Ռուսաց եկեղեցական մամուլը գանգատուում է, որ օրէնքը պաշտպանութիւն չէ ցոյց տալիս քահանայական դասին։ Քահանան էս, ինչպէս ամենայն սոսկական անձն, կարող է հրապարակական վիրաւորանքի համար դատարան դիմել և գոհացում ստանալ։ Այս հանգամանքից օգտուելով լեհերն ու հրէայք յաճախ վիրաւորում են ռուս քահանաներին, որոնց համար ամենայն անգամ դատարանին դիմելը յարմար չէ։ Մոդիլեւի նահանգում վերջերս մի դէպք առիթ է եղել այս խնդրի յարուցանելուն։ Գիրշի Պևզներ անունով մի հրէայ միտքը դնում է ամենայն անգամ անպատուել օրթոդոքս քահանային, երբ պատահի։ Տեղական ժողովուրդը գրգռուելով՝ քիչ է մնում որ յարձակումն գործէ հրէաների վրայ, նահանգապետը այս բանի առաջն առնելու համար հրամայում է ոստիկաններին բանտարկել Պևզներին և մարմնական պատիժ տալ։ Ոստիկանապետը այնքան ծեծում է հրէին, որ սա մի քանի ամիս հիւանդանում է։ ուստի դատի է մատնուում ոստիկանապետը և նահանգապետի վարմունքն ևս նկատողութեան է առնում։ Արդ եկեղ. մամուլը պահանջում է յատուկ օրէնքներով պաշտպանել քահանայից դասի պատիւը։

— Յունուարի 28-ին կատարուած համառուսական աշխարհագրի ժամանակ բազմաթիւ այնպիսի դէպքեր են տեղի ունեցել, որոնք որոշում են ժողովրդի ընդհանուր բնաւորութիւնն ու կրթութիւնը։ Հարաւային—Ռուսիայում օրինակ աղանդաւոր ռուսաց մէջ տարածուել է, որ աշխարհիս վախճանն հասել է, ուստի աղանդաւորներից մէկի ձեռքով շատերը կենդանւոյն թաղուել են։ Այժմ քընութիւն է սկսուած այդ գործի համար և խեղճ զոհերի նեխած մարմինները հանում են հետզհետէ իրենց գերեզմաններից։ Արեւմտեան նահանգներում Հռովմի հետ միացած ռուս կաթոլիկներին հաւատացրել են, որ Պետերբուրգի կառավարութիւնը մտադիր է վերականգնել Լիհաստանը և պաղեցնել ոչ կատարեալ կաթոլիկներին, այս պատճառով շատ ռոնիաներ (միաբանականներ) իրենց կաթոլիկ են արձանագրել տուել։

— Ռուսաց թեմական առաջնորդները կարևոր են համարել պատուիրել խստիւ, որ քահանայք կիւրակէ և տօն օրերին առաւօտեան ժամերգութիւնից չը զրկեն ժողովրդին։ Ինչպէս երևում է շատ եկեղեցիներում երիտասարդ քահանայք, բայց նոյն իսկ վանքերում վանականները, վերացրել են ինքնագլուխ կերպով առաւօտեան ժամերգութիւնը։

— Սամարայի թեմական կառավարութիւնը դիտելով՝ որ թեմի քահանայք զանցառութեան են տալիս Զ. ժողովի որոշման 86 կանոնը, որ արգելում է ամուսնանալ ողներին հաղորդել, խստիւ պատուիրել է այսուհետև ճշտութեամբ կատարել յիշեալ կանոնը։

— Պերմի թեմակալ առաջնորդը տեսնելով որ քահանայութեան համար դպրանոցներում պատրաստուածները հրաժարուում են ծխական եկեղեցիների քահանայութիւնից, որոշել է քահանայութեան աստիճան տալ և այնպիսի անձանց, որոնք դպրոցական կրթութիւն չեն ստացել կատարելապէս։ Ընծայացուների համար առանձին քննութեան կանոններ են սահմանուել։

— Զատկական օրերին տնօրհնէքի առթիւ տների ունեցած ատելութիւնների առաջն առնելու համար «Ցերկ. Վեստ.» առաջարկում է քահանաներին միայն այն անձանց տունը գնալ օրհնելու, որոնք վաղօրօք այդ մասին ցանկութիւն կը յայտնեն։

— «Ցերկ. Վեստ.» ցաւելով արձանագրում է քարոզչական յանձնախմբերի անդամների տարեցտարի նուազումն. այսպէս Արխանգելի մասնաճիւ-

ղը հիմնուելու տարին ունեցել է 497 անդամ, իսկ երրորդ տարին 72 անդամ։

— Հնագաւան աղանդաւորների դարձը հետզհետէ շատանում է։ Մինչդեռ Շտունդիստ կոչուած աղանդը օրեցօր մեծ ծաւալ է ստանում բուն ռուսական Թեմերում։ Եկեղեցական մամուլը պահանջում է խիստ միջոցներ ձեռք առնել այդ աղանդի դէմ, չը դոհանալ միայն քարոզիչներին բանտ դրնելով՝ որովհետև դրանց տեղը նորերն են ծնում, այլ աշխատել գերմանական գաղութները շուտով ռուսացնել որովհետև դրանք են այդ աղանդի կենդրոնները։

— Ինչպէս յայտնի է Ռուսիայում մեկ ժողովուրդը, որի համար գրել—կարդալը պարտաւորիչ է, հրեից ժողովուրդն է. իւրաքանչիւր հրեայ ուսանում է իւր ազգից մայրենի լեզուն և կրօնը, բայց որովհետև սինագոգաների դպրոցները ազատ են կառավարութիւնից հսկողութեանց, ուստի առաջարկուում է հսկողութիւն սահմանել դրանց վրայ էլ։

— Եկեղեցական պատկերների նկարչութիւնը բարձրացնելու համար Թեմական առաջնորդներն սկսել են խրախուսել նկարչութեան դպրանոցից աւարտածներին այդ գործով պարապելու։ Առանձնապէս խրախուսուում են այն նկարիչները, որոնք հոգևոր դասին են պատկանում և կամ ցանկութիւն ունեն հոգևորական դառնալու։

— Ռուսաց ծխական եկեղեցիներում սովորութիւն կայ տարեգրութիւն պահելու ծխի մէջ երևան եկած կրօնական-բարոյական կեանքի երևոյթների մասին։ Հասկանալով այսպիսի տարեգրութիւնների մեծ նշանակութիւնը, ուշադրութիւն են դարձնում այժմ դրանց վրայ։ Քննութիւնից երևում է, որ շատ եկեղեցիներում այդ տարեգրութիւնները կամ չեն պահում և կամ շատ տարօրինակ և աննպատակ ձևով են պահում, օրինակ՝ արձանագրում են միայն օրինակատարութիւններից հանած վիճակագրութիւնները կամ լրագիրներից քաղում են քաղաքական լուրեր ևլն։ Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով մի քանի թեմական ժողովներ վճռել են որոշնել ինդիրների համար բաժանմունքներ ունեցող տետրեր տպագրել և բաժանել եկեղեցիներին։ Այսպիսի տարեգրութիւն պահելու սովորութիւն ունեցել են մեր հներից շատերը, ափսո՛ս որ այդ սովորութիւնը այժմ գրեթէ մոռացուած է։ Շատ ցանկալի կը լինէր այժմ մտցնել մեր ծխական եկեղեցիների մէջ ևս այդ սովորութիւնը, որպէս զի հնար ունենանք հայ համայնքների կրօնական-բարոյական կեանքի պատկերը ձուլել տարեցտարի և սպառնացող վտանգների առաջն առնել։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

— Չը նայելով որ ռուսաց ս. Սինոդի գատաղ Պօբեդոնոսցեվը իւր «ժամանակակից վիճելի ինդիրներ» կոչուած շարադրութեան մէջ խստութեամբ յարձակուում է անգլիկան եկեղեցու վրայ, համարելով որ նրա մէջ բողոքական սկզբունքը մարմնացած է, վերջին ժամանակներս ռուս և անգլիկան եկեղեցիների մէջ միութիւն հաստատելու միտումները զօրանում են։ Ջատկի տօնին Նօրքի արքեպիսկոպոսի Պետերբուրգ և Մոսկուա այցելելն երկու կողմի համար ևս ուրախալիք է եղել։ Անգլիացիք շատ գոհ են մնացել իրենց եղած ընդունելութիւնից. Թայմսի թղթակիցն արտագրելով այս փաստը յիշեցնում է, որ անգլիկան եպիսկոպոսները վաղուց են սկսել միութեան ձգտումներ ցոյց տալ, մինչ ռուսաց կողմից և ոչ մի քայլ չէ արուած այդ նպատակով։

— Ընդհանուր—անգլիկան եկեղեցու ժողովը, որ տասն տարիներ մի անգամ է տեղի ունենում, այս տարի կը գումարուի մի տարի առաջ։ Ա յսպէս կոչուած Լամբեթեան ժողովը ամենագեղեցիկ արտայայտութիւնն է անգլիական ազգի կրօնական—բարոյական կեանքի։ Այդ ժողովին մասնակցում են բոլոր եպիսկոպոսական եկեղեցիք աշխարհիս ամենայն կողմից։ Առաջիկայ ժողովի ծրագիրն արդէն ծանօթ է «Արարատի» ընթերցողներին։ Այս ժողովն առանձնապէս հետաքրքրական է յարուցուած միութեան ինդրի պատճառով։ «Ցերկ. Վեստ» ցանկութիւն է յայտնում, որ այդ ժողովին ռուսաց եկեղեցականութիւնից ևս ներկայացուցիչ լինի այնտեղ։ Հայաստանեայց եկեղեցու վերաբերութեամբ անգլիկան եկեղեցու յարաբերութիւնները միշտ բարեկամական են եղել, մինչև իսկ անգլիկան եկեղեցու ձեռնադրութեան առաքելական յաջորդութեան նշանակութիւն տալու համար ցանկութիւն է յայտնուած մի քանի նշանաւոր քահանայից կողմից եպիսկոպոսի ձեռնադրութիւնը Հայոց Հայրապետից ստանալու։ Այս իսկ պատճառով ցանկալի կը լիներ տեսնել այդ վեհ ժողովում և հայ եկեղեցու մի պատկառելի ներկայացուցիչ, որի պարտականութիւններից մեկը կը լիներ խօսքով գոնէ շնորհակալութիւն անելու ամբողջ անգլիական եկեղեցուն այն կարեկցութեան համար, որ նա բոլորից աւելի ցոյց տուաւ հալածուած հայերին։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

Գերմանիա։ — Այս ամառ Լայպցիգում պիտի գումարուի առեստրանեական—ազիտացիոն կուսակցութեան համաժողովը։ Աչքի առաջ ունենալով այս

ժողովի քաղաքական նշանակութիւնը չատերը Գերմանիայում հակառակ են դրան և Լայպցիգ քաղաքի նշանաւոր Թոմաս-կիրիւհ կոչուած եկեղեցու հոգաբարձութիւնը մերժել է թոյլ տալու, որ այդ եկեղեցում տեղի ունենայ հանդիսաւոր ժամերգութիւն։

— Տաճկահայոց Թշուառութեան կարեկցող գերմանացիք դոկտ. Լեպսիուսի շնորհիւ ըմբռնելով հայ քրիստոնից հսլաճանքի նշանակութիւնը, երկու տարի է ի վեր մօտ 700՝000 մարկ գրամ են ժողովել, որ կամենում են կոտորածներից ազատուածների թշուառութիւնը մեղմացնելու գործ դնել։ Այդ դուտ քրիստոնէական կուսակցութեան նպատակը չէ կրօնական քարոզչութիւն անել և թշուառ հայերի հաւատը գրամով գնել, ուստի և նրանք յատուկ պատուիրակ են ուղարկել Պարսկաստանի Տաճկաստանին սահմանակից գաւառները, խնամելու գաղթական և փախստական հայերին և մի ապաստանարան հիմնելու անտէրունչ որբերի համար։ Այդ մարդասիրական գործի գլուխ է կանգնել պաստոր Փիշները, որ այս օրերս իւր երիտասարդ ամուսնու և երկու գերմանուհի ողորմած քոյրերի հետ միասին ողևորուեցաւ Խոյի և Սալմաստի կողմերը։

Շուտիյա. — Օսկար Բ. Թագաւորի յօրելեանի առթիւ այս ամառ օգոստոսի 31 մինչև սեպտ. 4 տեղի կունենայ կրօնական գիտնական մի համաժողով Ստոքհոլմում։

ԲԱԺԻՆ ՀԵԹԱՆՈՍԱՑ.

Զինաստան. — Իոլանդացի պատէր Մակվայն, որ իւր ամբողջ կեանքը Զինաստանում է անցկացրել և լաւ գիտէ չինարէն, կազմել է այդ լեզուի բառգիրքը և դրա համար Լևոն Ժ-Գ. պապի օրհնութեան արժանացել։ Ա՛յս քարոզիչն ահա ինչ է ասում Զինաստանի վերաբերութեամբ. «Մեկպէտ ամեն մի բողոքական քարոզիչ տարէն 5000 ֆրանկ է ստանում, իսկ կաթոլիկ քարոզիչը 500 ֆ.։ այնու ամենայնիւ 20՝000 բողոքականի դիմաց այնտեղ 2՝000՝000 կաթոլիկ չինացիք կան։ Չինացիք կրօնասէր են և ամենքն էլ Աստուած են ճանաչում, նրանց մէջ անաստուածներ չկան. տիրապետող աղանդները երեք են. կոնֆուկեան, բուդդայական և թաոական։ Կայսրը կոնֆուկեան է, բայց խնամակալ է համարուում և միւս աղանդներին։ Ես հաւատում եմ որ չինացիք քրիստոնէութիւն կընդունեն՝ եթէ հանգամանքները փոփոխուեն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

*
* *

Ա՛խ, ես գիտեմ՝ թշուառ եղբայր,
Ծանր է խաչը տկար ուսիդ.
Ճակատագիրն խլեւ խորհի մայր
Չէ՛ ժպտացել դու երեսիդ։

Գիտեմ՝ վաղուց ես դու սովոր
Անցնել անդուն երկար գիշեր,
Եւ արցունքով գերդ ազատ,
Մ՛էկ մէկ տամնել կեանքիդ օրեր։

Բայց դու գիտե՞ս որ դու անվիշտ
Չէ տեսնուած մի հոգածին,
Եւ հեղածդ յուսոյն է միշտ,
Որ տալիս ենք կեանքին մի պին.

Հաւատում ենք, թէ կը գայ օր—
Բաղդը երազ չի լծուիլ մեզ,
Թէ կը բացուի նա փառաւոր
Աստուծեան վառ շողի պէս.

Թէ կը ցամքի դառն արտասուք,
Լոյս կը դառնայ այս սեւ գիշեր,
Կը փարատուին կսկիծ եւ տուք—
Կը գայ մայիս շնորհաբեր։

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ՄԱՐԴԱՐԷՒՅ ԳՐՔԵՐԻ ՀԵՏՔԵՐՔ ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ։

Եղիշէի և մարգարէից գրքերի համեմատութիւնը մի երկրորդ ապացոյց կարող է ծառայել այն կարծիքին, թէ նա՝ Եղիշէն, իւր պատմութիւնը գրելու ժամանակ ոչ թէ դիտաւորեալ ծրագրով այս կամ այն հեղինակին է աչքի առաջ ունեցել, և նրանից՝ առանց անունը տալու օգտուել է, յարմարցնելով գէպքեր ու անձինք մի նորակերտ պատմութեան համար, այլ գրել է իւր պատմութիւնը, ինչպէս որ ինքը տեսել ու լսել է «ոչ ի կարճ ընդոստուցեալ և ոչ ի լուր զարմուցեալ այլ ինքն անձամբ անդէն ի տեղւոջն» պատահելով։

Դուրէ սրա դէմ առարկուի, թէ այնքան շատ նմանութիւններ ու կարծեր կան Մակաբայեցւոց գրքի մէջ, և այն էլ բառական նոյնութեամբ, որ ակամայից մեզ այդպիսի եզրակացութեան է տանում։ Սակայն մենք աւելին կասենք. մարգարէից գրքերի համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Եղիշէն գոցանից էս օգտուել է թէև աւելի նուազ չափով—որը մեզ տեղիք է տալիս նոյնպիսի եզրակացութեան հանդելու։ Բայց թէ մէկի և թէ միւսի համեմատութեան նմանութիւնների մէջ բոլորովին այլ բան պիտի տեսնել և այլ կերպ բացատրել։

Եղիշէն այնքան հմուտ է սուրբ գրքին, այնքան իւրացրել է նրա լեզուն ու իմաստները, որ երբ մեկնողի երևոյթը պատահարար կրկնուում է նոյնութեամբ կամ նմանութեան մի քանի կողմերով իւր պատմութեան շարադրութեան ժամանակ, պատմիչը փոխանակ նոր ձև փնտռելու՝ առանց վարանելու արտայայտում է իւր միտքն, որպէն պատրաստի յարմար զարձուածով։

Ինչ երբ պատրաստի իմաստն այն պահպանութիւնն ու ոյժը չունի, նա իրը հմուտ և մեծ ոճաբան՝ նախագաստութիւնը շրջում է ձեղքում է մինչև որ իւր ոճի բարձրութեան է հասցնում—ինչպէս տեսանք այդ երևոյթը Փիլոնից առած իմաստները մէջ բերելու ժամանակ,—ապա թէ հիւսում է իւր պատմութեան մէջ։ Եւ այս շատ բնական է. մեկնիչից իւրաքանչիւրը ձիշտ նոյն եղանակով է վարուում երբ իւր կարդացածից ու լսածից՝ վերցնում է շատ ոճեր, դարձուածներ, նկարագրութեան ձևեր, պատկերներ և դրծ է ածում է իւր խօսքի ու գրութեան մէջ, միշտ իւր սեփական ոճի դոյնն ու ձևը տալով փոխառածներին։

Այդ աւելի բնորոշ կերպով երևում է հետևեալ օրինակներից։

ԵՂԻՇԷ*

1. Ի դէպ եղեալ քան մարգարէին ի վերայ նորա այսաւր, առ քաղցի իւրում չընչացեաց և կերբեցե զկնի անձին իւրոյ ....

Երես 45. Յեզ. Ա.

2. Թէպէտ արկ ի նոսա թագաւորն զձեռն իւր բռնութեամբ և գրազատմն կալաւ և չարչարեաց և զնա բազում մահուամբ սատակեաց ...

409. Յեզ. Գ.

3. Ես եմ, ես եմ, ի սկզբանէ նոյն մինչև յաւիտեան. ոչ ասաք զիտաւ իմ այլում. և ազգ պաշտութիւնս իմ զրոչելոց։

205. Յեզ. Ե.

4. Որ օրէնն ապատ երեսոյ չընկնին ի մէջ ծագկարիք լեռանց ընկեցան ի բացակող աչխարհն արևելից .... հայ նեղութեան և չուր կաթսայից նոց խամաթարգել ....

5. Նաև ի բազում աւուրց չորալ և ի ճօճել բազմահուն նիպակաց իբրև յերկնաւոր անագին հրաձգութենէ եռային .... բազում վիրաւորք յերկիր անկեալ պիտի աւել խառպին ....

220 – 221. Յեզ. Զ.

Սիրան բհնանէր և սիրէն գազարէնն լսել զմինչեւ բեկեալոցն պիտի աւելցուր խառպ սպառ վիրաւորացն.

224. Յեզ. Զ.

6. ... րակ և հեռի վարեն զաս և պահանջս և բազում տպաւք զբարի հարեալ ընկեցան յանցս ճանապարհաց։

449. Յեզ. Գ.

1. Այր եղբօր իւրում մի՛ ատելով ատիցես, այլ խոտորեսցես և կիրթիցե զձախակողմն իւր և մի յոգեսցի մարդ ուտելով զմարմինս բազկաց իւրոց։

Նաայ. Գլ. Թ.—20։

2. Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տեառն զօրութեանց ի վերայ ժողովրդեանն իսրայ, և արկ զձեռն իւր ի վերայ նորա և սատակեաց զնոսա ....

Նաայ. Ե. 25։

3. Ես եմ, ես եմ նոյն որ չընչեմ. Յառաջ քան զիս ոչ եղև այլ Աստուած և յետ իմ ոչ եղիցի .... Զգիտաս իմ այլոց ոչ ասաց և ոչ զգաստութիւն իմ զրոչելոց....

Ես. ԽԳ. 25. Խր. 8՝. –

4. Տայցէ քեզ Տէր հաց նեղութեան և չուր կաթսանաց.

5. Զայն հարուածոց. ձայն չարժման անուոց, չառաչիւն կառաց .... փայլին պինու, չորալ սուսերք. քաւղալը խառալ վիրաւորացն։

Նաւում. Գ. 3.

6. Եւ զտպաւս նորա զբարի հարցին ի սկզբան ճանապարհաց ....

Նաւում. Գ. 10.

* Ընտիր մատենագիրք — Նոռիւէ ի Վենետիկ 1895.

* Միեւնոյն իմաստը կրկնուած Խե. 21, 25. եւլն։

7. Ամենայն ազգ և լեզուք՝ որ են ընդ իմով իշխանութեամբ դատաբեսցին յիւրաքանչիւր մոլար օրինաց և մեղանչեն յերկրպագութիւն արեգական....Զայս առելով քարոզ կարդայր ի մեծի կարաւանին ...ս

55. ճեզ. Ր.

7. Եւ քարոզ կարդայր գործութեամբ և ասէր.

Դանիէլ. Գ. 4.

8. Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգռեալք և գգուեալք կին յիւրաքանչիւր պատեհութիւն, հանապազ քոկ և հեսի երթային

585. Ը.

8. Որ ի գիրիս գրգեալք և գգուեալք կին, գիրիս արկեալ ազդեաց թաթաւեալ թաւալէին։—

Երմ. Ողբ. Գ. 5.

9. Ի նախնեաց ունիմք սովորութիւն աստուածատուր պատուիրանաւ ազօք առնել ի վերայ կենաց քաղաքի.. և անձանձրոյթ լինդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց գործ....դի ի գործ յերկար խաղաղութեան և մեք առողջութեամբ և Աստուածպաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր։

54. Բ.

Եւ ազօք արարէք ի վերայ գործա առ Տէր, զի ի գոյա խաղաղութեան և հզիցի քեզ ի խաղաղութիւն.

Երմ. ԾՓ. 49.

10. Առացի այսպէս. աստուածք որ զերկինս և զերկիր ո՛չ ածարին, կորիցեն ի ներքոյ երկնից, և ապա զմիգն ի քաց արձակիցի.

337. Ը.

10. Այսպէս ասասիք ցնոսա, աստուածք որ զերկինս և զերկիր ո՞չ արարին կորիցեն յերկրե և ի ներքոյ երկնից

Երմ. Ծ. 11։

11. Նա զայս լսելով թագաւորին. բորբոքեցաւ իրրև զհուր ի հնոցին Բաբելոնի ... Ցայն ժամ եհեղ գրոլոր բարկութիւն սրբամըտութեան յայրն երանելի։

25. Ա.

11. Եհեղ զսրտմտութիւն բարկութեան իւրոյ, և բորբոքեցոյց հուր ի Սիօն։

Երմ. Ե. 4.

Նմանութիւն մի կատ ել Յորի գրից. —

Սրինգ արտաքնոց և արտաւիրք ի ներքնոց անդադար ի վերայ հառանեն. ցանկան մահու յաւալ քան զժամանակն և ոչ գտանեն և բազումք են, որ փորեն և խնդրեն և խնդալից լինեն յորժամ գտանեն։

208. Ե.

Իակ ընդէ՞ր տուեալ լոյս անձանց դառնացելոց յայս և կեանս ցաւագնելոց հոգւովք, որ ցանկան մահու և ոչ հառանեն, փորեն իրրև զգանձ, և խնդալից լինեն եթէ գտանեն.

Ցովբ. Գ. 20—22.

Հարկաւ միայն վերև բերած 11 հատուածները չեն, որով ամփոփուում են Նղիշէի և մարգարէից զրքերի նման կէտերը. զրանք միայն խոշոր, առաջին անգամից աչքի զարնող կողմներն են. երկրորդ, երրորդ ընթերցմունքը կը կրկնապատկէր կ'հատապատիկը զրանց թիւը։

Այստեղ աւելորդ ենք համարում յիշել այն մանր մանր բաղմաթիւ նմանութիւնները, որ ընթերցողի ուշքը՝ իրր արդէն Նղիշէի մէջ պատահած հատուկատորներ՝ զրաւում են. բայց այնպիսի մի նոր կամ նման ձևով ու զարձուածով, որ մարդ զժուարանում է նրանց տեղը դտնել և մէկ մէկ ցոյց տալ։ Շատերից մի քանիսը դնենք այստեղ։ «Ոչ կարծ զաւեսցի, և ոչ ըստ խօսից զատապարտեսցի։ (Ես. ԺԱ. 3)։ «Ամենեքին ջեռան իրրև զհնոց վառեալ։—«Ոչ ոք էր ի նոցա, որ կարդայր, (Ովս. Լ. 7)։ «Պատմեցից ձեզ, որ ինչ անցք անցելոց իցեն. (Ել. Ի. 22)։ «Զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր և խոստանայ լեզու ամենայն լեզուս. (Ես. ԻՏ. 25)։ «Հեղից զսրտմտութիւն բարկութեան ի վերայ նորա. (Եզէկ. ԻԴ. 9)։ «Մերժեցան ցաւք և արտմութիւնք և հեծութիւնք. (Ե. Լե. 10). և այլն, և այլն։

Այսպիսի և աւելի մանր ու աննկատելի օրինակներ շատ շատ են։—Հետաքրքրուողը թող համեմատէ այս մի քանիսը Նղիշէի հետևեալ կէտերի հետ կարդայ.—Երես. 28, 29, 97. 206 և այլն։

Եթէ ճշմարիտ է այն տեսութիւնը, որ լեզուն, ոճը ինչպէս որոշ անհատի, նոյնպէս և յայտնի դարաշրջանի յատուկ կնիքն է կրում իւր վերայ, եթէ այն էս հաստատ է, որ յետագայ դարերի հեղինակը որքան էլ ճգնի անցեալ շրջանի լեզուն գործածել, մտամբ միայն կ'յաջողի նրան, որովհետև նա իւր դարի որդին է՝ լեզուով և դաղափարով, այն ժամանակ շատ պիտի զժուարանայ այն բանասէրների գործը, որոնք ճգնում են Նղիշէն Ը. դարուց էլ յետոյ զրած ապացուցանել։ Որովհետև ս. Գրքի այն լեզուն, որ շատ քիչ տարբերութեամբ տիրող է մակաբայեցոց և Յորայ զրքերից մինչև Նղեկիէլ, այնքան նման է Նղիշէի լեզուին,—թէ ընդհանուր քերականական կանոններով, թէ բառերի և դարձուածների մանաւոր նմանութեամբ,—որ զրանց թարգմանողների և Նղիշէի մի պզրոցի անձինք լինելը անկասկածելի է, դարձեալ միայն շատ սուր աչք և մանրազնին դիտողութիւնք պիտի կարողանան նրանց տարբերութիւնները և առանձնայատկութիւնները՝ իրր անհատական կնիք՝ որոշել։ Եւ որովհետև ս. Գրքի յիշեալ մասերի թարգմանութիւնը գեռ ոչ ոք չէ փորձել Ե. դարից իջեցնել եօթներորդ կամ ութներորդ դարերին, հետևաբար Նղիշէի վերաբերութեամբ էս այդ փորձը շատ զօրեղ ապացոյցների կարօտ պիտի լինի գեռ էս։

Ս. Ց.

ՊԱՐԹԵՒՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ե Ւ

ՆՐԱՆՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԵՏ.

(250 Քրիստոսից առաջ — 226 Քրիստոսից յետոյ).

(Շարունակութիւն եւ վերջ). *

Հռոմէա—պարթեւական պատերազմները Հայաստանի համար։

Հայաստանին տիրապետելու խնդիրն այսպէս յաջող լուծումն ստանալուց յետոյ՝ պարթեւների և Հռոմէացոց յարաբերութիւնները բարեկամական դարձան։ Վոլագազէսն և Վեսպասիանոսը բարեկամ էին միմեանց մինչև 75 Թուականը, սակայն պարթեւաց աշխարհը չը կարողացաւ այդ խաղաղութեան պտուղները վայելել, որովհետև Վրկանի Թագաւորը Դերբենդի պահակը բանալով՝ Ալաններին բաց Թողեց պարթեւաց երկիրը 72 Թուին։ Ալաններն արեւելեան ազգերից Մասագետներն եւ Հայաստանին ու մեծ ազգով հին դարձան։ Երեք տարի վերջն Ալանները բուն պարթեւաց երկիրն արշաւեցին և Վոլագազէսին այնպէս նեղը ձգեցին, որ սա Վեսպասիանոսից օգնութիւն խնդրեց, սակայն կայսրը մերժեց նրա խնդիրը։ Ալանների այս արշաւանքներն էին պատճառ, որ Վեսպասիանոսն ու նրա որդիքը Վրաց Մեթրիդատեսի բերդերն ամրացրին։ Վեսպասիանոսի մերժումն Վոլագազէսին օգնելու քիչ մնաց որ պատերազմի առիթ լինէր, բայց դարձեալ յաղթեց կայսեր խաղաղասիրութիւնը և սպառնացող վտանգի առաջն առնուեցաւ։ Ալանների արշաւանքից քիչ յետոյ մեռաւ Վոլագազէսը, որ պարթեւաց նշանաւոր Թագաւորներից մեկն էր և որին պարտական ենք Յ.Ննդաւետաց մնացորդների ժողովածուն։

Իրեւ յաջորդ Վոլագազէսի տեսնում ենք դրամների վրայ երկու Թագաւոր, սկսուած 78 Թուի յունիս ամսից, սրանցից մին մօրուսաւոր է և մերձաւորապէս 25 տարեկան, սա կոչուում է Վոլագազէս Բ. միւսն աւելի երիտասարդ, Պակորոս (Բակուր) Բ. անուամբ։ Երեւի սրանք երկու ախոռակից եղբայրներ էին։ Բակուրի դրամները հասնում են մինչև 84 Թուականը, մինչ Վոլոգազէսի վերջին դրամը 79 Թուից է, որից յետոյ հանդէս է գալիս մի Արտաբանէս Դ.։ Սա պաշտպան է հանդիսանում Փոքր Ասիայում երեւան եկած կեղծ Ներոնին, ապաստանարան է տալիս նրան և սպառնում է Տիտոս կայսեր, որ բռնութեամբ այս Ներոնին Հռոմայ գահի վրայ կը բազմացնի։ Այս սպառնալիքը չ'իրագործուում, որովհետև պարթեւաց երկրում ներքին խռովութիւններ են տեղի ունենում, որ գագարում են միայն 93 Թուին, երբ միահեծան տէր է գառնում Բակուր Բ. սա 110 Թուին դեռ իշխում էր, որովհետև այդ Թուականին նա եգեսիոյ Թափուր մնացած գահը ծախեց Արգար բար Իզատին։ Բակուրից յետոյ 110—113 Թուականին պարթեւական գահի համար կռուում են Օսրոէս, Վոլոգազէս և Մեհերդատէս Զ. Թեկնածուները, որոնցից ոչ մեկը յաղթող չի հանդիսանում, ուստի ներքին պատերազմներն անընդհատ շարունակուում են։

Այս հանգամանքում Օսրոէսն անխոհեմութիւն ունեցաւ Էքսեդարէսից, որին իւր հայր Բակուրն առանց հռոմէացոց կողմից արգելքի հանդիպելու Հայաստանում Թագաւորեցրել էր, գահը խլելու եւ տալու Բակուրի միւս որդուն, Պարթամասիրիսին։ Սրանով հռոմէացոց միջամտութիւնն անխուսափելի է դառնում։ Տրդատոս կայսրը 113 Թ. հոկտեմբերին սկսում է իւր արշաւանքը ղէպի արեւելք։ Օսրոէսի դեսպանները, որոնք խաղաղութիւն էին առաջարկում, եւ խնդրում հայկական Թագը Պարթամասիրիսի համար, կայսեր պատասխանեցին Ամէնքոմէ կայսրը նրանց յետ դարձրեց, յայտնելով որ պատասխան կը ստանան տեղն ու տեղը։

Տրդատոսը 114 Թուին մտաւ Հայաստանի սահմանը, առանց պատերազմի գրաւեց Արտամոսատան։ Արեւմտեան Հայաստանի նախարարներն ու Թագաւորն արդէն նրան ընդառաջ էին դուրս եկել։ Պարթամասիրիսն խոնարհ ոճով գրել էր նրան իւր խնդիրը եւ անձամբ եկաւ Էլէգեա, ուր գահի վրայ դազմած կայսեր առաջ, հռոմէական բանակի դիմացը, իւր Թագը վայր դրաւ, այն խորհրդաւոր յուսով, որ Տրդատի պէս ինքն էլ յետ կը ստանայ նոյնը կայսրից։ Տրդատոսը յայտնեց հայոց Թագաւորին, որ ինքը Հայաստանը պիտի հռոմէական գաւառ դարձնի, բացի սրանից առաջարկեց նրան Թողնել հեռանալ Հայաստանից եւ իւր տրամները կատարել տալու համար, մի հռոմէական պահակախումբ տուաւ նրան ուղեկից։ Պարթամասիրիսը կամեցաւ փախչել հռոմէացի զինուորների հսկողութիւնից եւ ապաստանեցաւ։ Այս դիպուածից յետոյ գրաւուեցաւ ամբողջ Հայաստա-

* Տես Արարատ № 4. եր. 157—161։

նը եւ սահմանակից ազգերի մանր թագաւորները հպատակութիւն յայտնեցին կայսեր։ Տրայանոսը յետ դարձաւ Հայաստանից դէպի Եգիպտոս, որի թագաւորը նոյնպէս ընդառաջեց և հպատակութիւն յայտնեց։ Միջագետքում 115 թ. պատերազմներ տեղի ունեցան։ Կայսեր գլխաւոր ընդդիմադրողն եղաւ Ադիաբենի Մեբարզապէս արքան, որի նախնիքը Վոլագաղէս Ա-ի ժամանակ էս պաշտպանել էին տերութիւնը Ներոնի զօրավարների դէմ։ Մեբարզապէսին պատկանող Մծբինն առան Հռոմէացիք, նորա դաշնակից Սինգարայի իշխան Մանուն փախաւ Ադիաբենէ և նրա երկիրն անցաւ Հռոմէացոց ձեռքը։ Այս կռիւների ժամանակ Օսրոյէսի անունը միանգամ է յիշուում, նա մարտ էր մղում Կորդուենէի [Կորդուաց աշխարհի] Մանիսարոսի դէմ, որ Պարթամասիրիսի արտաքսուելուց յետոյ Հայաստանի մի քանի գաւառները գրաւել էր։ Մանիսարոսը նեղն ընկնելով Օսրոյեսից, իր տիրապետած երկրներն առաջարկեց Տրայանոսին։ Կայսրը տեսնելով՝ որ նրա խոստումները կեղծ են, նուաճեց Կորդուաց աշխարհը և Հայաստանին սահմանակից Մարաց [Մարկոմանի] երկիրը։

Միջագետքն այժմ հռոմէական գաւառ դարձաւ և կայսրն ստացաւ Parthicus պատուանունը 115 թուին։ Յաջորդ տարին Տրայանոսը Տիգրիսի անցաւ, նուաճեց Մեբարզապէսի տերութիւնը և կազմեց մի նոր հռոմէական գաւառ Ասորեստան անուամբ։ Այդ տեղից կայսրը դիմեց դէպի Բաբելոն առանց ընդդիմութեան հանդիպելու, որովհետև ներքին խռովութիւնները գեռ շարունակուում էին Պարսկաստանում։ Կայսրը անցաւ Տիգրիսի ստորին հոսանքից միւս կողմն և տիրեց Տիզբոնին։ Օսրոյէսի աղջիկը և թագաւորական գահն ընկան կայսեր ձեռքը, իսկ ինքը Օսրոյէսը փախաւ եւ ապաստանարան գտաւ Հայաստանում՝ որի հիւսիսային մասերը կատարեալապէս նուաճուած չէին կայսրից։

Տրայանոսը շարունակեց իւր արշաւանքը դէպի հարաւ և պարսից ծոցից նաւատորմ իսկ ուղարկեց դէպի Բահրայն կղզիքը։ Հէնց այդ միջոցին ապստամբեցին նուաճուած երկրները և հռոմէական գաւառ հրատարակուած բոլոր երկրներում ջարդեցին և կամ գուրս քշեցին հռոմէական պահակ գնդերը։ Ապստամբութեան կենդրոնն էր Ասորեստանը. ապստամբներին զլուխ էր անցել Մ'եսերոմաէս Զ., գահի համար պատերազմող պարթեւներից մէկը։ Սա արշաւեց մինչև Կորմմոգենէ, ուր ձիուց վայր ընկնելով մեռաւ։ Նրան յաջորդեց իւր որդի Սանատրուկ Բ., որի հետ միացաւ Հայաստանից Օսրոյէսի որդու Պարթամասպատի առաջնորդութեամբ հասած զօրքը։ Ինչպէս երեւում է պարթեւական թագի թեկնածուների մէջ հաշտութիւն էր տեղի ունեցել, ուստի և երկու հօրեղբորորդիք շարունակում էին կռուել Հռոմի դէմ։ Տրայանոսի ուղարկած երկու զօրավարներից մինը բոլորովին ջարդուեցաւ, իսկ միւսը, Լուսիոսը, իւր կողմը գրաւեց Պարթամասպատին, որ գիշերով թողեց Սանատրուկի բանակն ու անցաւ հռոմէացոց կողմը։ Սանատրուկը ջարդուեցաւ յաջորդ օրուան ճակատում և սպանուեցաւ, հռոմէացիք տիրեցին Մծբինին, առին և կործանեցին Եգեսիան և Սելեւկիան, թէպէտև ապստամբութիւնը յաջողութեամբ ընկճուեցաւ, բայց Տրայանոսը տեսաւ, որ անհնարին էր այդ նուաճած երկրները ձեռքին պահել, ուստի Տիգրոնի մօտ, մի դաշտավայրում, հռոմէական և պարթեւական բանակի առաջ պարթեւական թագով պսակեց Պարթամասպատին (116 թ.)։

Յաջորդ տարին կայսրը Միջագետքի Ատրէ քաղաքը պաշարեց, բայց առնել չը կարողանալով և հիւանդանալով՝ դարձաւ Ասորիք. այնտեղից էս ուղեւորուեց Հռոմ, բայց ճանապարհին մեռաւ 117 թ. օգոստոսի 7-ին։ Պարթամասպատէսը չը կարողացաւ դէմ դնել իւր հօրը և Օսրոյէսը կրկին տիրացաւ իւր գահին։ Հադրիանոս կայսրը լաւ հասկանալով՝ որ չէ կարող նոր նուաճուած գաւառները, Ասորեստանը, Միջագետքն ու Հայաստանը պահել առանց հռոմէական զօրքի, հրաժարուեցաւ գրանցից և Եփրատը կրկին սահման դարձրեց հռոմէական կայսրութեան։ Այդ միջոցին Պարթամասպատէսն* ստացաւ Ուռհայի կամ Եդեսիոյ թագաւորութիւնն, ուր իշխեց 119—123 թ. Տրայանոսի արշաւանաց և տիրապետութեան քաղաքականութիւնը միայն այն հետեւանքն ունեցաւ, որ պարթեւաց տերութեան թուլութիւնը պարզուեցաւ։ Ներքին խռովութիւնները չէին դադարում։ Օսրոյէսի հետ միասին կամ իրրեւ նրան հակաթոռ շարունակում էր Վոլագաղէսը գեռ զբաղմունք կոխել։ Հադրիանոսի օրով պարթեւների յարաբերութիւնները բարեկամական էին և 123 թուին պատերազմի սպառնացող վտանգի առաջն առնուեցաւ կայսեր հետ բանակցութեամբ. այդ միջոցին էր, որ Պարթամասպատէսն հեռացուեցաւ Եգեսիոյ թագաւորութիւնից, որովհետև նրա ներկայութիւնը մի մշտական սպառնալիք էր արքայից արքայի համար։ Եգեսիայում գահն անցաւ կրկին նախկին եգեսական հարստութեան։ Օսրոյէսի գերի ընկած աղջիկն ազատութիւն ստացաւ 130 թուին, իսկ թագաւորական գահը մնաց դարձեալ հռոմէացոց ձեռքը։

* Ուռհայի թագաւորների կարգում սա կոչուում է Պարնաթասպատ։

Օսրոյէսի վախճանից յետոյ միահեծան տէր եղաւ Վոլագազէս Բ։ Սրա ժամանակ, 135 թ. Ալանները կրկին հեղեղեցին Մարաստանը շնորհիւ վրաց Փարանսանէս Բ. թագաւորի, որ նրանց առաջ բաց էր արել կովկասեան ացքերը։ Ալաններ աւերեցին Հայաստանի եւ Կապադովկիայի մի քանի նահանգները։ Այս առթիւ յիշուում է մի Վոլագազէս թագաւոր, որ զանգատուեց կայսեր Փարսամանէսի վրայ, որ սակայն անձամբ հռոմ գնաց եւ մեղմացրեց կայսեր բարկութիւնը։ Այս Վոլագազէսն էր Հայոց այն թագաւորը, որ անուամբ մեզ յայտնի չէ եւ որին Հադրիանոսը թագաւորներից 117-ին եւ ապա 140—143-ին նրան մի յաջորդ նշանակեց։ Սովորաբար այս Վոլագազէսին շփոթում են պարթեւաց Վոլագազէս Բ.-ի հետ, որ դրամներին նայելով՝ մեռել է 148 թուին, 76 տարի թագաւորելուց և 96 տարի ապրելուց յետոյ։

Վոլոգազէս Բ.-ին յաջորդեց Վոլոգազէս Գ.։ Սա կամենում էր տիրել Հայաստանին, բայց գեռ ևս կռիւ չէր սկսած՝ 155 թուին Անտոնիոս Պիոս կայսեր հետ Անտիոքում տեսակցութիւն ունենալով, յետ կեցաւ իւր մտադրութիւնից գոնէ մի առ ժամանակ։ Պարթեւաց թագաւորը պատերազմի պատրաստութիւն սկսաւ տեսնել եւ Անտոնիոս Պիոսի մահուանից յետոյ յարձակուեցաւ Հայաստանի վրայ 162 թ։ Հռոմի պաշտպանեալ Սոհէմոս թագաւորը վռնտուեցաւ Հայաստանից եւ նրա տեղը թագաւորեց Բակուրը։ Կապադովկիայի հռոմէական զօրավար Էլիոս Սեւերինոսը յարձակուեց Հայաստանի վրայ, բայց Էլեգէայի մօտ շրջապատուեց պարթեւաց թագաւոր Օսրոէսի զօրքերից եւ նրա ամբողջ լեգիոնը ջարդուեցաւ, ինքը Սեւերինոսը իւր սրի վրայ ընկաւ եւ սպանեց իրեն։ Պարթեւները մտան Կապադովկիա և ապա Ասորիք և մեծ աւերմունք գործեցին, հռոմէական զօրքերն Ասորիքում ևս յաղթուեցան և նեղն ընկած գաւառացիք սկսան միտումներ ցոյց տալ Հռոմից բաժանուելու։ Վերջապէս Հռոմից ժամանեց կայսեր եղբայրը, Լուկիոս Վերոսը, որի հմուտ զօրավարը Աւիդիոս Կասսիոն սկսաւ գիմադրութեան պատրաստուել, Հռոմէացիք խաղաղութիւն առաջարկեցին, որ Վոլագազէս Գ. մերժեց, Այս պատերազմը, որ պաշտօնապէս կոչուում է «հայկական եր պարթևական» շարունակուում էր երկու զանազան վայրերում։ Հայաստանը կրկին գրաւեցին հռոմէացիք Ստատիոս Պրիսկոսի ձեռքով, սա Արտաշատ առաւ և գահընկեց արաւ Բակուրին (163), կրկին թագաւորեցրեց Սոհէմոսին, որին գահի վրայ բարձրացնելն յանձնուեցաւ Մարտիոս Վերոսին, Պրիսկոսի յաջորդին։ Հռոմէացի զօրավարն այդ գործը խաղաղութեամբ և համոզելով գլուխ բերաւ (164)։ Աւիդիոս Կասսիոն ինքն անձամբ պէտք է պարթևների առաջն առներ Ասորիքում. Եւրոպոսի մօտ տեղի ունեցած ճակատամարտում Վոլագազէսը յաղթուեցաւ և Ասորիքից յետ քշուեց, հռոմայեցիք մտան հիւսիսային Միջագետք, Նգեսիան պաշարեցին և առան. երկար դիմադրութիւն ցոյց տուաւ Մծբինը, սակայն վերջըն ընկաւ թշնամեաց ձեռքը։ Ներքին խռովութիւնները ստիպեցին Վոլոգազէսին թողնել Միջագետքն ու անցնել Տիգրիսի միւս կողմը։ Կասսիոսը հետևեց նրան և առաւ Սելևկիան, որ 400 000 բնակիչ ուներ այն ժամանակ։ Հռոմէացիք իրրև բարեկամ Սելևկիա մտնելուց յետոյ, պատրուակ գտան քաղաքը կողոպտելու և այրելու, որով ոչընչացաւ հելլենական քաղաքակրթութեան այդ կեդրոնը։ Կասսիոսը դիմեց Տիզբոն և արքունի գղեակը առնելով աւերեց ու հողին հաւասարացրեց։ Ցաղթական կերպով 165 թ. Կասսիոսը գարձաւ Ասորիք։ Այդ յաղթանակների ժամանակ անգործ չէր եւ Մ'արտիոս Վերոսը, որ Հայաստանից մեծաւ Աւրպատական եւ մեծամեծ յաջողութիւններ ունեցաւ։ Երկու կայսրները այս պատերազմների շնորհիւ առացան Արմենիկուս, Պարթիկուս, Մ'եդիկուս տիտղոսները։ Քառամեայ պատերազմներից յետոյ խաղաղութեան դաշն կռուեց 166 թուին։ Այս գաշինքի գլխաւոր կէտն էր—Միջագետքի հռոմէացոց ձեռքն անցնելը։ Լուկիոս Վերոսը Եգեսիայում թագաւորեցրեց Մանուին, իսկ ինքը գնաց Հռոմ իւր յաղթութիւնները տօնելու։ Հռոմայեցիք իրենց այս մեծ յաղթութիւններից չափաւոր կերպով օգտուեցան, բայց պարթևաց զօրութեան վերջին հարուածը տուին, այսուհետև պարթևաց թագաւորութիւնն արդէն դէպի քայքայումն է դիմում։

Պարթևաց երկիրը քառասնամեայ խաղաղութիւն վայելեց այս պատերազմից յետոյ. Վոլագազէս Գ.-ին յաջորդեց 191 թ. Վոլագազէս Դ.. սրա օրով Սևերոս կայսրը արշաւեց նախ Միջագետք (193 թ.), որ պարթևները գրաւել էին օգուտ քաղելով հռոմայեցոց ներքին կռիւներից, Ուռհայի թագաւոր Աբգար Ը. անմիջապէս հպատակութիւն յայտնեց կայսեր, Ադիաբանէն գրաւեց, հարաւային Միջագետքը նուաճելով դարձրեց հռոմէական գաւառ, Սևերոսի և Ալբինոսի մէջ ծագած պատերազմից օգտուելով պարթևները դիմեցին Միջագետք և պաշարեցին Մծբինը, Սևերոսը Ալբինոսին յաղթելուց յետոյ 197 թուին եկաւ Ասորիք, իսկ 198 թուին, երբ Միջագետք արշաւեց, պար-

թևներն առանց կռուի չետ քաշուեցան։ Սևերոսը սկսաւ Մծբնում մեծամեծ պատրաստութիւններ տեսնել առաջիկայ պատերազմի համար, նորան օգնում էր պարթևաց թագաւորի Տրդատ անունով եղբայրը։ Եփրատի ընթացքով դէպի հարաւ դիմեց Հռովմայեցոց բանակն ու նաւատորմիղը 199 թ. Բաբելոնիայից նա անցաւ դէպի Տիգրիս և յանկարծակի բերելով՝ ջարդեց պարթևական բանակը։ Նոյն աշունն ձմեռը առաւ նա Տիզբոնը, որտեղից 100,000 հոգի գերի վարեց և քաղաքն էլ աւերեց։ Կայսրը չը հալածեց Վոլագազէսին և պաշարի նեղութիւն քաշելով՝ ստիպուեց չետ նահանջել։ Միջագետքում Սևերոսը փորձեց Ատրա քաղաքն առնել, բայց չը կարողացաւ, ուստի մնաւ Ասորիք 200 թ.։ *Յաջորդ տարին Սևերոսը զբաղուած էր Հայաստանում։* Այնտեղ ևս հռովմէական զէնքի ոյժը ցոյցը տալուց չետոյ կրկին դիմեց Ատրայի վրայ, բայց առնել չը կարողանալով՝ ամօթահար չետ գարձաւ, որով Ատրիայի փոքրիկ իշխանութեան զէնքի փառքը շատ բարձրացաւ և հռովմայեցոցն ընկաւ։

Վոլագազէս Գ. մնաւ 209 թ. Նրան յաջորդեց իւր որդի Վոլագազէս Ե. սրա ժամանակ սկսան ներքին կռիւները Պարսից նահանգում, որոնք վերջը կործանիչ եղան պարթևների համար։ Արտաբանէսը թագաւորի եղբայրը, 213 թուին իրեն թագաւոր հրատարակեց, բայց 216 թուին միայն զօրացաւ և տիրեց մայրաքաղաքին։ Անտոնինոս Պիոսը *Արտաբանէս Ե.-ի* աղջիկն իրեն կնութեան խնդրեց, բայց մերժուեցաւ՝ պատերազմ հրատարակեց և արշաւեց պարթևաց երկիրը։ Հռովմէացիք աւերեցին Ադիաբանէի հիւսիսային սահմանները և երկիրը կողոպտելով չետ գարձան, պարթևները դիմադրութիւն ցոյց չը տուին։ Անտոնինոսը պատրաստուում էր կրկին պարթևաց երկիրն արշաւելու, որ սպանուեցաւ 217-ին։ Նրա յաջորդ Մակրինոս կայսեր չը յաջողուեցաւ խաղաղութիւն հաստատել պարթևաց հետ։ Մծբնի մերձակայքում պարթևաց թագաւորը երկու անգամ մեծ յաղթութիւն տարաւ հռովմէացոց վրայ և կոխելով հռովմէական սահմաններն աւերեց։ Մակրինոսը 50 միլիոն դենար (20,000,000 ռուբլու չափ) վճարելով պարթևաց թագաւորին՝ խաղաղութեան գաշն հաստատեց։ Այդ միջոցին (222 թ.) Արտաբանէսը միահեծան տէր գարձաւ պարթևական գահին յաղթելով իւր եղբօրը։

Պարթևական իշխանութեան վախճանը հասել էր։ Արտաբանէսը չը կարողացաւ այդքան դժուարութիւններով ձեռք բերած գահը իւր ժառանգին թողնել։ Նա եղաւ վերջին պարթևական թագաւորը Պարսկաստանում։

Պարսից նահանգը, որտեղից գուրս եկաւ պարթևական իշխանութեան կործանիչը, բոլոր պարթևական շրջանում վարել է առանձնական կեանք, ուստի և շատ սակաւ է յիշատակուում։ Նոր ժամանակներում գտնուած դրամների շնորհիւ միայն գիտենք այժմ, որ Պարսիսը մի առանձին փոքրիկ թագաւորութիւն էր։ Մեր ունեցած դրամները երեք զանազան շրջաններից են. առաջին շրջանի իշխանները կոչուում են Ֆերիտկարի, երկրորդինը և երրորդինը Մալքա, երրորդ շրջանի թագաւորները զանազանուում են նախընթաց երկու երկու շրջանի իշխաններից իրենց պարթևական զգեստով։ Այս դրամների երկրորդ երեսի վրայ գտնուում է միշտ կրակի սեղանը, որ ցոյց է տալիս՝ թէ Պարսիսի իշխաններն սկզբանէ կրակապաշտներ էին։ Այս իշխանների անունները մասամբ հին պարսկական, աքեմենեան անուններ են, ինչպէս՝ Դարեհ, Արտաշէս և մասամբ Սասանեան ժամանակի, ինչպէս՝ Ներսէհ, Ծապհուհր և այլն։ Այս իշխանների ժամանակի և նրանց գործերի մասին մենք շատ քիչ բան գիտենք, երկրորդ դարու կիսին բոլորովին քայքայման էր հասել այդ թագաւորութիւնը։ Պերսիսը կեդրոն էր զրադաշտական պաշտամանց. երկրի մայրաքաղաքում, Ստահրում կամ Իստախրում, որ գտնուում էր Պերսեպոլիսի մերձակայքում, գտնուում էր Անահէդ դիցուհու նշանաւոր տաճարը։ Այս տաճարի վերակացուն էր Սասան, սա արքունի ցեղից մի աղջիկ կին առնելով՝ հիմք դրաւ իր տան ապագայ մեծութեան։ Այս ամուսնութիւնից ծնաւ Պաբակը, որ իւր որդի Արտաշիրի համար Դարաբգերդի հրամանատարութիւնը ձեռք բերաւ։ Այս նահանգում և փառասէր երիտասարդն սկսաւ 212 թուից մանր թագաւորների դէմ կռուել և յաղթելով նրանց՝ սպանել։ Պաբակը իւր որդու գրգմամբ պատերազմի դուրս եկաւ Իստախրի վերջին թագաւոր Գողհրի դէմ և յաղթելով սպանեց նրան։ Սրանից չետոյ Պաբակը դիմեց Արտաբանին և խնդրեց, որ Գողհրի թագը իւր աւագ որդուն տայ։ Արքայից արքան չը համաձայնեց, բայց Պաբակը ուշք չը գարձրեց նրա վրայ։ երբ Պաբակը մեռաւ, Իստահրում թագաւորեց նրա աւագ որդի Շապուհը։

Եթէ Շապուհը պատահաբար չը մեռներ շուտով, երկու եղբայրների մէջ կռիւ պիտի յառաջեր, բայց Շապուհի մահուանից չետոյ Արտաշիրը գրաւեց Ստահրը, ապա իւր ընտանիքի մէջ կատարած արիւնհեղութեամբ տէր գարձաւ նախ իւր տանը, ապա բոլոր Պերսիս նահանգին։ Միայն այժմ բացուեցաւ Արտաբանի աչքը և նա 224-ին Նիրոփարին ուղարկեց, որ Արտաշիրին շղթայակապ իւր առաջը բերէ։ Այս առթիւ ծագեց այն պատերազմը, որ վախճան տուաւ պարթևական իշխանութեան։ Արտաշիրը լսելով Նիրոփարի գալը արշաւեց Շապ—Շապուհի, Խոպհանի թագաւորի դէմ և յաղ-

թելով նրան՝ տէր գարձաւ նրա երկրին, ապա յաղթեց և Ահվազի թագաւոր Նէրոֆարին։ Այս յաղթութիւններից յետոյ գրաւեց նա և Մեղինէ կոչուած երկիրը։ Սրանից յետոյ պատգամ ուղարկեց Արտաբանին տեղ և ժամանակ նշանակելու կռուի համար։ Արտաբանը այս հրաւէրն ընդունեց և Հորմիզդշան գաշտում տեղի ունեցած ճակատամարտում յաղթուեցաւ և սպանուեցաւ։ Արտաշիրը արքայից արքայ հրատարակուեց 227-ին ապրիլի 28-ին։

Արտաշիրը յաջորդ ժամանակի ընթացքում մինչև 228 թուականը հետևեալ գործերը կատարեց։ Նախ Ատրա քաղաքի վրայ յարձակուեցաւ և առնել չը կարողանալով՝ յետ քաշուեց, ապա յարձակուեց Մարաստանի վրայ և գրաւեց նրա մեծ մասը, անյաջող փորձ արաւ Հայաստանին տիրելու և յետ մղուեցաւ հայերից։ Տիզբոնեն տիրեց Արտաշէս 227-ի աշնանը, որովհետև Արտաբանի մահուանից յետոյ նրա եղբայր Վաղարշ Ը. միաժամանակ կարողացել էր գէմ գնել Արտաշիրին։

Արևելեան Պարսկաստանին Արտաշիրը աւելի ուշ է տիրել, նրա ձեռքն անցած երկրներն էին Սակաստան, Վրկան և Մերվ. բոլորովին արևելեան երկրները գեռ երկար ժամանակ ազատ մնացին Սասանեան տիրապետութիւնից, այնտեղ իր գոյութիւնը պահպանեց հին Տոխարացոց թագաւորութիւնը, որի վախճանն հասաւ 429 թուին, երբ սասանեանները Հայաստանում վերջ դրին Արշակունի հարստութեան։

ՎԵՐՋ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԳԼՈՒԽ ՆՈՐԱԳՈՅՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ.

Մանկավարժութիւնն ըստ երևութին հակառակ սկզբունքներ ունի, որոնք գործնականութեան մէջ շատ դժուարութեամբ են միանում։ Նա զոր օր. պատուիրում է. Մի անդամից երկու բան մի՛ սովորեցրու, ապա թէ ոչ երկուսն էլ գլխի մէջ կը շփոթուին։ Ապա աւելացնում է. Ցնտեսիբ մտաւոր աշխատութիւնը և միաւորիր ինչ որ միաւորել հնարաւոր է, ապա թէ ոչ գլուխը կը ծանրաբեռնուի հատ հատ անօգուտ ծանօթութիւններով։

Այս պատուէրների իմաստն այն է, թէ զոր օր. երբ որ Թուաբանութիւն ես ուսանում կամ ուսուցանում, դու անշուշտ պէտք է խնդիրներ լուծես. իսկ խնդիրները դու կարող ես կամ խառնիխուռն անխորհուրդ կերպով կուտակել, կամ այնպէս ընտրութիւն անել նոցանից, որ զուգընթացարար մի կարևոր բան ես ուսանես կամ ուսուցանես։ Ի հարկէ հարկաւոր է վերջին ուղղութեամբ ընթանալ, որովհետև միտքն աւելի առոյգ է, երբ որ զուգակցած պատկերների տէր է գառնում, քան եթէ նոքա կցկտուր և զատուցած լինին միմեանցից։ Թէ այդ գործը հնարաւոր և օգտաւէտ բան է, այդ մասին աւելորդ ենք համարում երկարել, որովհետև մենք այդ փորձել ենք ցոյց տալ 16 տարի սորանից առաջ մի առանձին գրքուկով, որ հետևեալ վերնագիրն է կրում։ «Գեանքի հանդամանքներին համեմատ Թուաբանութիւն»։ Գերմանիայում սկսուած այս ուղղութիւնը ամենայն տարի աւելի և աւելի կատարելագործուում է, որ արձագանգ գտաւ նաև Ռուսաստանում, կարծենք, սկզբում Лубенцъ-ի շնորհիւ։ Այժմ նոր հրատարակուած այդպիսի գրքերից մէկը մեր ձեռքը լինելով,* կարևոր ենք գտնում նորա մի գլխի բովանդակութիւնը քաղուածօրէն այս տեղ հաղորդել։

Այդ գլուխը այն մասին է խօսում թէ «Մօր գլխաւոր հոգսերից մէկն է՝ ընտանիքին կերակրելու պարտքը»։ Մենք այս գլուխը ընդարձակ ենք այն պատճառով, որ մեր հասարակութեան նոյն իսկ բարձր դասակարգում գեղեցիկ սովորութիւն է մտել իւրեանց դուստրներին կրթել նաև տան համար։ Ցայտնի է թէ Ցփխիսում մանաւանդ իսկ հասարակական արհեստը արդի խելացի հիմունքներով տարածելու համար՝ որքան ջանք է գործ գնում ա. Վ. Ռոմինեանցը։ Այժմ ամենքը համոզուած են, թէ բաւական չէ, որ կերակուրը գեղեցիկ պատրաստուի, համեղ լինի. սոսկ ախորժելի պատառներով կարելի է խանգարել

* Das Rechnen im Haushalte, v. Huster und Kretzschmar.

սառամքսը, զոր օր· շոկոլատն ու հայը ճաշի կերակուր չեն կարող համարուիլ: Կերակուրը նախ և առաջ ամուր պէտք է լինի, և երկրորդ որչափ կարելի է՝ էժան ամուր: Երբ որ սայլապանը ամբողջ օրը ճանապարհին կերակրւում է՝ զեղնած «խխարով» կամ մի ուռած «եմիշով», վերան ջուր խմելով, նորան ի հարկէ ոչ մի նորագոյն թուաբանութիւն օգուտ չի բերի, որովհետև նա կարծում է, թէ ինչ որ փորը մանի, այն միշտ կերակուր է· և ամենայն քարող նորա աչքում այն կերպարանքն է ստանում թէ՝ «կուշտը քաղցածին մանր է բրգում····» Բայց ի՜նչ կասէք այն հարստի մասին, որ իւր համադամ կերակուրներից՝ առաւելապէս ընտրում է «շատ» սոխ, «շատ» կանաչի, «շատ» պատուղ և այլն· միթէ նորա համար էլ նորագոյն թուաբանութիւնը «պայլի գլխին աւետարանն» պիտի դառնայ:

Ոսկ ամենայն աշխատող մշակ իւր չափով մի հարուստ է: Եթէ հանքագործութեան հնոցի մօտ աշխատող մշակը՝ օրական 1 ր· 50 կ· վարձ ստացողը՝ կերակրուի բանջարեղէններով, հացով ու օղիով, և շաբաթը ընդամէնը ծախսէ 1 ր· 40 կ·, նա իւր եկամուտից կը մնանէ 7 ր· 60 կ·, որ մի հարբսոտութիւն է: Բայց այսպիսի ծանր աշխատութիւնից նորա դժերը օրէցօր թուլանում են, այնպէս որ նա սիրում է հնոցից հրաժարուիլ և սկսել հասարակ «վահկայութիւնը», որով շաբաթը վաստակում է, ընդամէնը 3 ր·, իսկ իւր ծախքը դուրս գալով, շաբաթը անտեսում է միայն 1 ր· 60 կ· Մ՚իթէ սա լաւ անտեսութիւն է, որով մարդ և հիւծվում և քիչ է վաստակում:

Կերակուրը խորհրդով ընտրելու համար, հարկաւոր է դիտենալ, թէ մեր մարմինը ի՞նչ նիւթերի կարօտութիւն ունի: Մ՚արմինը գոր է, ածում՝ բորակածին և ծծումբ հիւսուածքների (մկունքների, ուղեղի, նեարդերի) կազմութեան համար· ածխածին, ջրածին և թթուածին՝ բջիջների մաշուածքը լրացնելու համար· քոր և երկաթ՝ արիւն բաղադրելու համար· և փոսփոր ու կիր՝ ոսկրների պահպանութեան համար: Այդ բորակածինը պարունակւում է անդրադարձ միջոցների մասնաւորապէս ձուի սպիտակուցի մէջ· ածխածինը, ջրածինը և թթուածինը օսլայի մէջ: Բացի սոցանից կերակուրների մէջ կան ճարպեր, աղեր (հանքային նիւթեր) և ջուր:

Բնասպիտակային մարմիններ առաւելապէս պատրաստ են ձուի սպիտակուցի մէջ· նոքա են կազմում նմանապէս և մսի, պանրի, կաթի և ընդեղէնների էական բաղադրութիւնը:

Օսլան գտանվում է գետնախնձորի, հացազարդների, լոբիների, սիսեռի, ոսպի և այլ ընդեղէնների մէջ:

Ճարպը՝ ձէթի, իւղի, դմակի մէջ:

Աղերը, որ մարմնին տալիս են քոր, փոսփոր, ծծումբ և այլն, շատ անհրաժեշտ նիւթերի երկրորդական բաղադրութիւն են կազմում:

Մ՚նում է իմանալ, թէ օրական անհրաժեշտ համար այս նիւթերից առնուազն որքան է հարկաւոր մարդկային զանազան վիճակներում· որպէս զի ամենայն տանտիրին կարողանայ ճիշդ հաշուով առողջապահ կերակրի պատրաստութիւն տեսնել: Դիտութիւնը ասում է, թէ ներքոյ յիշատակուածներից իւրաքանչիւրը պահանջում է·

	բնասպիտակ գ.*	ճարպ գ.	օսլա գ.
Մանուկը մինչև 1½ տար· հասակը	28	37	75
« 6—15 « «	75	43	325
Հասակաւոր այրը միջակ աշխատիքիս	118**	56	500
« կինը « «	92	44	400
« այրը ծանր «	132	100	500
Ծեր տղամարդը «	100	68	350
« կին առհասը «	80	50	260

Բացի սորանից հասակաւորը օրական գործ է ածում մօտ 6 բաժակ (3 լ.) ջուր և մօտ 32 գ. հանքային նիւթեր:

Հիմա դժուար չէ հաշիւներով իմանալ, թէ անդի մէջ պէտք է պարունակի՝ 3·—4 անգամ աւելի օսլայ, քան բնասպիտակը, 2—10 անգամ աւելի օսլայ, քան ճարպը, 2—3 անգամ աւելի օսլայ, քան բնասպիտակն ու

* 1 գրամն (g) է մօտ քառորդ մխալ, 1 կիլոգրամն (kg) է մօտ 2½ գրուանքայ·

* Այս քանակութիւնից մօտ 106 գ· դիւրամարս պէտք է լինի, Ինչպէս կը տեսնենք, ստամոքսի մէջ զանազան կերակուրների մի և նոյն բաղադրիչ նիւթը հաւասար ուժով չի հալւում·

ճարպը ի միասին. - թէ 1 մաս բնասպիտակին գալիս է 4—5 մաս ճարպ և օսլա.—թէ ծանր աշխատելիս հասակաւոր տղամարդը աւելի է գործածում քան թեթև աշխատելիս՝ 14 g. բնասպիտակ, 44 g. ճարպ և 0 g. օսլա, կամ ընդամէնը 58 g.—թէ տղամարդը աւելի է գործածում կին արմատից՝ 26 g. բնասպիտակ, 12 g. ճարպ, 100 g. օսլա, կամ ընդամէնը 138 g.—թէ զանազան հասակի համար անդրադար նիւթերի բաղադրութեանց համեմատութիւնը որոշակի զանազան է.—թէ եթէ 32 g. հանքային նիւթեր և 3 l. ջուր հեռը հաշուենք, ապա ուրեմն օրական նուազագոյն անունդի կշիռը պիտի լինի՝

տղամարդու (ծ. աշխ.)	3764 g.	կամ 9·18	գրուանիա.
« » (միջ. աշ.)	3706 g.	» 9·05	»
կին արմատի	3568 g.	» 8·70	»
ծեր մարդու	3550 g.	» 8·65	»
» կնոջ	3422 g.	» 8·35	»

Որովհետև մեր անդրադար ուտելիքներից ոչ մէկի մէջ՝ բացի կաթից՝ բոլոր նիւթերը պարտուպատշաճ համեմատութեամբ չեն բովանդակած, իսկ մենք այնքան մի անդրադար նիւթի կարօտութիւն ունինք, ինչպես և մեզ ծնողներին, ուստի կերակուրների պարտուպատշաճ փոխոխմութիւնը գժուարին և խիստ կարևոր հոգսերից մէկն է։ Կարելի է ամենայն օր սեղանին միշտ նոյն նոյն կերակուրները ունենալ, բայց նոցանից ամէնքը հաւասար անդրադար արժէք չեն ունենայ։ Բայց աւելի անդրադատակ կը լինի միշտ միևնոյնի անունդը. զոր օր. սոսկ մսեղինը չի նորոգի մարմնի մաշուած մի քանի մասերը, կամ միմիայն օսլայական անունդը զուրկ կը լինի այնպիսի նիւթերից, որ մենք գործ ենք ածում միսունքների, նեարդների, ուղեղի նորոգութեան համար և այլն։ Այս է պատճառը, որ մենք սովորութիւն ունինք մսի հետ ուտել դեռևս հաց, հացի հետ պանիր կամ իւղ և այլն։ Միշտ ձեռնտու է, որ մեր բնասպիտակի $^1/_3$ մասը ստացուի կենդանական թագաւորութիւնից, այսինքն որ բուսեղէնի հետ մսեղէն ևս ընտրուի (մածուն, պանիր, ձու—այդ հաշուումն են)։ Դարբինների կեանքից նկատուած է, որ ով միայն բուսեղէններով է կերակրուել, տասնը 15 օր հիւանդ է եղել. իսկ եթէ բաւեհատն կերակուր է ընդունել, ընդամէնը 3 օր է հիւանդացել։ Յայտնի է, որ կենդանական թագաւորութենից ստացած բնասպիտակը աւելի լաւ է մարսւում քան բուսեղէն սնունդից (ընդեղէններից, ալրից և այլն), ինչպէս որ այս ակնարկուեցաւ նախընթաց ծանօթութեան մէջ։ Ուրեմն եթէ ուզենանք մեր բորակածնի պէտքը միայն բուսեղէն կերակրով լրացնել, մենք կը հարկադրուինք առաւել քանակութեամբ կերակուր ուտել և ծանրացնել մեր մարսողութիւնը։ Միակողմանի կամ միշտ մի և նոյն սնունդ ունենալով, մեր մարմնին 100 g. բնասպիտակ մատակարարելու համար, պէտք է ուտենք.

գետնախնձոր	7000 g.	կամ	17·0 գրուանիայ
կանեփի եւ պտուղ	20—27000 g.	»	45—62·0 »
միս (տաւարի)	460 g.	»	1·1 »
ձու (16 հատ) . . .	839 g.	»	2·0 »
պանիր	400 g.	»	1·0 »

Ահա թէ ինչ է հետևում միակերպ կերակրի գործածութիւնից։ Որպէս զի մի գաղափար կազմուի, թէ ինչպէս պէտք է փոփոխուի սնունդը, պէտք է մի հայեացք ձգել հետևեալ գունաւոր տախտակի վերայ և տեսնել, թէ մի քանի պատշաճողներ ինչպէս են բաղադրուած։

Տախտակից ինքներին երևում է զանազան նիւթերի %-ը (առ հարիւրը). զոր օր. մեծագոյն քանակութեամբ բնասպիտակ են պարունակում՝

պանիրը	34 %	յորդի մ. (	20 %
ոլոռը	23 %	խոզի մ. (	
տաւարի միսը	21 %	հարիւց ձուկը	19 %

և այլն.

մեծագոյն քանակ. ճարպ են պարունակում՝

խոզի դիակը	99 %	ձուն	12 %
իւղը	84·4 %	պանիրը (յոռ.)	12 %
հարիւցը	17 %	և այլն.	

մ. ք. ջուր են պարունակում՝

բրինձը	78·5 %	ոլոռը	52·5 %
սպիտ. ալիւրը	71·0 %	ցար. հացը	49·0 %
հաճարի «	69·5 %	հաճար. «	47·0 %

և այլն.

մ. ք. ածխ են պարունակում՝

հարիւցը (բացախած)	16·5 %	հորի միսը	2·0 %
պանիրը (յոռ.)	5·0 %	տաւ. »	1·0 %
ոլոռը	2·5 %	և այլն.	

մ. ք. ջուր են պարունակում՝

սագրը	94 %	պտուղը	85 %
կարը (աւերժ հանած)	90 %	գետնախնձորը	75 %
կտաւամբը	88 %	ձուն	74 %
կարը (աւերով)	86 %	և այլն.	

Մենք զանց ենք առնում թէ քանի տեսակ հաշիւներ կարելի է հանել այդ տախտակից, կամ աւելի լրացած տախտակից, որի մասին վէրջը կը խօսենք. բայց և այնպէս մի քանիսը ուշադրութեան առնուլ կարևոր ենք գտնում:

Եթէ հասակաւորի բնութեան համեմատ ճաշին պահանջվում է 50 g. բնասպիտակ, 32 g. ճարպ և 160 g. օսլայ, և եթէ 4 մարդու ճաշ պատրաստելու համար գործ ածուի $^1/_2$ kg. տաւարի միս, $^1/_2$ kg. գեռնախնձոր, $^1/_{10}$ kg. մարգարին, $^1/_2$ kg. հլորի հիւ* և $^1/_8$ kg. շաքար, արդեօք ճաշը դոհացուցիչ պիտի համարուի:—Ոչ. որովհետև ճաշին*

	բնասպ. g.	*ճարպ.* g.	*օսլ.* g.
գործ է ածուել՝	135·4	117·5	160·0
իսկ պահանջում էր՝	200·0	128·0	160·0
պակաս է եղել՝	64·6	10·5	0

*Սերտակուրների ընտրութիւնը շատ կը դիւրանար, եթէ պաշարեղէնների գինը նոյնը լինէր: Սակայն լաւագոյն պաշարից ոմանք՝ ղոր օր. տաւարի և հորթի միսը՝ շատ թանդ են, իսկ միւս նմանապէս սննդարար նիւթերը՝ էժան են: Ցանաւիկինը հարկաւ պիտի աշխատէ, որ կերակուրը ոչ միայն սննդարար լինի, այլ և էժան: Սննդարարներից աւելի էժանն է կաթն ու հացը, քիչ աւելի թանկ է ձուկն ու ընդեղէնները: Մի մանկի լորի, բակլա, սիսեռը՝ 3 անգամ աւելի սննդարար նիւթ են պարունակում քան 1 մանկի միսը. 1 աբասու պանիրը չորս անգամ՝ աւելի սնունդ կու տայ, քան 1 աբասու միսը:***

Որպէս զի ուտելեղէնների սննդական արժէքը որոշուի, մենք պէտք է նախ իմանանք, թէ ղոր օր. 1 աբասու ուտելեղէնի մէջ որքան օսլայ, ճարպ և բնասպիտակ է պարունակած: Ու որովհետև ուսումնականները հաշուել են, թէ նոյն 3 նիւթերի արժէքը համեմատութեամբ է, որպէս 1: 3: 5, ուրեմն ճարպը 3 անգամ՝ բնասպիտակը 5 անգամ աւելի արժէքաւոր է, քան նոյն չափով օսլան: Ապա ուրեմն ստացած ճարպի քանակութիւնը պէտք է 3-ով բազմապատկել, իսկ բնասպիտակի քանակութիւնը՝ 5-ով: Այսպէս կորոշուի իւրաքանչիւր ուտելեղէնի սննդական արժէքը:

Այդ հաշուով 1 kg (գրեթէ $2^1/_2$ ղրուանքայ) ուտելեղէնի մէջ այսքան սննդական արժէքը կը սահանք.

		բազարի գինը		
իւղ	2610	30	*կ.*	*գրուանիվ.*
պանիր	1914	10	*կ.*	»
խոզի մ.	1836	10	*կ.*	»
լորի	1755	6	*կ.*	»
ոլոռ	1735	10	*կ.*	»
պիւր (1 cop)	1328	8	*կ.*	»
հորթի մ.	1157	8	*կ.*	»
տաւարի մ.	1168	6	*կ.*	»
գեռնախնձոր	304	5	*կ.*	»
կաթ	216	2	*կ.*	*բաժակը*

Արդ եթէ այդ բոլոր ուտելեղէնները կէս կէս մանկիի առնելու լինինք, որն աւելի էժան և որն աւելի թանգ կը նստի...

Նոյն հաշիւը կարող էինք և վերևի գուշակուր տախտակից հանել, ղոր օր. ոլոռի համար: Այնտեղից երևում է, որ ոլոռն ունի

23 *մ. բնասպ.* **2** *մ. ճարպ.* **52·5** *մ. օսլա* **—100** *մասի մէջ*
կամ **230** *g.* » **20** *g.* » **525** *g.* » **—1000** *մասի մէջ*

Բայց մենք գիտենք, որ օսլային, ճարպին և բնասպիտակի արժէքները համեմատ են, ինչպէս 1: 3: 5.

$525 \times 1 = 525$	*սննդական արժէք*
$20 \times 3 = 60$	« »
$230 \times 5 = 1150$	« »
գում. **1735**	*սննդական արժէք.*

1 *գր. ոլոռն արժէ* **10** *կ.*
1 kg. « » **25** *կ.*
25 *կ.-ով ստանում ենք* **1735** *սննդական արժէք*
50 *կ.-ով կը ստանանք* **3470** « »

Նոյն հաշուով տաւարի միսը

50 *կ.-ով կը ստանանք* **3893** « »

այսինքն միսը **423** *սննդական աւելի արժէք ունի, քան ոլոռը.*

Որպէս զի մեր տանտիկիններն կարողանան այսպիսի ծանօթութիւններից օգուտ քաղել, նոքա պէտք է նախ և առաջ ունենան մի ընդարձակ տախտակ ուտելեղէնների, որ վերևը ակնարկուեցաւ. հետևեալ ձևի պէս.

* *Մարգարինի և հլորի բաղադրութեանց քանակը տես վերջին տախտակում:*

** *Գերմանիայում ի հարկէ.*

Մի ջենի կերակրելիների միության բրիգադը





ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԻՑ ՈՒՏԵԼԵՂԷՆՆԵՐ

100 մասում պրոտեինները կան	բնատիպ. գ.	ձարպ. գ.	օսլա. գ.	գինը
Ձուն	12·5	12·0	—	ամսական մօտաւոր
Տաւարի միսը	21·0	5·5	—	
Խոզի միսը	20·5	7·0	—	
Խոզի ապուխտը	23·9	36·4	—	
Հորթի միսը	20·0	1·5	—	
Լերդ ու թոքը	19·4	5·4	2·0	
Ոչխարի միսը	17·0	10·0	—	
Սագը	16·0	40·0	—	
Հաւը	17·5	1·4	—	
Ընձուխն	18·5	1·0	—	
Ընուեստ. մսի փոշին	73·0	—	7·0	
Կովի կաթը (սերով)	3·5	4·0	4·9	
» » (ս. հան.)	3·1	0·7	4·8	
» իւղը	0·7	84·4	0·6	
Թանը	3·4	1·0	5·0	
Մարգարինը և այլն	0·4	87·0	0·0	

ԲՈՒՍԱԿ· ԹԱԳ· ՈՒՏԵԼԵՂԷՆՆԵՐ·

100 մասում պրոտեինները կան	բնատիպ. գ.	ձարպ. գ.	օսլա. գ.	գինը
Հաճարի հացը	6·0	0·5	47·0	
» ալիւրը	11·5	2·0	69·5	
Սպիտակ հացը	6·0	0·5	49·0	
Ցորենի ալիւրը	11·0	1·2	71·0	
Կորեկը	11·3	3·5	67·3	
Ոսպը	24·8	1·8	54·7	
Կաղամբը	1·9	0·2	4·8	
Խնձորը (չաքարաձ)	0·4	0·8	12·0	
Տանձը (չաքարաձ)	0·4	0·2	12·0	
Շլորը (չաքարաձ)	0·8	0·8	11·0	
Ծիրանը (չաքարաձ)	0·5	1·2	11·0	
Սպանդը	2·0	0·3	6·0	
Մանանեխը	28·5	35·5	25·9	
Ղահուէն	14·5	12·5	18·5	
Շաքարը	—	—	90·0	
Շլորի չիրը և այլն	3·3	0·9	45·0	

100 մասում պրոտեինները կան	բնատիպ. գ.	ալիւմին. գ.	օսլա (շարժումը ծոխիտ) գ.	գինը
Շոեժարանի գարեջուր	0·49	3·68	6·7	
Գորշ »	0·5	—	8·0	

Բայց պէտք է յուսանք, որ մեր մանուկները կը հոգան այսպիսի մի լիակատար ցուցակ կազմել մեր տեղական ուտելեղէնների և խմիչքների համար. գերմանացին զանազան Wurst-եր (երշիկներ) է ուտում իսկ մենք՝ խաւեար, գոշ, զուրկիկ. նոցա ձկները, նոցա պանիրները այլազան են, քան մերը. նոքա խմում են գարեջուր, մենք՝ գինի, օղի, թէյ և այլն: Ուրեմն նոցա տախտակները մեզ չեն օգտի:

Ս. Մ.

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ,

ԺԹ· ԴԱՐՈՒՄ:

Ա. ՀՈՎՍԱՆ 1839—1874:

Տիրացու Բաբա Համբարձում Մարգսեան (1768—1839)·—Հայոց արդի ժողովրդական գիտեն ու զարգացումը·—Երաժշտական ժողովներ կ. Պոլսում·—Իննսնական միջոց (1864—1873)·—Շարականը ժողովրդավարելու առաջին փորձեր:—

Տիրացու Բաբա Համբարձումի ծնողները Խարբերդցի էին: Հայրը՝ Սարգիսը, քաղաքի հարստահարիչ հարկահաւանների ձեռքից ազատուելու համար, ընտանիքն առած կ. Պոլիս է տեղափոխուում. այստեղ 1768-ին ծնուում է Համբարձումը: Երբ մեծանում է, հայրը նորան դերձակութեան է տալիս. նա յաջողութեամբ սովորում է այդ արհեստը, բայց քիչ յետոյ, ժամանակի նշանաւոր հայ ճարտարապետի՝ Գրիգոր ամիրայ Պալեանի մօտ գրաւչութեան պաշտօն է ստանում:

Դարուս հայոց եկեղեցական երաժշտութեան մէջ Համբարձումը յայտնի է իբրև մի տաղանդաւոր Տիրացու,[1] երբ հասակն առնում է, Բաբա մակդիրն էլ է աւելանում, ուստի Տիրացու Բաբա Համբարձում է կոչուում: Նա յաջող ձայն և երաժշտական մեծ ընդունակութիւն ունէր. նուագում էր թամբուրը. քաջ աւղեակ էր արևելեան բազմաձիւղ եղանակներին և բազմաստեղծ ամենանկներին, որ ուսել էր թիւրք ղէրվիշ երաժիշտներից. հմուտ էր Ցուէնց եկեղեցական խազերին և երաժշտութեան: Հայոց եկեղեցական երգեցողութիւնը սովորում է նաև, ըստ ոմանց, Զէննի մականուանեալ ամուսնաւոր սարկաւագ Պօղոս վարժապետից (1646—1726) (ամենայն Հայոց ընտրեալ կաթուղիկոսի՝ Յովհաննէս Պատրիարք Վարժապետեանի պապը)· սա ակնյայտնի սխալ է, որովհետև Համբարձումը ծնուել է 1778-ին՝ ուրեմն վարժապետի մեռնելուցը յետոյ. իսկ ըստ ոմանց՝ Մասխալաձի կոչուած մի հայ երաժշտից. թուի թէ ծանօթ էր և Ներսէսեան երաժշտութեանը:

Դիւզեան Յովհաննէս Չէլէբին նկատում է տիրացու Բաբա Համբարձումի երաժշտական ընդունակութիւնը և առնում է իւր հովանու տակ, մինչև իսկ բնակարան յատկացնում իւր պալատում: Այդ միջոցին, Ղալաթիոյ լատինաց Ս. Գէորգ եկեղեցու բակում «լուսաւորչեան դպրոց» է բացուում: Յովհաննէս

1. Տիրացու էին կոչուում եկեղեցական երաժիշտները:

Չէլէբին տիրացու Բարա Համբարձումին եւ կեղեցական երգեցողութեան պաստառու է նըշանակել տալիս այդպէս: Համբարձումը շաբաթական երկու դաս է տալիս եւ, շատ շուտ, մեծ հռչակ է սանուում իւր դասատուութեան նոր ոճով:

Երկար փորձառութիւնը նորա մտքում յղացնում է այն միտքը, թէ՝ անհրաժեշտ է ձայնանիշ ունենալ շարականի երգեցողութիւնը դիւրացնելու եւ հոգեւոր երգերն անկորուստ պահպանելու համար: Շատ չէ անցնում միտքըն իրագործում է. հնարում է արդի ձայնանիշներն ու ամանակները 1839-ին, մահից մի քանի ամիս առաջ, իսկ թերին լրացնում են աշակերտները, եւրոպական երաժշտութեան հետեւողութեամբ, մասամբ նորա կենդանութեան ժամանակ, մասամբ մահից յետոյ: Կարծիք կայ, իբր թէ նախքան Համբարձումը կային այդ ձայնանիշները եւ պահուում էին Դիւրինանների մօտ, որտեղից Համբարձումի ձեռքն են անցնում եւ նա մշակում ու հրատարակ է հանում: Բայց հաւանական չէ. ժամանակակից, ականատես անձինք այդ դիւտի պատիւը միաբերան վերագրում են իրաւամբ նորան:

Տիրացու Բարա Համբարձումը ձայնանիշների եւ ամանակների ձեւն առնում է հայկական հին խազերից, բայց արաբական անուններ է դնում. որովհետեւ իւր փորձերն էլ կատարում էր տաճիկ—արաբական նուագարանի՝ Թամբուրի վերայ, ուր ամէն լար իւր յատուկ արաբերէն անունն ունի: Հայկական անուանադրութիւնը արդէն աւելի ուշ ժամանակի եւ նորա աշակերտների գործն է:

Սոքա շուտով նկատեցին ձայնանիշների բազմազանի անուններից անյարմարութիւնը, ուստի կրճատելով Թոդին միայն առաջին վանկը: Անունների կրճատումն առաջ բերաւ նոր փոփոխութիւններ. ունինք Եւրոպական անուններն սկսեցին գործածել. Նղիա Ծատուեանը (+ 1881) ré-ի տեղ ըա, la-ի տեղ լի եւ այլն փոխելն էր առաջարկում իսկ ամենք փորձեցին ձայնաւոր տառերով կոչել: (Այսպիսի խառնաշփոթութեան ժամանակ Ցաքիրներն էլ Օսմանլը նօթասը՝ Օսմանեան ձայնանիշ հրատարակեցին, առանց մտադրութեան, թէ աջից ձախ գրուող խոտորկոտոր գրերին ձախից աջ շարուած ձայնանիշները յարմարել չեն կարող):

Ամանակների կամ տեւողական նշանների թերին լրացնում է Բարա Համբարձումի աշակերտներից Արիստակէս Յովհաննիսեանը՝ (+ 1878) այսինքն $^4/_4$, $^3/_{32}$ եւ $^3/_{64}$ ամանակներ: Թէ ով է յարմարացրել ամանակների հայկական անուանադրութիւնը, չգիտենք: Համբարձում Բարան տաճիկ—արաբական դիւմ թէք, թէքէ, թէյէք, քէսրէ եւ այլն անուններով էր սովորեցնում այն զանազանութեամբ, որ նորա երաժշտական տաղաչափութեան մէջ աջ եւ ձախ ձեռքերի վերու վայր ճոխատրոփ շարժողութեամբ է բաղխուհներ միմեանցից որոշուում, իսկ նա աջքի, ձեռքի եւ մատների վեր ու վայր բազմանի վերածելով, որն եւ անուանում էր դիմէք. ամանակների հայկական անուանակոչութիւնը, թուերի վերածելը՝ բան Եւրոպականին, նորա աշակերտներից է ծնացել: Բարա Համբարձումի տեւողական նշաններն այն յարմարութիւնն ու առաւելութիւնն ունէին արեւելեան երաժշտական տաղաչափութեան նկատմամբ որ տաճկական կենաւոր ոտանաւորների ամանակների դործադրութեան ըմբռնումը միանգամայն հեշտացաւ. բոլոր ոտանաւորները նա վերածեց մի բաղմանի արժէքի: Այս պրուքթեամբ աւելորդ եղան տաճիկ—արաբական բազմանուն, խառնաչփոթ, անդործնական եւ անհեթեթ Սէմաի, Աղը Սէմաի, Դէվրիբէյանի, Զէնջիր, Աքսաք, Աքսաք Քէրիր, Զարրիֆէթ, Փահթէ, Դիւյէք, Մուհամիէզ, Զէմզէմ, Դէվրի Քէբիր, Բէրէվշան, Իւրութ Սէմաի, Էվասէթ, Հաֆիֆ, Սաբիւ, Զիֆթէթ Դիւյէք, Նիմ Սաբիւ, Նիմ Դէվիր, Ռէմլ, Էֆէլ, Հէզէջ, Փրէնգիֆէր, Սօֆիան եւ այլն, եւ այլն, կոչուած հազար ու մի անպէտք չափերի անուններով աշակերտների գլուխները ուռցնելը:

Ձայների գօրութեան արտայայտիչ նշաններն (՝, ՝՝, ՝՝՝ եւ այլն) աւելացրին Բարա Համբարձումի աշակերտները՝ գլխաւորապէս Արիստակէս Յովհաննիսեանը եւ սորա աշակերտ տիրացու Գաբրիէլ Երանեանը (+ 1860): Տիրացու Գաբրիէլը եւրոպական ձայնագրութեան տարերքին առաւել ծանօթ էր, քան ժամանակակից տիրացու երաժիշտները. սա էր ազգային երգերն տարածման մեծապէս նպաստողը, ուստի ժողովուրդը նորան Նօթաչի հռչակեց:

Չհետեւում ենք այդ բոլորի համեմատական ցանկը ներքեւում. որովհետեւ եւրոպական ձայնանիշների կազապարն առ ձեռն չունինք, ուստի, ձայնելիքի կիսաձայնական գրութիւնը որոշակի պատկերացնելու համար, գործածեցինք լատինական տառերը, որոնք ընդհանուր են: Փակագծերի մէջ առնուածները չեն համաձայնում ձայնաստիճանով. արեւմտեան F եւ Fis ձայնները մի քիչ ցած, իսկ Ais եւ H-e բարձր են արեւելեան Աբաք-

Դվիճյա եւ Քիւրդի Սիգեահ ձայնասաիճանները. այդ պատճառով E, F եւ H, C-ի արեւելեան ձայնասաիճանի մէջ մտնում են Աչեմ եւ Փուսելիք կիսաձայնները: Այսպէս արեւելեան ութնեակը բաժանուում է երկու քառեակի, որոնց մէջ կիսաձայների տասիճանը հաւասարաչափ եղնում եւ իջնում է: Ուրեմն արեւելեան կիսաձայնական եղեկը ութնեակի մէջ պարունակում է 15, իսկ արեւմտեանը՝ 13 կիսաձայն, որովհետեւ Նբրապահանում Eis = F-ին եւ His = C-ին: Արաբականը մինչեւ անգամ քառորդ ձայն եւ քառորդ ձայնական աստիճանով եղեկը ունի:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԻՍԱՁԱՅՑՆ ԵՂԵՒԿՔ.

Թիւ	Ձեւ	Տաճկ. անուն.	Հայկական անուն.	Հատառօս.	Եւրոպական.	Տառ.	Տետեահան.	Լատին.
1.	𝅗𝅥	Նքդեահ	Փուշ.	Փօ.	Ré.	Ա.	բա.	D.
2.	♯	Փէս Հիսար	Փուշ կիսվեր.	Փօ կիսվեր	Ré dièse.	—	—	Dis.
3.	𝅗𝅥	Աչիրան.	Լկօրձ.	Լ.	Mi.	Ե.	—	E.
4.	♯	Փէս Աչէմ.	Լկօրձ կիսվեր.	Լ կիսվեր.	(Mi dièse).	—	—	(Eis).
5.	𝅗𝅥	Արաք.	Վերնախաղ.	Վէ.	(Fa).	Է.	—	(F).
6.	♯	Դեվեշտ.	Վերնախաղ կիսվեր	Վէ կիսվեր	(Fa dièse).	—	—	(Fis).
7.	𝅗𝅥	Բաստ.	Բենկորձ.	Բէ.	Sol.	Ը.	—	G.
8.	♯	Զէրպիւլէ.	Բենկորձ կիսվեր.	Բէ կիսվեր	(Sol dièse).	—	—	Gis.
9.	𝅗𝅥	Դիւգեահ.	Յոսպովային.	Յօ.	La.	Ի.	լի.	A.
10.	♯	Քիւրդի.	Յոսպովային կիսվեր.	Յօ կիսվեր	(La dièse).	—	—	(Ais).
11.	𝅗𝅥	Սիգեահ.	Ներքնախաղ.	Նէ.	Si.	Ո.	—	(H).
12.	♯	Փուսելիք.	Ներքնախաղ կիսվեր.	Նէ կիսվեր	(Si dièse).	—	—	(His).
13.	𝅗𝅥	Զարգեահ.	Պարոյկ.	Պա.	Do.	Օ.	—	C.
14.	♯	Հիջազ.	Պարոյկ կիսվեր.	Պա կիսվեր	Do dièse.	—	—	Cis.
15.	𝅗𝅥	Նէվա.	Փուշ.	Փօ.	Ré.	Ա.	բա.	D.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՈՒԹՆԵԱԿՆԵՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Արեւելեան.	1.	9/8.	5/4.	11/8.	3/2.	5/3.	11/6.	2.
Արեւմտեան.	1.	9/8.	5/4.	4/3.	3/2.	5/3.	15/8.	2.
	C.	D.	E.	F.	G.	A.	H.	C.

Տիրացու Համբարձումն ու աշակերտները հայկական ձայնագրութիւնն արդէն պրկել-կապալու չափ մշակել էին, երբ նորա աշակերտները զանազան ուղղութիւնների սկսեցին հեւաւել և եկեղեցական երաժշտութիւնը փոխանակ մշակելու և պարզելու, խառնեցին ու պղտորեցին: Տիրացու Համբարձումի անբռանիկ աշակերտներից Պետրոս Չէօմլէքչեանն ու սորա աշակերտները սկսեցին մեծ ջանք թափել տաճկական մեղկ եղանակները մեր եկեղեցական երաժշտութեան մէջ մուծելու համար: Դժբաղդաբար, պրեմէ բոլոր ձայնագէտները նորա շեղ և խորթ ուղին էին բռնել: Ոմանք, գեա եւրոպական ձայնագրութեան հիմնական տարերքը չըմբռնած, արեւմտեան երաժշտական ոպէ ուզեցին ներշնչել հոգեւոր երգերին: Մի քանիսն էլ առաջարկում էին յունաց եկեղեցական երաժշտութեամբ հայկականը պրպտրել:

Մինչդեռ հայոց եկեղեցական երաժշտութիւնը մի շարք երաժիշտ և իմաստակ տիրացուների ճաշակի կամ կրքի խաղալիք էր դարձել, Կ. Պոլսից հայոց Պատրիարքարանը ազգային եղանակները մօտալուտ կորստից ապահովելու համար գործի պրեմ անցաւ: Այս բարի ձգտումն իրագործելու և գործին ուղիղ ընթացք տալու համար, հարկ համարուեցաւ, որ Կ. Պոլսի բազմահարթիք և ինքնահաւան տիրացուներից մի յանձնաժողով դուռմարուի: Պատրիարքարանը գործի դեկավարութիւնը յանձնեց ուսումնական խորհրդին:

Ուսումնական խորհուրդը, 1864-ին, սեպտեմբերի 25-ին, հրաւիրագրեր ուղարկեց բոլոր տիրացուներին, որով խնդրում էր առաջիկայ կիրակիին՝ հոկտեմբերի 2-ին, Ղալաթիոյ (Կ. Պոլսոյ թաղ) հայոց եկեղեցու սենեակներից մէկում մի երաժշտական ժողով գումարելով հայոց եկեղեցական եղանակների կարգաւորութեան մասին հոգալ: Բայց Կ. Պոլսոյ բազմաթեակ տիրացուներից երկուսն են միայն ներկայանում՝ Արիստակէս Յովհաննիսեան և Նիգիա Տնտեսեան, որոնք աւանդապահ և ակամուտ երաժիշտ տիրացուներ էին: Ժողովը տեղի չէ ունենում: Մի երկրորդ հրաւիրագիր է առաքուում 1864-ին դեկտեմբերի 8-ին, որով տիրացուներին հրաւիրում են Ազգային կրօնական ժողովին ներկայանալու: Այս անգամ արդէն մեծամասնութիւնը բարեհաճում է գալ: Այստեղ որոշում են, որ տիրացու երաժիշտները մի մանաժողով կազմեն և եկեղեցական եղանակները բա-

բեկազմելու հոգ տանեն։ Ջուէարկութեամբ բնարուած են մանաւանդ ովի համար անպամներ։ բայց առաջին իսկ նիստից յետոյ ժողովը խափանուած է և անպաճեները ցրուած են անմիջապէս։

Այս անյաջողութիւնն աւելի ևս խրախուսեց տիրացուների կամայականութիւնն ու երևակայութիւնը։ Անյաջողութեան հետևանքը մի նոր հոսանք յառաջ բերեց,—անհատական ձաշակի երաժշտութեան հոսանք։ Խուժդուժական բազմաթիւ մեղեդիներ, տաղեր, ՏԷր — ողորմեա՛ներ, Ամէն և ընդ հոգւոյդ քուա՛ներ, Քրիստոս պատարագեալ՛ներ, մի խօսքով տաճկական Շարքի, Թիւրքի, Մանի, Նանի եղանակներով պատարագի արարողութիւններ, ծաղկագիր տետրակներով, հոգածութեամբ գրուած, իւրաքանչիւր ինքն իւրեն երաժշտագէտ համարող տիրացուի կողմից աշակերտներին և երգեցիկ մանուկներին իբր անգին պանձ, աւանդ տրուեցաւ, որոնց նմուշներն այսօր էլ երգուում են Ցաճկահայաստանի բոլոր վայրերում՝ մայրաքաղաքիցն սկսած մինչև վերջին գիւղական եկեղեցիները։

Մենք անձամբ ճանաչում ենք այդ ողորմելի շրջանի ներկայացուցիչներից շատերին։ Սոցանից մեկը Բ... քաղաքի տիրացուն, գերազանց առաջնորդի բազձանքով, մի նոր պատարագի արարողութիւն էր գրել, որը և մեզ ցոյց տուեց պարծանքով՝ իւր սին հանճարով ոգևորուած։ Այս խղճուկ պատարագի երգեցողութիւնից ահա մի քանի նմուշ յառաջ ենք բերում.

Զարգեահ.

Ծանր.

ե բ ևա բ բ ա բ

Օրհ նեալ է, Աստ ուա

ՀԲ թե բա ՀԲ թԲ ՀՔԲՈՀ թո.

Ջ

ե բ ՀՀ ա բա ՀԲ ՈՀՀՐ

Քրիս տոս պա տա րա գեալ բա շ

Բ Ի ՀՔԲՈՐ ՈՀՎԲՐ ՐՈՀՐՈՀՐ

խե ր մի ջի մե

ՈՀՐ ՀՈՀՐ ՔՐՔՔՐՀ ՐՀԲՀ ՈՀՐՐ

լոե՛. ա լէ

ՈՀՐ Բ

լու հա։

ՀԲՐ ՈՀՐ ՀՈՀ ՐՀ ՀԲՀ ՈՀՐ

Օ լհ նե ց է Ք Ը Ղ

ԵՀ Ի Բ ԹԲՀ ՔԲՐ ՈՈՀՈ ՈՀՐ

ակր ա մե նայն հրե շ տա կք

ՔՀՔ ՀՔՐՐ ԹՀԹ ԹԲՀ Ի ԹՀՔ ՐՀԹ

նո լրա ա լե

ՀՐՐ ՀԲՐ ՀՀՈ

լու հա ։

ՔՐ ՈՀՐ Ի ՀԲՐ ՔՐՐ ՈՈՎԲՐՈՈ

Օր հ նե ց է Ք

ՔՀ ՔՐՐ Բ Ի ԹՐ ՔՐՐ ԹՀ ԹՀՐ

Ը Ղ նա ա մե նա

Ի ՀԲՀ Ի ՈՀՐ ՀԲՐ ՔՀՔ ԹԲՀ

ին պօ լրա թիւ նք

Թ Ի ՀՀՀՐՀ Ը ՔՀ ԹՀԲ ՈՀՐ ՀՈՀ

նո լրա ա

Հ Ո ՀԲ ՈՀՐ ՀԲԹ Հ Ը

լե լու

ՀՐՈՈՐ ՈՀՀԲ Բ

հա ։

Ծ՚անր.

Բ՚ՈՀՐ Հ Հ՚Ը՚Ի Ր՚ՈՀՎԲՈՈՐ Բ՚ո Բ՚Բ՚ՈՀՐ

Նկե յո ան լր շնո ր-

Հ՚Բ, Հ՚ԲՀՎ Ր՚ՈՀՎԲՈՈՐ Ը՚ՈՈՐԲ՚ՈՈ

Հեա ան լր շնո ր-

Ի՚ՎԲՈՈՐ՚Ի ՀԲ՚ՈՀՀՀՈՀՀ՚Բ Է ո

Հեա ան լր ։

ՈՀՐՈՈ Ր՚ՈՀՐՎՐՈՈ՚Ը Ի՚ՎԲՈՈՐ՚Ի Ր՚ՈՀՎԲՈՈՀՎԲ

Շնոր հեա ան,

Ի՚ո Ը՚ՈՈՐԲ՚Ը՚ՈՈ Ր՚Ի՚ՎԲՈՈՐ՚Ի Հ՚ԲՀՀՈՀՀ՚Բ

ր՚ շնո ր հեա ան

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Ահա այս շրջանի ակնդեցական երաժշտութիւնն աչքի է ընկնում իւր անձնաշակ, եթէ չասենք անհամեստ, գոնէ խառնիխուռն, երաժշտական աւիւնից խափան զուրկ՝ ձայնանիշների կուտակումով. այլ ևս չենք ասում եղանակի և բառերի ներքին խմնամի կատարեալ անհամաձայնութեան մասին. մինչդեռ խօսքերը մարդկութեան Փրկչի և եկեղեցու Մեծ Վարդապետի կենաց ամենանուիրական րոպէներից մէկն են պատկերացնում և հաւատացեալին վրկութեան հաղորդակից լինելու յորդոր կարդում, եղանակի վերնագիրն (Զարդեհ) արդէն պղտորում է մարդու միտքն ու սիրտը, այն պատկերացմամբ՝ թէ դա արևելեան այն բազմաձիւղ եղանակներից մէկին է, որ սրճատնոցներում, հասարակական կեր ու խում վայրերում է միայն երգուում և ընդունակ է ոգևորելու միայն դուսան—աշուղներին և նոցա առաջ պարողներին:

Սանձարձակ սիրացուների շրջանը տևեց 1864—1873-ը, երբ ազգային եկ. երաժշտութեան համար մի նոր շրջան է սկսում:

Յիշեալ ժամանակաշրջանում աւանդապահ սիրացուները կլ ձեռք գարկին իրանց հաւանած հոգևոր եղանակները ձայնագրելու, որ գոնէ եղածն ապառնին անկոչ սիրացուների ձանկերից: Այսպէս պէտք է յիշենք, որ խակ սիրացուներին թև ու թիկունք տալին տեղական առաջնորդներից մի քանիսը, մասնաւանդ Կ. Պոլսոյ պայծառափայլ ամիրաները, էվէլիպենները և առ հասարակ ունևոր և կարող անհատները, որոնցից ամէն մէկը մի մի սիրացու հովանաւորում կերակրում էր, ուսում եկեղեցական եղանակները մէկին հազար պատուով տալիս:

Շարականը ձայնագրելու առաջին փորձն արաւ երաժիշտ սիրացու Բաբա Համբարձումը իւր նոր հնարած ձայնանիշներով 1839 թուին. ձայնագրեց մինչև ս. Զատկի օրհնութիւնը «Այսօր յարեաւ»-ը, բայց վերահաս մահը դործն ընդհատեց. կարճ ժամանակից յետոյ ձայնագրածներն էլ անյայտացան: Երկրորդ փորձն արել է երաժիշտ Նիկիա Ծնեոսեանը և աւարտել 1870-ին: Երրորդ ձայնագրողն է Համբարձում Հիւրեանը, որ ցարդ Արմաշու պարեվանքում դաս է տալիս եկեղեցական երդեցողութիւն և ձայնագրութիւն. սրա մասին գրում է Նիկիա Ծնեոսեանը. «Այս գործին ուրիշներ ալ կարելի է ձեռնարկած լլլան, բայց ասենցմէ՝ հանգուցեալ Պալեան Կարապետ ամիրայի աստուածեռնամբ ձայնագրածը միայն ծանօթ է մեզ. որ թէ և մեծ գործ մ'է, սակայն մէկ երգողի, մէկ ձայնագրողի՝ այսինքն երկու կարծիք է. և չունի այն քննական ուղղութիւնը, որ անհրաժեշտ է այսպիսի ձեռնարկութեան մը համար. միանգամայն՝ ինչպէս կնշմարուի, ձայնագրողը քիչ շատ յանգուցն փորձեր բրած է՝ մեր եղանակները տաճկականին վերայ սրբագրելուց: Այս կարծիքին հաստատուն ենք. մեր ձեռքումն էլ կան նորա ձայնագրութեան կանոնաւորիչ էական քարտուղներ, որոնք իրաւունք են տալիս, ինչպէս կանանենք, Ծնեոսեանի գրածը հաստատելու: (Տես այս մասին երկրորդ շրջանի պատմութիւնը): Ասում են, թէ Արիստակէս Յովհաննիսեանն էլ է ձայնագրել, որպէս և զոյգ ուրիշ սիրացուներ, բայց մեզ յայտնի չեն:

Առաջին շրջանը փակուում է մի երրորդ երաժշտական յանձնաժողովով, որ տեղի ունեցաւ 1873-ին, ապրիլի 22-ին և տևեց երկու տարի չափ՝ մինչև 1875-ի վերջերը:

Յանձնաժողովի առաջին նիստին ներկայ են լինում ընտրուած 14 անդամներն էլ. երկար վիճաբանութիւնից յետոյ, ոմանք, անձնական կրքերի համար բաւարար անունդ չգանելով, հեռանում են անմիջապէս. մնացածները ձայների մեծամասնութեամբ վճռում են քննութեան առնել Նիկիա Ծնեոսեանի ձայնագրած շարականը և հոգևոր երգերն, իրրև առաւել յարմարաւոր գործ, և ապագրութեան հոդսը քաշելու միջոցներ որոնել: Մեզ յայտնի չէ, թէ արդեօք յանձնաժողովը վերջացրեց իւր պարապմունքներն այս շարականի նկատմամբ, թէ ոչ, կամ թէ ինչ եղաւ և արդ մոռացայ այդ գործը. բայց այսքան միայն գիտենք, որ 14 ընտրեալներից շատն է միայն մինչև վերջ շարունակում անդամակցել:

(Շարունակելի).

Կոմիտաս վարդապետ.

ՄԱՆՐԱԼՈՒԹՒՆ.

Արուեստական ատամների ազդեցութիւնը մարդկանց բնաւորութեան վրայ: — Շատ անգամ է նկատուել, որ արուեստական ատամներ կրող մարդիկներից շատերը, որոնք առաջ բարեսիրտ եւ հեզահամբոյր բնաւորութեան տէր էին, այդպիսի ատամներ կրելուց յետոյ դառնում են զայրացկոտ եւ բծախնդիր: Ամերիկացի մի բժշկի կարծիքով, այդ օտարոտի հանելուկի լուծումը պէտք է որոնել արուեստական ատամների մետաղի շերտերի մէջ, որոնք պատում են ընդերքը եւ կողքերից ամրանում են ոլորտագիծ զսպանակներով: Նորա կարծիքով՝ երկու տարբեր մետաղներից կազմուած այդ պահպանակներն առաջացնում են վոլտեան աղեղի հիմնական տարրը եւ դորա հետեւանքն այն է լինում, որ լորձունքի թթուեցնող ազդեցութեամբ յառաջանում է անվնաս ելեքտրական հոսանք: Չի կարելի չմեղքանալ այդպիսի անճնաւորութիւններին, ասում է նա, որոնք ստիպուած են լընդերքների մէջ զետեղել իսկական էլէքտրայոյզներ, որից ելնող անվնաս էլէքտրական հոսանքները, թէեւ շատ թոյլ չափով, բայց եւ այնպէս, գրգռուած դրութեան մէջ են պահում նոցա նեարդային համակարգութիւնը: Ինչպէս յայտնի է, ելեքտրական հոսանքի անցնելը կարելի է զգալ բերանով, օրինակ եթէ հեռագրական մարտկոցի հաղորդչի հետ միացնենք մի մետաղէ լար եւ լարի ծայրը դնենք ատամների վրայ: Այդպիսի դէպքերում բերնում զգացւում է նոյնպիսի թթու գրգռի ազդեցութիւն, որպիսին թողնում է զելտերի ջուրը: Այդպիսի անղաղար գրգիռներին ծնօտները ընտելանում են եւ այլ եւս չեն զգում նոցա անհաճոյ տպաւորութիւնը· բայց էէլէքտրական թոյլ հոսանքի ազդեցութիւնն այնուամենայնիւ շարունակւում է եւ հետեւաբար պէտք է այդ ազդեցութիւնն էլ երեւայ մարդկանց բնաւորութեան վրայ:

*
* *

Կօլա կամ սուդանի սուրճ: — Հասարակածային Աֆրիկայի արեւմտեան ափերում բուսնում է առատութեամբ մի տեսակ ծառ՝ Sterculia acuminata անուամբ, որ տալիս է մի տեսակ պտուղ՝ շագանակի մեծութեամբ, կինամոնի գոյնով, որը տեղացիք կոչում են „կօլա“: Բնիկները վաղուց հետէ գործ են ածում այդ պտուղն իբր կերակուր, իսկ հանդէս հարմ եւ զարմանալի յատկութեան համար մինչեւ Աֆրիկայի ամենից աւելի գործածական պտուղներից մէկն է: Բացի դորանից կօլա ընկոյզները նեգրները գործ են ածում իբր մանր, փոխարինելու դրամ՝ կենսական պիտոյքներ գնելու ժամանակ: Կօլա ընկոյզը կոչուում է եւ „գուրա“ կամ „գուրու“ ընկոյզ, իսկ հիւս· Աֆրիկէում „քուսսի“. ծախուում է եւ քուած, որը կոչուում է „սուդանի սուրճ“ եւ տեղական արդիւնաբերութեան գլխաւոր ծիւղերից մէկն է կազմում: Բնիկները կօլա ընկոյզին վերագրում են կատարեալ հրաշալի յատկութիւններ: Այսպէս օրայդ պտուղը ծամելուց յետոյ կարելի է խմել ամենավնասակար եւ վատ ջուր, առանց վնասուելու, շատ լաւ պահպանում է ատամները, իսկ դորա եփուցքը կամ մզուածքը, իբր խմելիք, պակասեցնում է մարմնակազմի համար կերակրի եւ ջրի պահանջը եւ մեծնոյն ժամանակ տալիս է առոյգութիւն եւ ոյժ, աւելացնում է եռանդը եւ աւելի աշխատելու ընդունակութիւն է պարգեւում: Ճանապարհորդները պատմում են, որ նեգրներն առանց ուտելիքի եւ խմելիքի, միայն կօլա ընկոյզ ծամելով, աֆրիկայի կիզիչ արեւի ճառագայթների տակ ահագին ճանապարհ են անցնում, առանց որեւէ յոգնածութիւն զգալու: Վերջերս կօլան գրաւել է եւ Եւրոպացիների ուշադրութիւնը: Ի մէջ այլոց Ֆրանսիական ալպեան ճանապարհորդների ակումբը պատրաստել է տուել կօլայի խառնուրդով շօք (galette) և կրկնեփ (biscuit) եւ իւր արած փորձերից յետոյ խորհուրդ է տալիս լեռների վրայ ճանապարհորդողներին կամ սարեր բարձրանալ սիրողներին անհրաժեշտաբար գործ ածել այդ տեսակի շօք կամ կրկնեփ: Այդ տեսակ շօք գործածելով՝ Ֆրանսիացի սպաները կատարել են երկու հազարեակ զինուորական տեղափոխութիւն առանց որեւէ յոգնութիւն զգալու· իսկ մի Ֆրանսիացի գնդապետ իւր աշակից—սպայի հետ բարձրացել է Պերննեան լեռների 2800 մետր բարձրութիւն ունեցող գագաթը՝ 12 ժամուայ ընթացքում, կէս ժամ միայն հանգստանալով, որի ժամանակ վերջին 6 կիլոմետրը (5 վերստ, 500 սաժ.) տարածութիւնը բարձրացրել է մի այն մի ժամում: Նոյնպիսի յաջող ելք է ունեցել վերջերս՝ Հնդկաստանում Անգղիացի բժիշկ Ֆիրսի փորձերը յիսուն զինուորի վրայ: Ռուսաստանումն էլ եղան մի քանի փորձնական հետազօտութիւններ՝ կօլա ընկոյզի մարդու մարմնակազմի վրայ թողած ազդեցութեան մասին եւ ոուս բժիշկների ցուցումներն եւս բոլորովին համապատասխանում են Ֆրանսիացի Մոննէ, Մոնավօնա եւ Պերու հեղինակների ցուցումներին,—թէ կօլան յիրաւի ունի զարմանալի գրգռիչ յատկութիւն, նուազեցնում է մարմնակազմի կենսական սպառումը, միեւնոյն ժամանակ աւելացնելով նորա ոյժն ու եռանդը՝ հակառակ միւս գրգռիչ միջոցների (ոգի, եթեր, սրճիտ եւլն·), որոնք թէեւ աւելացնում են եռանդը, բայց ի վնաս մարմնակազմի: Ուսուցչապետ Եանովկու կարծիքով կօլայի գործածութիւնը օգտակար է ոչ միայն այն դէպքերում, երբ ֆիզիքական մեծ աշխատանք է պահանջւում առողջ կազմուածք ունեցող՝ բայց սոված եւ յոգնած մարդուց, այլեւ ամեն տեսակ հիւծող եւ մաշող հիւանդութիւնների ժամանակ:

ԱԶԳԱՅԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՏԱՐԱԳԻՐ ՉԱՒԱԿՆԵՐԸ.

Պանդխտութեան հարցը յաճախ լսօքի և ղրի առարկայ է եղել մեր մէջ· իրաւամբ համարուել է նա մեր ժամանակակից ապրելի կեանքի ամենակարեւոր հարցերից մէկը, ամենավիրաւոր մի կողմը: Եւրոպական շատ երկրների համար պանդխտութիւնը, կամ աւելի ուղիղ մտքով՝ գաղթականութիւնը մի անհրաժեշտ պահանջ է· նոցա մէջ մարդիկ այնչափ բազմացել են, որ այլեւս ամենքը բուն հայրենիքում անուն գտնել չեն կարող, շա-

աւերը սարսռած են հեռանալ և նոր հայրենիք որոնել. ուսոի այդ երկրների կառավարութեան գլխաւոր հոգսերից մէկն է դուրսը, սահմանաւոր վայրերի երկրներում գաղթավայրեր գրաւել, ուր կարելի լինէր բնակեցնել մայր երկրից եկածներին, թոյլ չտալով խզել նորա հետ քաղաքացիութեան կապերը։ Միեղանում պանդխտութիւնը բոլորովին տարբեր հանգամանքներից է յառաջ գալիս և ոչ թէ անհրաժեշտ մի պահանջ է մեր հայրենիքի համար, այլ մի անպայման անդարմանելի չարիք. անդարմանելի ի հարկ է այն պատճառաւ, որ նորան յառաջ բերող հանգամանքները մեծ մասամբ ազգային շրջանակից դուրս են և ուրեմն մեր իրրև հայ մարդոց, ազգեցութեանը անմիջապէս չեն ենթարկուում։ Նկել են ժամանակներ, որ պանդխտութիւնը իւր բարի հետևանքներն էս ունեցել է. օտարութեան մէջ գտնուող հայերը մեծ հարստութիւն ձեռք բերելով, քաղաքակրթի ժողովրդների հետ ունեցած շփմամբ կրթուելով և նոր գաղափարներին, նոր աւելի ընդարձակ աշխարհայեցողութեան տէր դառնալով, հոգ են տարել և միջոցներ գործ դրել թեթևացնելու իրենց թշուառ հայրենիքում ծնացած ազգակիցների ծանր վիճակը՝ նորա կրթութեան և հոգևոր վերաշինութեան գործի համար զոհաբերութիւններ են յանձն առել։ Այժմ այդպիսի բարի հետևանքներ շատ աւելի սակաւ չափով է ունենում պանդխտութիւնը. օտար երկրներ գաղթած հայերը ոչ միայն այնչափ նիւթական և բարոյական կարողութիւն չունին, որ իրենց ազգակիցներին օգնեն, այլ և առհասարակ կարօտ են նորա օգնութեան։ Ցիրաւի պանդխտութիւնից վերադարձողները շատ անգամ հարստութիւն իրենց հետ բերում են՝ որոշ չափով աշխարհաճանաչութիւն են բերում և քաղաքակրթութեան սկզբներ մտցնում հայրենիքի ամենախաւար անկիւնները բայց նորա բերում են նաև կիսաքաղաքակրթի աշխարհի բազմաթիւ ախտերն ու մոլութիւնները, որոնք շատ աւելի կործանիչ ազդեցութիւն ունին այստեղ՝ ազգային կեանքի մի շարք ամրութիւններ կորցրած ասիական ժողովրդի վերայ, քան իրենց բուն հայրենիքում։

Սակայն խօսել առհասարակ պանդխտութեան մասին և նորա հետևանքները թուել՝ մեզ շատ հեռու կտանէր. մեր նպատակն է միայն մի քանի խօսքով յիշեցնել այստեղ, թէ ինչ պարտականութիւններ ունինք դէպի օտարութեան մէջ գտնուող հայերը և ինչ կարող ենք անել նոցա համար։ Ինչպէս ասացինք, նոքա կարօտ են հայրենիքում ծնացածների օգնութեան։ Այդ օգնութիւնը կարող է զանազան կերպով լինել, բայց մեզ առաջնորդող տեսակէտն այն պիտի լինի անշուշտ, որ նոքա կապուած մնան իրենց ազգին, իրենց հայրենիքի հետ և շարունակեն օգտակար լինել նորան։ Կապել հայրենիքի հետ ամենից գժուարին խնդիրն է և այդ յառաջ տանելու համար մենք ամենից պակաս միջոցներ ունինք։ Ցայտնի է, որ նոյն իսկ շատ աւելի մեծ և փառաւոր ազգութիւններից կարուած անհատներ և համայնքներ հեշտութեամբ կապուում են իրենց նոր հայրենիքի հետ և մոռանում հինը. օտարութեան մէջ ապրող առաջին սերունդը միայն բնազդաբար կապուած է իւր նախկին հայրենիքի հետ, երկրորդ, երրորդ սերունդի համար ծննդավայրը գառնում է իրօք հետզհետէ, նաև հայրենիք, և միայն անկենդան գաղափարական յիշողութիւններ են պահում նոքա հայրենական երկրի համար։ Բարոյական կապերն են, որ հեշտութեամբ չեն խզուում և ամենազօրեղ բարոյական կապը, որ մի ցրուած ժողովրդի անգամներին իրար հետ և իրենց անցեալի հետ կապել կարող է՝ քրիստոնէական եկեղեցին է։ Եկեղեցւոյ գաղափարական միութիւնը աշխարհային պայմաններից անմիջապէս կախուած չէ։ Նոյն եկեղեցւոյ անգամները կարող են գտնուել կլիմայով և քաղաքակրթութեամբ բոլորովին տարբեր և միմեանցից շատ հեռու գտնուող երկրներում։ բայց մի շարք աշխարհային պայմաններ, որոնք անցեալում եկեղեցական կեանքի զարգացման հետ անմիջապէս կապուած են եղել, նորա շնորհիւ նուիրական նուիրութիւն են ստանում և պահում իրենց հեղինակութիւնը գարէ ի գար նաև այն սերունդների աչքում, որոնց համար այլ պայմաններն այլևս անմիջական նշանակութիւն

չունին։ Այսպէս են օրինակ եկեղեցւոյ գաղափարի հետ կապուած ազգութիւնն ու հայրենիքը։ Շատ անգամ կրկնուած ճշմարտութիւն է, որ օտար երկիրներում հայերը, լեզուի և ամեն ազգային սովորութիւն մոռանալով՝ շարունակում են իրենց հայ անուանել այն դէպքում միայն, երբ իրենց անդամ են ճանաչում ազգային եկեղեցւոյ օտար տեղում մարդիկ մոռանում են իրենց հայրերի ծննդավայրը՝ իրենց հայրենիքի բնական զեղեցկութիւնները, նոյն իսկ պատմական յիշատակները նոցա չեն գրաւում. բայց գրաւում են այն սրբավայրերը, այն ուխտատեղիները, որոնց հետ կապուած է իրենց կրօնական կեանքը։ Հետևաբար, եթէ, մեր ցանկութիւնն է, և մենք պարաք ենք զգում նպաստելու, որ մեր օտարութեան մէջ ցրուած ազգակիցները ամուր պահեն իրենց անցեալի հետ կապող բարոյական կապերը, պէտք է, առաջին աշխատանք, որ ամուր մնայ նոցա կապը ազգային եկեղեցւոյ հետ, որ այդ եկեղեցին շարունակէ օրչափ կարելի է մեծ չափով բարոյական ազդեցութիւն գործել նոցա վերայ։

Այս խորհրդածութիւնները անելու առիթ եղաւ մեզ Ամերիկայից՝ բոլոր ազգերի այդ ամենամեծ գաղթավայրից, ստացուած մի գրութիւն, որից կարևոր ենք համարում քաղել հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնները։

Հայերի թիւն Ամերիկայում մօտ 10,000 են հաշուում, որոնցից 6000 և աւելին Բոստոնում և մինչև 3 ժամ հեռաւորութեան վերայ գտնուած շրջակայ տեղերում են ապրում, իսկ մնացեալները ցրուած են Չիկագոյի մօտերքում, Փիլադելֆիայում և ուրիշ տեղեր։ Այս բոլորի մէջ հաղիւ 250-ի չափ ընտանիք լինի։ Վաճառականութեամբ պարապողների թիւը 25-ից աւելի չէ. առհասարակ հաղիւ 5—7% անկախ պարապմունք և ապահով ապրուստ ունին. մնացած մեծագոյն մասը առնահասարակ և ամենաքիչ վարձ բերող բանուորութեամբ պարապելու ստիպուած է. այն էլ մօտ 20% սոցանից վերջին տարիները գրեթէ շարունակ առանց գործի է մնում։ Բնականաբար այսպիսի պայմանների մէջ նոցա վիճակն աւելի քան աննախանձելի է։ Ըստ մեծի մասին բոլորովին տգէտ լինելով, նոյն իսկ հայերէն գրել կարդալ չիմացող, և հազիւ միայն 5% տեղական լեզուին ծանօթ՝ նոքա չեն կարողանում ի հարկէ յաջողութեամբ մրցել կրթութեամբ իրենցից շատ աւելի բարձր, շրջապատող հանգամանքներին ընտել տեղացիների կամ եւրոպացի եկուորների հետ, շփումն են ունենում միայն ամերոյի ամենաստորին խաւերի հետ և ամենավատ, ամենաանբարոյականացուցիչ ազդեցութիւնների ենթարկուում. եթէ աւելացնենք դորա վերայ նաև անսովոր կլիմայի, վատառողջ բնակարանների, վատ սնունդի ազդեցութիւնը՝ զարմանալի չպէտք է երևայ այն ժամանակ տեղական հայ բժիշկների տուած քստմնեցուցիչ տեղեկութիւնը, թէ 50% սոցանից վարակուած է զանազան հիւանդութիւններով։ Այսպիսի նեղևալ դրութեան դըէլ խաւեր մի պատճառ պէտք է համարել նոցա կրօնական, հոգևոր, բարոյական մոլութիւնից գրեթէ բոլորովին զուրկ լինելը։ Ինչպէս յայտնի է, Հայերը մինչև այժմ մի եկեղեցի միայն ունին՝ Ուստր քաղաքում, ուր Տաճկաստանից իբրև հովիւ ուղարկուած վարդապետները, հասակաւոր հին կարգի մարդիկ լինելով՝ դժուար կարող էին, իրենց պաշտօնը կատարելուց զատ, տեղական պայմաններըն ուսումնասիրելու և ընդարձակ շրջաններում ազդեցութիւն ձեռք բերելու տենչ և եռանդ ցոյց տալ։ Վերջերս տեղացիների խնդրանօք և Վեհափառ Հայրապետի հրամանով Ամերիկա ուղարկուեցան Արմաշու Դպրեվանքի սաներից երկուսը՝ Մաշտոց և Վաղինակ վարդապետները. առաջինը Ուստրի համար և երկրորդը Պրովիդենսի, ուր նոյնպէս մի հայկական համայնք է կազմակերպուել և մի հովուի համար տեղ պատրաստել։ Թէ և երկու համայնքներն էլ նիւթական անձուկ վիճակի մէջ են և առատ վարձատրութիւն իրենց հովիւներին տալ չեն կարող, բայց պէտք է յուսալ, որ երկու երիտասարդ, ուսումնատենչ և լաւ պատրաստուած հոգևորականներ այդ և նման զրկանքներ արհամարհելով պիտի կարողանան շուտով անգլիերէն լեզուին հմտանալ և կրօնական, մանաւանդ թէ գործնական, կեանքի մէջ այնչափ եռանդ ու բազմակողմանի հմտութիւն ցոյց տուող ամերիկացիներից շատ բան սովորելով՝ քաջարթուն հովիւներ պէտք է լինին բուռն նշանակութեամբ, բարի օրինակ գառնան և ասպարէզ բանան ուրիշ իրենց նմանների համար։ 10,000 հոգուց բազկացած մի ցրուելայ հօտի բոլոր կարիքներն ի հարկէ այսպիսով հոգացուած չեն լինի։ Բօրդ ընկերութիւնը, առանց դաւանութիւն ի նկատի առնելու՝ մի հայասէր միսիոնար և 8 բողոքական հայ պաշտօնեաներ է կարգել հայերի համար զանազան քաղաքներում։ բայց նոքա շատ քիչ բարոյական և կրթական ազդեցութիւն են ունենում ոչ միայն հայ եկեղեցուն պատկանող, այլ նոյն իսկ բողոքականութիւն ընդու-

նած Հայերի վերայ, որոնք ամբողջի 10 ֊/֊ են կազմում միայն։ Այստեղ եկող փոքր ի շատե կրթուած Հայերից մեծ մասը ամերիկական միսիոնարների դըպրոցներում են ուսել. բայց դաստիարակուած չլինելով ազգային հոգւով՝ նոքա այն եռանդը, այն անձնուիրութիւնը, այն ոգևորեալ սերը դէպի իրենց ազգակիցները ունենալ չեն կարող, որ անհրաժեշտ էր այսպիսի մի տեղ առանց անձնական շահերի գործելու և արդիւնք բերելու համար։

Անգլիկան եպիսկոպոսական եկեղեցին, որ Բօրդ ընկերութեան և առհասարակ բողոքականների, Հայոց մէջ ունեցած միսիոնարական գործունէութեանը ամենևին համակիր չէ և Հայոց եկեղեցին իրրև «Առաքելական քոյր եկեղեցի» է ընդունում՝ պատրաստակամութիւն է ցոյց տալիս ոչ միայն իւր դռները Հայոց առաջ բանալու, երբ կամենան որ և է կրօնական պաշտամունք կատարել, այլ նաև նիւթապէս նպաստելու, որ Հայոց եկեղեցւոյ կողմից հովիւներ նշանակուին անհնամ մընացած համայնքների համար։ Հանգուցեալ Յ. Խաչումեան Բոստոնում եղած ժամանակ յաջողել էր բարեկամների գործակցութեամբ կիրակնօրեայ ժամասացութիւն կազմակերպել այնտեղի ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ։ Այժմ նոյն գործը վերսկսել և շարունակում է Աւետիս Սէլեան անունով կեսարացի մի եռանդուն երիտասարդ, որ Վէրմոնտ նահանգի համալսարանում երկրագործական մասնաճիւղն աւարտելուց և Չիկագոյում կատարելագործելուց յետոյ այժմ ի միջի այլոց աստուածաբանութեան դասախօսութիւններ է լսում Կէմբրիջում (Բոստոնի մօտ)։ Այդ երիտասարդը սկսած Չիկագոյից, ուր մի քանի տարի առաջ ժամասացութիւն է կազմակերպել և ազգ. գրադարան հիմնել, բազմաթիւ հայաբնակ տեղեր պտտելով՝ աշխատել է պանդուխտ ազգակիցների ցաւին ի մօտոյ ծանօթանալ, ազգային, բարոյական, կրօնական կեանք արծարծել նոցա մէջ։ Այժմ ամեն կիւրակէ առաւօտ նա ժամասացութիւն է ղեկավարում և քարոզ խօսում Բոստոնում (որի համար թեթև դրամական նպաստ է ստանում եպիսկոպոսական եկեղեցուց), իսկ ճաշից յետոյ փոփոխակի լինում և Բրայտընում։ Յանկալի չէր արդեօք, որ այս երիտասարդի օրինակին հետևողներ գտնուէին ոչ միայն այդ և ուրիշ պանդխտութեան երկրներում, այլ նաև այստեղ մեզանում, ուր նման կարիքներ շատ կան. ցանկալի չէր մանաւանդ, որ գտնուէին Անգլիկան օտար եկեղեցւոյ ներկայացուցիչների օրինակին հետևող կարողութեան տէր ազգայիններ, որոնց սրտին նոյնչափ ցաւ ազդէր իրենց սեփական ազգակիցների անմխիթար դրութիւնը և որոնք նիւթական և բարոյական նպաստներով ձեռնտու լինէին հասնելու նոցա այդ դրութիւնից. օրինակի համար, թոշակ կապելով ճեմարանաւարտ կամ գոնէ դըպրանոցաւարտ երիտասարդների և քահանայ ձեռնադրել տալով՝ պանդուխտ Հայերի մօտ, նոյն իսկ Ամերիկա ուղարկէին, ուր այնտեղի զարգացած կրօնական—գործնական կեանքի մէջ նոքա կսովորէին, թէ որչափ բան կարող է անել մի քահանայ (թէկուզ կուսակրօն), երբ պաշտօն չէ կատարում միայն, այլ հովուում է հօտին՝ Քրիստոսի աշակերտին վայել արթնութեամբ, և ապա Հայրենիք վերադառնալով՝ այստեղ էլ քաջարթուն, բազմափորձ հովիւների օրինակ կլինէին ու կնպաստէին գուցէ իսկական հովուութեան գաղափարը մտցնելու մեր մէջ։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Գեր. Տ. Խորէն եպիսկոպոսը, Արժ. Տ. Թադէոս (Առաքելեան) և Տ. Յովհաննէս (Բազունի) վարդապետները մեկնեցան իւրեանց վանահայրութեան պաշտօնատեղերը. առաջինը՝ Երիմու ս. Խաչ վանքը, երկրորդը՝ Թիֆլիզի ս. Սարգիս եկեղեցին, (վարելու է նաև ս. Էջմիածնի կալուածների կառավարչի պաշտօնը), իսկ երրորդը՝ Մակուայ ս. Թադէոս առաքելոյ վանքը։

Վերադարձաւ ս. Էջմիածին Գեր. Տ. Եսայի Արքեպիսկոպոսը, որ դէտ անցեալ տարի մայիսին հրաժարական էր տուել Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի առ սղնորդութիւնից՝ անձնական տկարութեան պատճառով։

Փոխանորդական գործով ս. Էջմիածին եկաւ Ալէքսանդրապօլի յաջորդ Տ. Յովհաննէս վարդապետը (Ճիրակունի) և այս քանի օրս կմնայ իւր պաշտօնատեղին։

Մայր Աթոռի տպարանի գործով մեկնեցաւ Թիֆլիզ Տպարանական ժողովի անդամ Ընորհ. Ղուկաս սարկաւագը։

Արժ. Տ. Եփրեմ վարդապետը հրամանաւ Նորին ս. Օծութեան կարգուեցաւ անդամ միաճ. Կոնսիստորիային Հայոց Բիշնևի։

Արժ. Տ. Եսայի վարդապետը (նախկին վանահայր ս. Թադէոսի վանքի) նշանակուեցաւ միաբան Հառիճայ վանուց և մեկնեցաւ ս. Էջմիածնից իւր վանքը։

ԱՌԱՔԵԼ ՊԱՏՄԱԳՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԺՈՂՈՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ։

Սոյն տարուայ փետրուարի համարում ներկայացրած հաշուի համաձայն ունէինք 200 ռ. նոյն նպատակի համար ստացել ենք՝

	ՌՈՒԲ.
Արժ. Տ. Բոլհաննէս վրդ. Շիրակունուց	10
Բարեկրօն Կոստանդին քահ. Կոստանեանից (Ալէքսանդրապոլ.)	2
Մեծ. Պարոն Կարապետ Կոստանեանից	5
„ „ Ս. Մանդինեանից	1
Գնրմանիայի հայ ուսանողներից՝ Շնորհ. Գարեգին սարկաւագի ձեռքով	3
Գումար.	19

Նախկին 200 ռ. գումարի հետ ունինք ստացած մինչև այժմ 219 ռ.

17 մայիսի.

ՂՈՒԿԱՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԱՂԱԲԵԼԵԱՆՑ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Գ. ՁԵՄԱՐԱՆ.

Առ 28 ապրիլի տարուոյս Ճեմարանիս հանգուցեալ ուսուցիչ Վարդան Արովեանի որբերի անունով ստացուած նուէրների գումարն էր ընդ ամէնն 2928 ռուբլի 77 կոպէկ. մայիս ամսի ընթացքում ստացուեցան նուէրներ, ա) Բագուից Հ. Եղիշէ քահ. Գեղամեան՝ ուղարկեց բարեպաշտ սիրին Յովնում Պօղոսեանի կողմից յիսուն ռուբլի. բ) Ախալցխայից պ. Հայրապետ Աւագեան Բուզդանեան ուղարկեց չորս ռուբլի և գ) 800 ռուբլու 4% արժէթղթի մասի տոկոս ստացուեցաւ 7 ռուբլի 60 կոպ. ընդամէնն 61 ռուբլի 60 կոպէկ։ Առ 28 մայիսի ստացուած նուէրների գումարն է 2990 ռուբլի 37 կոպէկ։

Վեհափառ Հայրապետի հրամանով Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի վարչութիւնն յայտնում է ի գիտութիւն հասարակաց, որ աշակերտների թիւը լրացած լինելով, առաջիկայ սեպտեմբերի ամսին նոր աշակերտների ընդունելութիւն լինելու չէ. ուստի և Ճեմարան մտնելու ցանկութիւն յայտնողների խնդիրները կը մնան առանց հետևանքի։

Տեսուչ Ճեմարանի՝

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ.

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Քաղաքական ժողովն գումարելով ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, և ատենապետութեամբ Ստեփան փաշայի, խորհրդակցութեան գլխաւոր նիւթ ունեցաւ Արլոց խնդիրն, որոյ վրայ ամենեն առելի խորհուեցաւ և խօսուեցաւ։ Ասսիկ Պատրիարքարանի Դիւանատունէն հաղորդուած տեղեկութիւնները ժողովոյն անօրինութեանց վրայ։—

1.—Ժողովը լսելով Արլոց նկատմամբ Ս. Պատրիարք Հօր հաղորդած տեղեկութիւններն և տնօրինութիւնները, առժամանակեայ Խնամակալութիւն մը կազմից՝ նորին Սրբազնութեան նախագահութեան ներքև, անդամակցութեամբ Կրօն. ժողովոյ գեր-ատենապետ Տ. Վահրամ Եպս.-ի, Քաղաք. ժողովոյ գեր-ատենապետ Սէթեան Մ'իհրան էֆ.-ի, և պաշտօն յանձնեց նոյն Խնամակալութեան՝ սահմանել որբոց վերաբերեալ նախապատրաստական կարգադրութիւններն, որբերը փոխադրել և զետեղել տալ, միանգամայն պատրաստել որբոց խընամածութեան վերաբերեալ յատուկ Կանոնագիրը։ 2.—Ր. Դրան կողմէ ի Պատրիարքարան ղրկուած ըլլալով Կարնոյ Առաջն. Տեղապահ Տ. Յովսէփ վրդպ.ի և Գաղատիոյ Առջն. Տեղապահ Տ. Տաճատ վրդպ.-ի պաշտօնին պէտք եղած հրամանագիրը, ժողովն որոշեց հրաւիրել այս Առաջն. Տեղապահները մեկնիլ իրենց պաշտօնատեղին։ 3.—Երուսաղէմի միաբան Տ. Եղիշէ վրդպ. Չիլինկիրեան Բաղէշի Առաջն. Տեղապահ կարգուեցաւ։ 4.—Թարձել Երուսաղէմի մրաբան Տ. Դանիէլ վրդպ. Յակոբեան Երզնկայի Առաջն. Տեղապահ կարգուեցաւ։ 5.—Ադր. Պոլսոյ Գաւառական Ընդհ. ժողովն՝ ըստ հրահանգի Կեդր. Վարչութեան՝ առաջն. ընտրութիւն կատարած և տեղեկագիրը ղրկած էր, որմէ կը յայտնուէր թէ Տ. Համայեակ Եպս. Դիմաքսեան Առաջնորդ ընտրուած է։ ժողովը քննելով տեղեկագիրն, հաստատեց ընտրութեան օրինաւորութիւնն. և Առաջնորդ կարգեց զՏ. Համայեակ Եպս։ 6.—Տիվրիկի նորընտիր Առաջն. Տեղապահ

Պէրպէրեան Տ. Ներսէս վրդպ. կը հրաժարէր իր հիւանդագին վիճակին յայտնելով։ Ժողովն որոշեց բժշկական քննութեան տեղեկագրի մը վրայ տալ այս մասին որոշումն։ 7.—Ս. Նախագահն յիշելով Ջունդ Ասպետի մահը տեղեկութիւն տուաւ այն հիմնարկութեան վրայ, զոր հանգուցեալ Ասպետ յատուկ կանոնագրով մը հաստատած էր իր կենդանութեան. աղքատ և ուշիմ ուսանողներ իր ծախիւք Եւրոպիոյ բարձրագոյն ուսումնարանները ղրկելու նպատակաւ։

— Կրօն. ժողովը իր վերջին նիստին մէջ որոշեց անպայման ժամանակաւ փիլոնազրկութեան դատապարտել Իւսկիւտար Նոր Թաղի Ս. Կարապետ եկեղեցւոյ Տ. Արիստակէս քահանայն, իր կինը թողլով՝ ապօրէն կենակցութեամբ ապրող ադթար Ճարութիւն ըսուած անձին յուղարկաւորութիւնը հանդիսաւորապէս կատարած ըլլալուն համար, մինչդեռ՝ ըստ հրահանգի՝ մէկ քահանայ միայն մարմինը գերեզմանատուն պիտի առաջնորդէր, առանց երգեցողութեան ի ճանապարհին։—

— Որոշ խնամակալութիւնն երկու գումարուեցաւ Պատրիարքարանի մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, և ի ներկայութեան Տ. Վահրամ Եպիսկոպոսի, և Սէթեան Մհրան էֆ.-ի, Ս. Նախագահը ծանոյց թէ չորս կուսակալներու անձամբ նամակ գրելով, խնդրած է որ հաճին պէտք եղած դիւրութիւններն ընձեռել որբերուն ճամբայ հանման համար և հրահանգներ ղրկած է Առաջնորդարաններուն՝ կարևոր զգուշութեանց համար։ Որոշուեցաւ որ արդէն խնդրուած 220 որբերէն, զատ՝ 120 որբեր ևս ուղուին։ Ասոնք պիտի ընտրուին այն որբերուն մէջէն որք ո՛չ հայր, ո՛չ մայր ունին, և ո՛ և է ստացուածքէ կամ սեփականութենէ զուրկ, բացարձակապէս անոք և չքաւոր։ Որովհետև ուրիշ ուրիշ տեղացի ազգայինք դժկամակութիւն ցուցած են որբերին իրենց մէջէն հեռացնելու, որոշուեցաւ նաև Շրջաբերականով մը հարցնել տեղւոյն ազգային պաշտօնէութեանց թէ որբերն իրենց գտնուած տեղը պատրաստելու և խնամարկելու համար ինչ միջոցներ կրնան ցոյց տալ։

— Քաղաք. Ժողովը որոշեց 230 որբ բերել տալ գաւառներէն, իւրաքանչիւր կեդրոն 10-ական հատ, և զանոնք պատսպարել Ազգ. Որբանոցին մէջ։ Թեմական պաշտօնէութիւնք մինչև ծովեզր փոխադրութեան ծախքը պիտի հոգան. ամէնէն աղքատ թեմերուն դրամական օգնութիւն պիտի ըլլայ այս նպատակին համար. իսկ ծովեզերքէն մինչև Պոլիս բերել տալը Պատրիարքարանն ինք պիտի ստանձնէ։

— Ս. Պատրիարք Հայրն հրահանգ ղրկեց Ամասիոյ առաջնորդական տեղապահ Տ. Նիկողոս Վ. Գրանկլեանի՝ Շապին Կարահիսար երթալու և ազգային գործերը տնօրինելու ի բացակայութեան Տ. Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեանի, որ Պատրիարքական հրամանաւ Կ. Պոլիս կուգայ։ Շապին Կարահիսարցիք Պատրիարքարանէն խնդրած են, որ շնորհ ընէ ետ կանչել Ամբրոսիոս վարդապետն. որովհետև դրամի և ուրիշ խնդիրներու առթիւ իր և թեմականներուն մէջ անհաշտելի երկպառակութիւն մտած է։ Այս խնդրոյ մէջ գլխաւորապէս երկու թուանշանք կ'յիշուին, մին 25 ոսկիի, միւսն 200 ոսկի։ Առաջին գումարը կ'ներկայացնէ այն ամնականը զոր Տ. Ամբրոսիոս վարդապետ կ'պահանջէ իբրև իր իրաւունքն, և երկրորդ գումարը կ'ներկայացնէ այն նպաստն, որ Պատրիարքարանէն ղրկուած էր Շապին Կարահիսարի և մանաւանդ Թամզարայի արկածեալ կարօտեալ ազգայնոց համար, և եօթն ամիսէ ի վեր Տ. Ամբրոսիոս վարդապետ այս գումարը վար դրեր է ի հաշիւ իր ամնականին (թիւ 1 գումարը)։ Տրապիզոնի Նախորդ Առաջնորդական Տեղապահի համար Նիքսարի գումարն, իսկ Շապին Կարահիսարի Առաջնորդական Տեղապահին համար Թամզարայի գումարը միևնոյն նշանակութիւնն ունեցեր են։

— Աղթամարայ Կաթուղիկոսական Տեղապահ և Վանայ Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Վ. Հեռագիր մ'ուղղելով Ս. Պատրիարք Հօր, կը նկարագրէ թէ տեղւոյն հացակարօտ աղքատները, գլխաւորապէս գիւղացի, իրեն կը դիմեն և ինք չէ կարող զանոնք գոհացնել, իր տրամադրութեան ներքև նպաստի գումար մը չունենալու համար։ Զը կրնալով հետևաբար նիւթապէս մխիթարել այս խեղճերը, նախամեծար կը համարի թողուլ Առաջն. Տեղապահի պաշտօնը, և քաշուիլ Աղթամար։ Պատրիարքարանէն փոքրիկ գումար մը ղրկուեցաւ՝ հաց բաշխելու համար ամենէն աւելի կարօտեալներուն։

— Որբերու ճանապարհածախսի համար Ափիոն Կարահիսարի ազգայնոց մէջ հաւաքուած 300 ոսկին յանձնուեր է Ս. Պատրիարք Հօր։

—Տ. Համայեակ Եպս. Դիմաքսեան Էմիրնէի առաջնորդութենէն հրաժարական տուած է։

— Արմաշու միաբան Տ. Մաշտոց Վարդ. Փափուկեան, որ կը գտնուէր ի Ռուսճուգ, մեկներ է Ամերիկա։ Ս. Հայրապետին կողմանէ իրեն յանձնուած պաշտօնն ստանձնելու։

— Վերջին երկու շաբաթուան մէջ վառնայէն 4—500 ազգայինք մայրաքաղաքս գարձան։ Պոլսեցիք իրենց տուները ղրկուեցան, իսկ գաւառացիք շոգենաւ տարուեցան՝ իրենց հայրենի գաւառը ղրկուելու համար։ Կ'ըսուի թէ Պուլկար կառավարութիւնը երեք շոգենաւ յատկացուցեր է՝ Պոլիս գառնալ ուզող Հայ գաղթականաց, որպէս զի նաւուղէբի չը գոյութեան պատճառաւ աւելի ևս մեծ թիւով ազգայինք գառնան ի Պոլիս։

— Թալասի մէջ ևս Ամերիկեան Մ'իսիոնարը որբանոց մը հաստատած են՝ 50—60 Հայ մանուկներու համար։

— Զուիցերեան Բողոքական մարմին մը, որ փոքր Ասիոյ աղքատաց ողորմելոյ համար նպաստ հաւաքած էր, Պ. Պատրիարք Հօր ղրկեր է 2000 ֆրանքի գումար մը, խոստանալով աւելի ղրկել յառաջիկային, պայմանաւ որ ամսական եօթը ոսկի նպաստ յատկացուի Ազգ. Հիւանդանոցի յարակից հաստատելի Որբանոցին։ Ն. Սրբազնութիւնն ալ որոշեր է որ յանուն այս մարգասէր ժողովոյն մնայուն կերպով 14 որբ խնամուին արդի Որբանոցին մէջ։

— Ազգ. Հիւանդանոցի Որբանոցին կրթական հոգը, ըստ Ուսումն. խորհրդոց և Հիւանդանոցի Հոգաբարձութեան համախորհուրդ որոշման, պիտի յանձնուի յատուկ Խնամակալութեան մը, որուն պիտի անդամակցին երկու անդամք Հոգաբարձութենէն և երկու անդամք Ուսումն. Խորհրդէն, այս վերջինք իրրև խորհրդատու անդամք։

— Ս. Պատրիարք Հայրը Զատկի առթիւ փոքր նպաստ մը ղրկեց Ուրֆայի որբերուն։

—Պատրիարքարանէն 500 ոսկւոյ գումար մը Վան և 500 ոսկի ալ Թոքատ ղրկուած են կարօտելոց բաժնուելու համար։ Ս. Պատրիարք Հօր հրամանաւ Վան ղրկուած վերոյիշեալ գումարին մեծագոյն մասը պիտի յատկանայ գիւղացւոց պէտքերուն։

— Ռուսական դեսպան Մ. Նելիւօֆ Պատրիարքարան գալով, փոխադարձ այցելութիւն ըրաւ Ս. Պատրիարք Հօր, որ Ս. Գէորգայ տօնին առթիւ շնորհաւորած էր Ռուսիոյ գահաժառանգ Կէորկիոյ մեծ դքսին տօնախմբութիւնն։

— Աւստրեան հիւպատոսարանն ի վաճառ հաներ է հանգուցեալ Ասպետ Քուինի ի Պէօյիւքտէրէ ունեցած ծովեզերեայ տունն, որոյ վաճառքը կը պատկանի Երուսաղէմի վանքին, իսկ արժէքը պիտի յատկանայ Քուինեան Հաստատութեան, ըստ հանգուցելոյն կտակին։ Երուսաղէմի Վանքն պիտի ստանայ վաճառման գնոյն ⅓ 3ը։ Կ՚ըսուի թէ 1400 ոսկւոյ գնահատուեր է տունը, թէև Ասպետն ի կենդանութեան կը յուսայ եղեր մինչև 2500 ոսկւոյ ծախել զայն։

— Էրզրումի պզոյտական աղքատիկ աղջիկներու, Ս. Զատկի առթիւ, 110 ձեռք զգեստ նուիրուեր է Պ. Կարապետ Եզեանցէ, և 43 ձեռք՝ տեղւոյն Ռուսական հիւպատոսին կողմանէ, ձեռամբ Պ. Գէորգ Աբուլեանի, անցամ՝ Ցեսչութեան Սանասարեան վարժարանի։

— Իզմիրի Աղքատախնամ ընկերութեան տեղեկագրէն կերևի թէ ընկերութիւնը 1896–97 տարեշրջանին մէջ 15,590·50 ղրշ·ի մուտք և 10,073·50 ղրշ· ելք ունեցած է։ Պատրաստ դրամն է 5517 ղրշ· Այս մուտքը գոյացած է գլխաւորապէս Իզմիրի հայ հասարակութեան նուէրներովը։ Ընկերութիւնը ծախք բրած է գլխաւորապէս աղքատներու և պանդուխտ գաւառացիներու ուտելստ, ճամբու ծախք ու գործ հայթայթելու համար։ Աղքատախնամը իրաւունք ունի Իզմիրի հայ հասարակութեան բոլոր համակրանքն վայելելու։

— Վեց ամիս առաջ հայ բողոքական երիտասարդ մը, Գարեգին Քոնտուրաճեան, յանուն Ըբնէնար Ալմանի (սուրիական ճիւղի ընկ·) 21 մանչ, 10 աղջիկ որբեր հաւաքելով Երուսաղէմ տարած էր։ Ասոնցմէ զատ քաղաքի ընկերութիւնն ալ Բեթլէհէմի մէջ 20 որբ ընդունած էր։ Այս երկու որբանոցներն ալ գերմանական են. առաջին օրը միայն երեք ժամ կը դասախօսէ և մնացեալ ժամերուն տղոց շաղախ պատրաստել կուտայ, գործածելով զանոնք իրր բնեղէն։ Այս որբերէն երկու հատը, Հօրհղբօրորդի իրարու, Խորէն և Նշան, այս չարաչար աշխատութեան չկրնալով տոկալ կը թողուն որբանոցը և կը մեկնին։ Ասոնք նախնեաց օր կը հասնին Կ. Պոլիս. ոստիկանութիւնը զանոնք կը յանձնէ Ազգ. Պատրիարքարանին, որ իր կարգին կը ղրկէ Ս. Փրկչի որբանոցը։

«Բիւզանդիոն» Մասիս»։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ։

ՔՂԵՂԻՈՆՔ Ի ԱՆՊԱՏԱՒ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ.

Կոնդակ Յանուն Տ. Թադէոս քահանայի Նոր Բայազիտոյ, որով շնորհի նմա կոչումն աւագ քահանայութեան. Թ. 330։

— *Յանուն Տ. Դրիգոր քահանայի Բիւնքէլի - Ակմէյա գեղջ Կարուց վիճակի, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 331։*

— *Յանուն Տ. Վարդան քահանայի Վարդաշատայ, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 333։*

— *Յանուն Տ. Բարսուղիմէոս քահանայի Բեզճան Ստաւրապօլոյ, որով շնորհի նմա կոչումն աւագ քահանայութեան. Թ. 345։*

— *Յանուն Տ. Արիստակէս քահանայի Վանեցւոյ, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական. Թ. 349։*

— *Յանուն Տ. Վահան քահանայի Մաւիկոնեան Երևանի, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական. Թ. 350։*

— *Օրհնութեան յանուն խնամակալ հոգաբարձութեան հայկական կրթական սրբանոցի որ ի Կիպրոս. Թ. 351։*

— Ցանուն Սինօդի Ս. Էջմիածնի, որով պատուիրի կարգել գՏ. Թադէոս վարդապետն Առաքեան վանահայր Ս. Սարգսի վանից Տփղեայ և կառավարիչ կալուածոց Ս. Աթոռոյս ի քաղաքին. Թ. 360:

— Ցանուն Գէորգ Ազգայի Կրասիլնիկեան Նոր Նախիջևանցւոյ, որով կարգի գանձապետ Ս. Էջմիածնի յեկեղեցին Ս. Աստուածածնի. Թ. 372:

— Ցանուն Մկրտչի Պօղոսեան Դարբանդցւոյ, որով կարգի գանձապետ Ս. Էջմիածնի յեկեղեցին քաղաքին. Թ. 373:

— Հաստատութեան Հոգաբարձութեան Նկեղ.—ձի. ուսուցմնարանաց Նկատելիւնօգուտի. Թ. 374:

ՎՐԻՊԱԿ.

Ապրիլի համարում սխալմամբ 178 էջի փոխարէն տպագրուած է 168 և այնպէս շարունակուած է մինչև վերջը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ.

1. Քրիստոնէի գերակայ գաղափարը Գ. Ս. . 185
2. Նկեղեցին եւ աղքատների խնամատարութեան գործը . . Գ. Ս. . . 185
3. Հրենէոս ծն նշխարներ նորա գրուածներից . . . . Կ. Վ. . . 189
4. ՆԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 195

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. . . . . Ե. Ծովհաննիսեան . 510
6. Մարգարէից գրքերի հետքերը Նոխէէի պատմութեան մէջ . . . Ս. Ե. . . 211
7. Պարթեւները Պարսկաստանում. . Ն. Ք. . 215

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԻՆՆԱՍԻՐԱԿԱՆ.

8. Մի գլուխ նորագոյն Թուաբանութիւնից Ս. Մ. 217
9. Հայոց նկեղեցական երաժշտութիւնը ԺԹ. դարում . . Կոմիտաս վարդապետ . 221
10. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 226

ԱԶԳԱՑԻՆ.

11. Հայաստաննայց եկեղեցւոյ տարագիր զաւակները 226
12. ՆԿԵՂԵՑԻ ՀԱՑԱՍՏԱՆՆԱՑԻՑ 229
ՄԱՑՐ ԱԹՈՌ 230
ՏԱՃԿԱՀԱՑՔ. 230

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. 232
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՑԱՒԵԼՈՒԱԾ. 233
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.
ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՑԱՒԵԼՈՒԱԾ ԸՐԱՐԱՏ 1897 Թ. ՄԱՅԻՍ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Տարեդարձ Արարատ ամսագրի Յունուարի տետրակի մէջ կ. կ. ստորագրութեամբ և կանոն Թադէոսի առաքելոյ վերնագրով յօդուածի վերջում հրատարակուած՝ 10 տուն նոյն վերնագրով էջ շարականը կարդալուց յետոյ, Տուխտոյ բարեկը. Սիմէօն քահանայն Տէր Պօղոսեանց ներկայացրեց ինձ մի տպեալ Շարակնոց, որի առաջին երեսում տպուած է.—

ՏՊԵԱԼ

Ի Վ. ԷՋԱՓԱՌ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԲՐՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵԱՌՆ ՍԻՄԷՕՆԻ ՍԲՐԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍԲՐՈՑ ՔԱՂԱՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՏԵԱՌՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՍԲՐԱԶԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՀՐԱՄԱՆԱԻ ՆՈՐԻՆ ՍԲՐԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԵԱՒՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

յամի փրկութեան մերոյ 1768
ի Հայոց . . . . . ՌՄԺԷ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ՏԻՐԱՑՈՒ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՆԻ՛ ՏԻՐԱՑՈՒ ՅԱԿՈԲԱՑ:

Այս Շարականոցի մէջ Արեւելք գերարփին-ից յետոյ տպուած է յիշեալ «Կանոն Թադէոսի առաքելոյ» վերնագիրը կրող էջ՝ տասը տուն շարականը, ա— երը ը փոխուած և ունի հետևեալ վերնագիրը:

«Երկաքինք Շարականքս այսոքիք (բայց նախաձեռնելոյ) ոչք հետևին կրկին հանդերձ իւր սարօքն, այսինքն սուրբ առաքելոյն Թադէոսի և սրբոյն Գէորգեայ, եղեն գտանեցեալ ի հին և յեղծեալ շարականոցէ ուսիքէ, որ է պահել ի Թուին Հայոց ի 608, և վասն այնր եղան ասա ի նորում տպագրութեան, որպէս զի՝ և զայնս երգելի գոլ ծանիցին ընդ այլոց երգեհեաց»:

Այդ շարականը՝ «Այսօր ցնծան» պրուած է իրրև Օրհնութիւն, որին հետևում են և հետևեալները, հդ. ծ. ոչ. փ. ղ. և էջ:

Սորանից յետոյ պրուած է—կանոն սրբոյն Գէորգեայ զօրավարին:

Սոյն Շարականոցի մէջ Քրիստոսի հօրեղբայրն և երկու աշակերտաց կանոնից յե-

տոյ դրուած է սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, օ. հ. ֆ, ա, և պ, որոնք օրինակելով՝ աւելացրի շարականներիս տակ:

Այս շարականները արտադրուած են ամենայն ճշտութեամբ և անփոփոխ. աւելորդ չի լինիլ ասել, որ այս Շարակնոցի մէջ տպուած է և սրբոյն Գէորգայ զօրավարի Քաջամարտիկ Օրհնութիւնը, որն արդէն մուծուած է Հայնապրեալ Շարակնոցի մէջ:

Սահակ վրդ. Բաղդասարեանց:

22 Մարտի 1897 թ.
Նուխի:

Նուխուայ յաջորդի Արժ. Բաղդասարեան Սահակ վարդապետի ձեռք բերած այս բոլոր շարականները ունինք և մենք Անծանօթ Շարականը վերնագրով մեր անտիպ Ժողովածուի մէջ, որոնք քաղել ենք Մայր Աթոռոյս Մատենադարանի բոլոր ձեռագիր Շարականներից: Նա որպէս զի յիշեալ Արժ. Հօր ուղարկած շարականների տպագրութիւնը կատարեալ լինի, ուստի մենք մեր կողմից աւելորդ չհամարեցինք բաղդատել այդ բոլորը մեր ձեռքում գտնուած օրինակների հետ, յիշելով միանգամայն, թէ ինչ համար կրող ձեռագիր Շարականների մէջ են գտնուում նոքա: Արդ՝ ատորև դրուած շարականներից՝ սրբոյն Թադէոսի Այսօր ցնծան խրախճանապէս Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, ՄԺ-ի, Ո-ի, Տ-ի, Մկ-ի և Ճշ-ի հետ գտնուում են 1587—ԺՀ, 1594—ՅԴ, 1612—ՆՍԱ, 1622—ԺԱ, 594—ԿԴ և 599—ԿԹ (կրճատ գրութեամբ) Շարականների մէջ: Օրհնութիւնը գտնուում է և 1581—Ժ (կրճատ գրութեամբ) Շարականում, իսկ Մկ—ը և Ճաշուն՝ և 1613—ՆԽԲ Շարականի մէջ:

Սոյն շարականներին յաջորդող սրբոյն Գէորգայ զօրավարի Քաջամարտիկ սուրբ Նահատակ (որ պակասում է իւր կարգից) Օրհնութեան հետ շղթայուած Դուխաւ վերից Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, Ո-ի, Տ-ի և Մկ-ի հետ գտնուում են միմիայն 594—ԿԴ Շարականի մէջ. իսկ Հզաւը եւ յաղթող գողտրիկ մի անծանօթ շարականը, որ ինձ թուում է թէ ճաշու լինի, և ի լուսն այս կարգի, աւելացրինք մենք, սա էլ գտնուում է 1588—ԺԸ Սարգիս երէց Շարականի մէջ, և դրուած է քաջայաղթ զօրավարիս Ով սուրբ Գէորգ ծանօթ Մկ-ի տակ: Ի գիտութիւն մեր ընթերցողներին յայտնում ենք վաւերական Մանկունքիս մասին և այս, որ տպագրուած Շարականների մէջ այս Մանկունքը դրուած է ՊՅ Մարտիրոսաց կարգում, որին թերևս շատերը անգիտութեամբ վերագրեն Մարտիրոսաց կարգը գրող Պետրոս գետադարձին, մինչդեռ այս փոփոխութիւնը Մանկունքիս հետ նոր է, և Մանկունքիս նորութեան մասին վկայում է յիշեալ Սարգիս երէցը իւր Շարականի հետ գրած Տօնացուցում՝ ասելով, «Շբ. Տաւն սրբոյն Գէորգեա զաւրավարի. հմն. գկ. Զինուորութիւնք հրեշտակ. մկ. նոր ասա. և թէ ոչ. Զինուորն Քրիստոսի. (Մարտիրոսաց ՟Յ. Ղ.) Մեհեկի. ՃԳ.»: Ի նշան Մանկունքիս նորութեան գրուած է նաբաց ձևով:

Այս շարականներին յաջորդող սրբոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոց Անընկճելն Աստուած անծանօթի մի այլ Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, Ո-ի, և Տ-ի հետ գտնուում են միմիայն 594—ԿԴ Շարականի մէջ:

Ընդհանրապէս գէորգ կաթուղիկոսը ի նկատի ունենալով, որ մեծ առաքեալներս իրենց տօների ժամանակ չունին երգուելիք մի յատուկ շարական, այս իսկ պատճառաւ 1875 թուին յիշեալ շարականները մուծեց ձայնագրեալ Շարականի մէջ, ինքն իրենից սահեցնելով նոցա ձայնը և ձայնագրել տալով:

Արդ՝ թողնելով Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոց անունով յօրինուած այս վերջին Օրհնութիւնը, Հց-ը, Ող-ն, և Տ-ը, որոց մասին չգիտեմ թէ ով զարու գործ են և մեր եկեղեցու ով սրբազան պաշտօնեան է հոգւով ոգեզրել, գտանենք այժմ Տէր Պօղոսեանց բարեկրօն Սիմէօն քահանայի՝ իւր զերապատիւ յաջորդին ներկայացրած «հին և նորոգեալ» Շարականին, «որ է գրեալ ի թուին Հայոց 608 (ՈՀ—1159) և որի մէջ պարունակում են «երկոքին շարականս այսոցիկ», այսինքն, «սուրբ առաքե-

լոյն Թադէոսի» Այսօր ցնծան խրախճանապաշէս իւր լծորդ շարականներով, «և սրբոյն Գէորգեայ» յովհաւ զնոյնց իւր լծորդ շարականներով։ Ուղիղ է արդեօք հին և եղծեալ Շարականիս այս սիրտ թրթռացնող 608 Հայոց Թուականը, ուղիղ է արդեօք, որ նրա մէջ պարունակուած «երկոքին շարականները» են արդարև ԺԲ-րդ արձանի գալի գործ։

Այս տարակուսանքը մեր մտքից վերացնելու համար, իբրև վկայ և ապացոյց հանդիսանում մեզ նոյն իսկ այդ շարականները։ Սրբոյն Գէորգայ Օրհնութեան, Հարցի, Ողորմեայի և Տէր յերկինից իրարից անբաժան տների պլխատառերը մեզ կարդալ են տալիս—«Գ ր ի գ ո ր ի ո ս ի Ա ռ գ է ո ր ջ գ է ո ս վկայ»։ Ով է արդեօք Հայոց ՈՐ և փրկչական 1159 Թուին կամ լաւ և ասել ԺԲ-րդ դարում ապրող այս Գ ր ի գ ո ր ի ո ս ը—այս Գրիգորիոսին ևս ճանաչում եմ՝ սրբոց վկայաբանութեանց և նոյն իսկ սրբոց սիրահար «փոքր վկայասէր» կոչուած Գրիգորիոս կաթուղիկոսին, որը իւր ծերութեան օրհնութիւնը բոլոր ուժով թափելով իւր հեզահամբոյր եղբօր՝ Ներսէս Շնորհալու գահակալութեան վերայ, և իւր ամրիծ ձեռքով օծելով նրան կաթուղիկոս, ապա «Փոխեցաւ յաստուածս յամի տեառն 1166 և ի Թուականութեանս Հայոց ՈԺԵ կամ ՈԺԴ և թաղեցաւ ի Հռոմկլայ», (Ձամչ. Պատ. Հայ. Դ. 82), որ ասել է թէ վերոյիշեալ հին և եղծեալ շարականի տարեթուից յետոյ գլորուելով այլ ևս 7 տարի, ապա կնքել է իւր մահկանացուն երջանիկ Հայրապետս, յիշատակ թողնելով մեզ «Գրիգորիոսի առ Գէորգէոս վկայ» շարականը։

Գալով Թադէոսի առաքելոյ շարականներին, որոնք ինչպէս տեսանք գտնուում են գարձեալ նոյն հին և եղծեալ Շարականի մէջ, ԺԴ-րդ դարում երևով՝ 1588—ԺԷ նշանաւոր Շարականի գրիչ Սարգիս երէցը ասում է մեծ առաքեալիս ածնի ժամանակ երգուելիք շարականների մասին՝ իւր Ցօնացոյցում առանց մէջ տեղ բերելու Բարդուղիմէոս առաքեալի անունը, «Շր. Թադէոսի առաք. Հարցն զնորն ասա. Թէ, ոչ. Լակիշ բանք հօր և հոգ. Մ ե ծ ա գ ա ս (սգէն) հոդոյն դալսան. Այսաւրը նոր ժող. ի քաղց ԺԴ» Թղ. 225 ա։

Արդ՝ Սարգիս երէցի այս ակնարկութիւնը «ի նոր Հարցի մասին է, Որ արարիչդ ևս հրեղինաց առաջին Հարցի», որ գրուած է Այսօր ցնծան խրախճանապէս Օրհնութեան տակ, ուր և սկզբից մինչև վերջ «Թադէոս» է միայն յիշատակուում գլուատելով նրա առաքելութիւնը Նախանձամղի դիմաց՝ ասելով, «Սուրբ զառաքեալն Թադէոս առաքեցեր ի Հայաստան լուսաւորիչ որդւոց Թորգոմայ», Թէ Որ իսկզբանէ սահմանելով երկրորդ Հարցի, որ գլուած է Անսկիզբն Ած անճառելի Օրհնութեան տակ, ուր Հարցիս ընորհալի հեղինակը առաքելութեան աստիճանի մէջ հաւասար ճանաչելով զԹադէոս և զԲարդուղիմէոս, սկզբից մինչև վերջ գովում է մերթ մէկին մերթ միւսին, մրմնջալով երկուսի համար և Մխիթին Որդւոյ և Հոգւոյն սրբոյ դիմաց, «Որ...լուսաւորիչ Հայաստան երկրիս՝ պարգևեցեր զսուրբ առաքեալն Բարդուղիմէոս», «Որ...առաքեցեր Հայաստանեայց զսուրբ առաքեալն Թադէոս» և այլն և այլն։ Արդ՝ այս պարզ և ակնյայտնի նշաններից յետոյ, Սարգիս երէցի յիշած նոր Հարցը, փոքր վկայասէր Գրիգորիոս կաթուղիկոսին տարով ու գարով հաստակակից՝ է առաջին Հարցը՝ «Որ արարիչդ ևս հրեղինաց» որ գտնուում է յիշեալ հին և եղծեալ Շարականի մէջ և յամենայնպէս արտագրուած է ժամանակի հին գրիչներից՝ ինչպէս տեսանք, և ոչ երկրորդ Հարցը՝ Որ իսկզբանէ սահմանելով, որ իրրև աւելի նոր բան, յամենայնպէս չէ արտագրուած և հետևապէս չէ եղել նոյն հին և եղծեալ Շարականի մէջ։

Ո՛հ, որքան տարակուսանքները կլուծէր այդ հին և եղծեալ և ՈՐ Թուին գրած աննման Շարականը, եթէ մի օր յարութիւն առնէր մեր շէն և անշէն սրբավայրերից։ *

Սահակ վարդապետ Ամատունի։

---

* Ստորեւ գրուած շարականների ծանօթութեանց համար գործ են գրուած ձեռագրների հայերէն թուանշանները — ԺԶ. եւն. հին եւ եղծեալ Շարականի փոխարէն՝ Տպ. (տպագրեալ), իսկ Ձայնագրեալ շարականի՝ Ձյնգ։

«Այսօր ցընծան [1] խրախճանապէս եկեղեցիք Հայաստանեայց և պարէ ուրախութեամբ, համաձայնեալ ընդ [2] հրաբուխն զօրացըն. ծանեալով ըզյիշատակ առաքելոյն Թադէոսի. վասն որոյ մաղթանօք սորա կեցո ըզմեզ մարգասէր Փրկիչ:

«Այսօր պընաւիւն յաշակերտաց [3] և ի [4] խմբից վարդապետաց սուրբ զառաքեալըն Թադէոս առաքեցեր ի Հայաստան լուսաւորիչ արդւոյ Թորգոմայ. վս:

«Այսօր ծընեալ որդիք լուսոյ մաքուր կրկամբք աւազանին, ի ձեռըն սուրբ հօտապետին, մեծ և ընտրեալ առաքելոյն լուսապայծառ քարոզութեամբ. վս:

«Այսօր կոչեաց զազգըս Հայոց նախահրաւէր կոչմամբ Հոգւոյն ի հարսնութիւն սուրբ փեսայիդ. [5] մուծանելով ի յառապատ [6] ընդ բազմելոցն անդրանկաց Հոգւոց. [7] վս:

«Այսօր խընդա մայր Աստուծոյ տաճար բանին [8] մարմնացելոյ. յիշատակաւ հօրըն լուսոյ. և ազաչեա զլոյն ի հօրէ. որ վառեսցէ մարմնով ի քուէ [9] յարդանդի [10]. զի փըրկեսցէ զանձինըս մեր:

✠ «Այսօր ժողովք նահապետաց [11]. և երջանիկ դասք արդարոց համախմբեալք [12] սիրով ընդ մեզ, հրճուին [13] ծանիւս վըկայութեամբ առաքելոյն Թադէոսի. վս:

«Այսօր վկայն հանդիսաւոր վառեալ պինու սիգաւ խաչին եմուտ յատեան խրախուսելով և սատակեաց ղչար ախոյեանն [14] որպէս և դու կենսարեր [15] փայտիւն. վս:

«Այսօր ղեղարդըն պատուական եւս մեզ նըշան պահպանութեան՝ ներկեալ արեամբ կենարարին. որով փըրկիմք և ամրանամք յոդմպէիկ [16] կըրկին որսոզաց. վս:

«Այսօր ծածկեալ [17] գանձըն լուսոյ մաքուր նըշխարաբք երանելոյն վերացօղէ [18] ըզցօղ շնորհաց, ի մաքրութիւն հոգւոց մերոց, և ի բուժումն ախտալից մարմնոց. [19] վս:

«Այսօր և դու կոյս Մարիամ Աբրահամեան տոհմին պարծանք. ի փըրկութեան մերոյ խորհուրդ. առցես ընդ քեզ միջնորդ կենաց, սուրբ զառաքեալըն Թադէոս. և հայցեսցես ի Տեառնէ ըմիտութիւն մերոց [20] յանցանաց:

Ել հ. Որ արարիչդ ես հրեղինաց. և ըստեղծիչ հողեղինաց, սուրբ զառաքեալըն Թադէոս նախկին ի փառըս կոչեցեր. ըզքեզ բարեբանեմք Աքէծ հարցըն մերոց:

Որ հակիպէտ ես հօր փառաց. հոգւոյն [1] հաղորդ որդիդ ըմիածոյ. ղարչարանաց [2] քոց հաղորդեալն աթոռակիից քեզ [3] արարեր. ըզ:

Որ զուգափառ հօր և որդւոյ. հոգիդ բըխումըն և [4] համագոյ. առատապէս շնորհօք լցեր [5]. զձիւնափայլեանն [6] որ ի Սափմ. ըզ:

Ք. Ըզծէր: Ընդ առաքելոյն Թադէոսի [7]. զառաքեալն ի հօրէ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Այսօր ըզմաքրեալն [8] յորովայնէ. զհոգւով օծեալըն Թադէոս զոր առաքեաց [9] լուսաւորիչ Հայոց. օրհնեցէք զառաքիչ [10] որդւոյ ըզհայրըն. բարձր:

Այսօր աշակերտաք աւետարանին. որ ի ձեռըն Թադէոսի. զաւետիս կենաց հընչեաց որպ՝ոցս [11] Արամայ. ծընունդք [12] լուսափայլ

---

1. ՀԳ· ծա—ցնծայ·
2. Ձեռագիրք չունին—ընդ·
3. ՀԳ· ընտրեալ աշակերտաց·
4. Կղ· չունի—ի·
5. ԾԶ, Խա, ծա, Կղ, Տպ·—փեսային·
6. Տպ·—ի յառագաստըն·
7. ծա—անդրանկանց հոգւոյն·
8. ՀԳ—բանին տեառն սերմնաքաղելոյ·
9. ՀԳ· Խա· ծա· Կղ· Կթ, Ծ· Տպ—ի քոյդ·
10. ԾԶ, Խա, ծա· Կղ, Կթ, Ծ—յարգանդէ, Տպ·—արգանդէ·
11. Տպ·—նահապետացն·
12. ԾԶ, Խա, ծա, Կղ, Կթ· Ծ, Տպ—համախմբեալ· ծա—համաձայնեալ·
13. ԾԶ, Խա—հրճուիմք·
14. Տպ·—ախոյեան·
15. ՀԳ·—կենսատու խաչիւ· ծա·—կենսարերք փայտին·
16. ԾԶ, Խա—յորոգայթէ·
17. ԾԶ—զծածկեալ·
18. ՀԳ—վերացաւղէր·
19. ԾԶ, ՀԳ—մարմնոյ·
20. ԾԶ, ՀԳ, Խա, Կղ, Տպ·—մերոյ·
1. ԾԶ, Խա—որդի անեղ հոգւոյն հաղորդ· ՀԳ, ծա—որդեղ անեղ հոգւոյ·
2. ԾԶ, ծա—չարչարանաց·
3. ծա, չունի—քեզ· Տպ·—քոց·
4. ՀԳ, Խա ծա, Հղ, Տպ· չունի—եւ·
5. ԾԶ, Խա—լցեալ·
6. ԾԶ, Խա—ձիւնափայլն·
7. Ձեռագիրք չունին—Թադէոսի·
8. ԾԶ մաքրեալ· 9· Տպ·—առաքեցեր·
10. ԾԶ—զարարիչն· ԾԶ· ՀԳ, Խա, ծա, Կթ Տպ· զառաքիչն·
11. ԾԶ· Խա· ծա որդւոց 12. ԾԶ—ծնունդ·

բանին[13] նորին բարձր արարիք զՈրդին Միածնին։

Այսօր սպասաւորք երկնաւոր հային. որ ըզ հայն անմահութեան ի ձեռն Թադէոսի[14] բաշխեաց որդւոց հոգևորաց. օծեալ հոգւով քահանայք բարձր արարիք զհոգին ճշմարիտ։

ՃՀ. Աստուածածնին բանին բարձօղ. քառակերպիկ աթոռոց[1] եղեր վեհագոյն. որով զբազմեալն ի քրովբէս[2] ի քեզ կրեցեր. զքեզ բարեբանեալք սրբրատաց ձայնիւ և հոգևոր երգով մեծացուցանեմք։

Սափոր ոսկի կենաց հային. և սահատակ քարեղէն մատամբ բանին ձեռապրեալ.[3] որով զօրէնս անեղծ հատուր մարդկան. զքեզ։

Մաղթեաց ըզծնեալն ի քէն Յիսուս, մաքրութիւն[4] տալ հոգւոյ յաւուր ածնի ընաբնակ զաւակի քո առաքելոյն Թադէոսի. ըզքեզ։

ՃԱ. Որ զքեմութեամբ արարչական կամացդոյ Ցէր ողորմեցար որդւոցս[1] Արեթայ. և հատուր պաշտպան փրկութեան[2] մեզ ըղՂեւիտէոս որ կոչեցաւն ի քէն Թադէոս. մաղթանօք սուրբ ողորմեա։

Որ ընաբնակեր անօրէնութեանըդ քում քարող զաւրբն[3] Թադէոս. և առաքեցեր առ հատանիչ հիւսիսոյ ազանց ներգործութեամբ հնարհոյ սուրբ հոգւոյն. մեզ։

Որ զերջանիկ և զդերապայծառ լոյս[4] իմացութեան նմա շնորհեցեր. և զոխերամած խաւար մեզոյ և անգիտութեան[5] յարտարածոյ նաւաւ հերքեցեր. մեզ։

ՃԲ. Որ միշտ յերկինս փառաբանիս ի հրեշտակայ անեթարգման բնութիւն[1]. այսօր[2] ի ձեռն երանելի առաքելոյն ընկալար օրհնարանիչս[3] ի հոգևորինացս. վառեալ երգեմք զքեզ փառս ի բարձունս։

Որ անձառ աստուածային փառաւք շքեղացուցեր զԱգաթն առաջին[4]. այսօր վերըսաին զազգըս Հայոց պարգևեցեր պէսպէս շնորհաց քոց նորոգութեամբ. վայ։

Որ ի ձեռն Մովսէսի զհինն Իսրայէլ յՆգիպտոսէ ազատեցեր[5] այսօր ի ձեռն Թադէոսի սուրբ[6] առաքելոյն. զազգըս Հայոց յորդեղութիւն վերակոչեցեր. վայ։

***

ՃԳ. Անժամանակ ծընունդ որդի միշտ յաւիտեան ընդ հօր գոլով անճառապէս. որ[1] ընտրեցեր քեզ պաշտօնեայ առաքեալըն Թադէոս առանձալ[2] նուաւ[3] հաղորդ փառաց զորդիս Որոգոմեայ ժառանգելով զկեանս անվաղճան։

Լոյս ի լուսոյ առաքեցար. լուսաւորել[4] ըզխաւարեալ մեզոք բնութիւնս. և[5] յարփիաւոր լուսոյդ Ջահ վառեցեր ըզԹադէոս. լուսաւորել բանիւ զորդիս Որոգոմայ. Ժառ։

Ոգեօղ ծագիկեալ[6] հրաշիւք հոգւոյն. որ ճրմլեցար ի քառաթև[7] հընձան խաչին. և արբուցեր հրեղէն գինեաւ զերանելին ըզԹադէոս. որով զմայլեալ[8] անճառապէս արբոյց զորդիս Որոգոմայ,[9] Ժառանգելով զկեանս անվախճան։

ՃԴ. Ընդմարտութեան բանին քարող և առաքեալ սուրբըդ[1] Թադէոս. որ զկենարար սերմն հոգևոր սերմանեցեր յերկիր բանաւոր. բարեխօսեա առ Ցէր վասն անձանց մերոց։

Որ յօրինակ քաղցրահամ վարպապետութեանդ զոր մեզ[2] արբեցուցեր. Ջուր կեն-

---

13. Ծա, Նդ, Կթ, Տպ.—բանիւ.
14. Ոգ—իծեռն առաքելոյն քաշխեաց
1. Ժզ, Խա. Ծա—աթոռոցն.
2. Ոգ—ի քերովբէս.
3. Ոգ—ձեւագրեաց.
4. Ոգ—մաքրութեան.
1. Խա. Ծա. Նդ—որդւոց.
2. Ոգ—ի փրկութեան.
3. Ոգ. Տպ.—զմեծն,
4. Ծա—լոյսդ.
5. Խա—զանգիտութեան. Տպ.—անգիտութեանն.
1. Խա. Ծա—բնութեամբ.
2. Ժզ ի ձեռն Թադէոսի սուրբ առաքելոյն.
3. Ժզ—աւրնաբանիչք ի հրեղինաց. Ոգ—աւրնաբանիչ.
4. Ոգ—առաջի.
5. Ոգ—ազատելով.
6. Ոգ—Խա. Ծա. չունին—սուրբ.
1. Ժզ. Խա—որ ընտրեցեր ի մարդկանէ. քեզ
2. Ժզ—ստանալով,
3. Ոգ. Խա, Ծա, Նդ. Կթ, Խբ. Տպ.—ասաւ.
4. Ոգ—լուսաւորելոյս մեզոք բնութեամբ որ արփիափայլ.
5. Ոգ, Խա, Ծա, Նդ. Կթ, Խբ, Տպ.—որ
6. Ոգ—եղեալ զծաղկեալ.
7. Նդ. Տպ.—ի քառանկիւն.
8. Տպ—զմայլեալն.
9. Տպ.չունէր—Որոգոմայ, ժառանգելով զկեանս անվախճան. 1. Ոգ—սուրբն. 2. Տպ.—մեր.

դանի երկոտասան վըտակ բաժանեալ յատա-
ռաժ վիմէ բըղխեցեր· բա։

Ի տաճարի Հանդըստեան վկայութեան
քո սուրբ ոսկերաց· մատուցեալ երկիւղիւ,
միշտ և՛ հանապազ պատարտիմք առ Հայըբդ
ըզթած· բարեխօսեա։

Կանոն ողբոյն Դէորգայ զօրավարին·

ա՛ե·

Ե՛յ· Գովեալ ըզնդիկ[1] պինուորաց· երկնաւորաց
ի յերկրէ զօրաց· Դէորգիոս[2] Քրիստոսի յաղ-
թօղ զօրավար· ընդ բոլոր հնարից Թըշնամ-
ւոյն մարտեար։

Րոտեալ երկօք զմարմին քո պինօք· վեր-
կիր բնութեամբդ՝ արօրեցեր տանջանօք· Դէ-
որգիոս երկրագործօղ անձին ըստ[3] անուան ընդ
քրտանց հեղեր ըզկայրակս արեան։

Ի կիզանուա[4] բնութիւն հրոյ յաղթեալ·
և ցաւելի մարմնով ընդդիմ սրոյ մարտեար·
պարտօղ զտանջանս և զՄշնամուոյն[5] խաչառ
զօրութիւն· մեզ Դէորգիոս հայցեա զփրկու-
թիւն։

Դէորգիոս Փրկչին խաչակից· փառաց
յարութեան այսօր ասնակից· զառհասաչեալ
թագակցելոյն ասահն ընկալեալ· մաղթեա վա-
սըն մեր պինուոր զօրացեալ։

Որ Յ՚ի[6] առեր հարիւրապատիկ· միա-
կութեան ծաղիկ ըզհրաչս առ մարդիկ· վաս-
տակիդ անձին պըտղաբերել՝ զանմահ կեանս
յերկրին, միշտ Դէորգիոս մաղթեա փըրկողին։

Որ դաւանեալ ի նահատակաց· բերկրեալ
յարութեամբ որդւոյդ մայր փառաց· հայցեա
վասըն մեր միշտ կոյս սիրուհի· առ քեզ
մաղթանօք Դէորգիոսի։

Բամից դասուց քոց վկայից զԴէորգիոս[7]
զօրաղլուխ խըմբից· ցուցեր խաչիդ քո չար-
չարակից· և յարութեան քո կենդանից հաղորդ
փառաց թագեալ[8] ասնակից· բաղմագոյն սուրբ
չարչարանօք աէր կեցո ըզմեզ։

4· Տպ· գնդի
2· „—Գէորգէս
3· „—ընդ·
4· „—ի կիզանոտ·
5· Ձեռագր·—Թշնամւոյն·
6· „ „ —աշխարհի·
7· „ „ —Գէորգէոս·
8· Տպ·—Թաղեալ·

Ի սիպ կողի քո զնդարդեան[9] զհոգեաւ-
ծըն ի կողն առեալ զնդարդեամբ· հոգւով զՀո-
գիս չարութեան պարտէր· մարմին դերկամ[10]
յեաս ընկրկեալ և քերանաց միշ ի յոսկեաս
Դէորգիոս կախեալ ժուժկալէր· բազ։

Որ ըստ քոյին Ցխսուս Թադման յերիս[11]
աւուրս իգուբ կըցն ժուժայը պրման[12], երեք-
օրեայ ընդ քեզ յարուցեալ իբը ի լուալեաց
ի զբոյն ելեալ Դէորգիոս անապատ նորոգեալ·
բազ։

Սարսուռ յանւոյն տանջանս[13] կապեալ
և հոլովմամբ սրովբէն խոցոտեալ· որպէս սպի
յօդահատելով· պըղտարիւրկը քեզ հատրօք
և քարոզէր զքեզ մեռելովբէն յարուցելով·
բազ։

Ի յերկրեղէն մեր բնութենէ մըշտակու-
թեամբ սըրբեալ կոյս առ ի հօրէ· ժամու հ-
աւուր[14] մեզ պըտուղ գոլոյն՝ յորմէ վրկայ-
բողբոջեցին զորս մըշակեաց[15] Դէորգիոս զօրա-
գլուխ նոցին· սիրուհի հայցմամբ նորա առ քեզ
մաղթեա վասն մեր։

գէ· Ե· Անմարմնոց[1] արքայ հըրեշտակաց պի-
նուորութեանդ պաշտեալ· նահատակեալ քոյ
պինուորաց յերկրէ զօրավար զԴէորգիոս[2] յու-
ցեր· ըզ քեզ օրհնէ Աստուած հարցըն մերոց։

Ռամկական գումարք թագաւորք և պե-
տութիւնք գիւաց· պատերազմեալք ընդ մի
պինուորըն քո տանջանօքն ամէն յաղթեաց· ըզ։

Դէորգիոսի պինուորին քո յաղթող քա-
ջութեամբ· ընդ քեզ բերկրեալ ըսքանչացան
հրեշտակք պատիք ընդառաջեալք յերկինից·
ըզ։

գ· Ըզաէր օրհնեցէք բարձր ատարիք ըզնա
յաւիտեան։

Ընդ բանի ջեռեալ հրով սիրոյ· Դէորգիոս
պինուն հաւատոյ յաղթեաց սրոյ և հրոյ·
բար։

9· Ձեռագր·— գեղարդեամբ·
10· „ „ —յերկաթ·
11· Տպ·— երիս·
12· Տպ·— այման·
13· Ձեռագր·— տանջան·
14· Տպ·— երտուր·
15· Ձեռագր· չուտի — զորս մշակեաց·
1· Տպ·— անմարմնոցդ·
2· Ձեռագ·—Գէորգէոս·

Որ ըստ անուան պհոտւոյ երկիր մշակեաց։ [3] ըզկոտ փուշ հերքեաց և ըզվկայս ծագկեաց։ բար։

Որ զօրութեամբ զանթիւ հրաշս եցոյց։ պՀնագոյն մեռեալսըն յարոյց զմահապեղն եւլոյծ։ բար։

Որ ի յերկրի [4] վինուորիկ կարգաւ։ մահուամբ յերկինս թագեցաւ անմահ պըսակաւ։ բար։

ք։ ա։ **Բ**ամեալ ըզկիրըս [5] տանջանաց վերկուանս հանուրըդ քո վըշաց Դէորդէոս յանձին տարաւ։ իրրև ըզվէմ անդիւծ դըտաւ։ դո՛ լուծ և զխաչ Քրիստոս բարձեալ սաղ ծանրագոյն [6] վիմաց պարդեալ։

Դամրաց առ կայսր ուռ տարաճեալ զմնայսըն* ծածկեաց յորդւոյդ ծագկեալ սրօքըն այաեալ և կոշկռճեալ։ քաջ բարուեսկ հօր քո սրբրեալ։ Դէորդէոս քեզ մշակեաց բազում վըկայս պըտղաբերեաց։

Ը՛ի հոգւոյդ քո բնակարան յայտնեալ գործօքըն հրաշագան ի տանջանաց միշտ նոտըգէր և զվերս ախտից բազմաց մաքրէր։ Դէորդէոս ընդ քեզ յառնէր։ և զկ մեռեալս [7] յարուցանէր։

Ողջոյն ի փորձն [8] ոչ յաղթելով։ մարմնովն ի կրկին ոչ պարտելով։ [9] երեր զպատակեր քո յարութեան։ որ հաղորդեալ աէր քո մահուան Դէորդէոս մեծ քո վկայն։ որով առ մեզ ձիր մաքրութեան։ [10]

փ։ **Ս**քանչելապէս ի քեզ Քրիստոս [1] յաղթեաց բանսարկուին։ միշտ քեւ բարեւարէ զձիր մարդկան ազին։ ով սուրբ Դէորդէոս պատեալ զօրագրուխ պարուց վըկայից։ աղաչեա վասըն մեր Քրիստոսի ընդ քեզ հանդիպիլ։

Վառեալ սուսերաւ բանի հոգւոյն արութեամբ։ զյուսոյ սաղատարա և զհաւատոյ վահան ըզեցար քաջութեամբ։ ով սուրբ։

Կապեալ Քրիստոսի ճընշեցար նեղութեամբ։ յորմէ կոխեցեր զօձն երկաթի հրացեալ կոշկաց բեռամբ։ ով սուրբ Դէոր։

Անբիծ կենաց սըկսաւ պօրծութեամբ զՔրիստոս ըզպեցար։ և զերբնաւից տանջանաց ժուժեալ մահու ըզխաչըն բարձեր։ ով սուրբ Դէորդէոս։ փառք և պարծանաց պըսակ վըկայից։ քաջ վինուորդ և յաղթող առ արքայն Քրիստոս լեր մաղթող։

Յերջանկացեալ մարտիրոս հօրէ՝ մարտիրոս որդի՝ սքանչելի ծընունդ սրբոյ վկային Դէորնդէոսի։ [2] ով սուրբ Դէորդէոս զամրացուց բազբոջ և պաղեատու ծագիկ։ Նիկոմիդիայ [3] պըսակ։ ընդ քեզ միշտ երգեմք փառս [4] ի բարձունս։

Էջ։ Դ։ **Ո**ր թագաւորդ երկնաւորաց յերկրէ ստացար դուռնդ վինուորաց։ որպէս արեգակն ի մէջ աստեղաց փայլեաց հաղորդ խաչիդ փառաց Դէորդէոս յաղթօղն ի դամրաց։ աղաչանօք սորա Քրիստոս խընայեսա ի մեզ։

Որ տանջանօքըն բազմազին քո վկայըսըն եառ պըսակ շնորհին։ զմեծ [1] և [2] զըզըժընդակ կիրս յամենայնի՝ [3] Դէորդէոս տարեալ յանձին՝ զջարչարանաց քոյին զպահատութիւն ելից [4] ի մարմին։ աղաչ։

Որ վինուք զանձն որպէս երկիր [5] մշակկելով զանուն Քարկ ի կիր՝ ծագկեաց յաշխարհի հարիւրապատիկ պըտղաբերել, ասա և յերկրին՝ զործով հրաշից բազմապատիկ Դէորդէոս շնորհիւ առ մարդիկ։ աղաչ։

Որ քըրտնաջան երկագործեաց և զօրապըսիս երկուս [6] զօրօք քեզ ընծայեաց։ զանազօլէս և ըզպրատօլէս ընդ թագուհւոյն աղեքսանդրեայ։ նոյն զամենսս և զԴեղերիկոս [7] բազում սըրբօք մատոյց վկայս քեզ Դէորդէոս։ աղաչ։

---

3. Տպ.—Գէորգէոս զկոտ փուշ։
4. Զոգր.—ի յերկրէ։
5. „ „—ի գիրկս։
6. „ „—ծանրագոյն ստոր վիմաց։
* Զուգրմ եւ Տպգուսմ՝ այսպէս։
7. Զայնգր—եւ զմեռեալն։
8. Տպ.—որ գովի փորձն։
9. Զոգր.—պատրելով։
10. Տպ. -քաւութեան։
1. Զոգր. չունի.—քրիստոս։

2. Զայնգր.—Գերոնգէոսի։
3. „ —Նիկոմիդեայ։
4. „ —փառք ի բարձունս աստուծոյ։
1. „ —մեծ։
2. Տպ. չունի—եւ։
3. Զոգր.—ամենայնի։
4. „ —եւիցն։
5 „ —յերկնից։ Տպ.—երկից։
6. Տպ.—երկու։
7. „ —Դեղերիկայ։

✻ ԻԳ· [1] Հզաւր և յաղթող նահատակք քրիստոսի, բարեբանեմք զձեզ ով սուրբ մարտիրոսք, բարեխաւսք հաւատացելոց առ Քրիստոս:

Վերին զաւրացն գասակից՛ք, ընկալարք երկնաւոր թագաւորին, բարեբանեմք զձեզ ով սուրբ մարտիրոսք, բարեխաւսք հաւատացելոց առ Քրիստոս:

Անթառամ ծաղիկ սրբոց, և պարծանք սուրբ եկեղեցւոյ, յոյս վաստակելոց ի նեղութեան· բարեբանեմք զձեզ ով սուրբ մարտիրոսք, բարեխաւսք հաւատացելոց առ Քրիստոս:

աՀ·

ԷԿ· ՀԷ· Անընկիզին Աստուած անճառելի լոյս համատիւռ· ծագեցեր պղծմանեամբ պղծոյս աստուածային քո պիտութեան [1] ի Հայաստանեայս: [2]

Միածին որդի լոյս ի լուսոյ ծագեալ յաշխարհ կոչեցեր զՀայաստանեայս [3] ի հաւատս անբիծս ի ձեռն սուրբ առաքելոցն:

Անբասիր պարիսպ կենդանարար բղխումն անճառ· լցուցեր զՀայաստանեայս բարեբար Փրկիչ և կեցուցիչ քո պիտութեամբ: [4]

✻ Արդ եկայք հաւատացեալ [5] ժողովուրդք Հայաստանեայց՝ ի ձեռն սուրբ առաքելոյն Բարթուղիմէի՝ առ քօ օրհնութիւն հօր ի բարձունս:

Ժողովուրդք աշակերտեալք առաքելոյն Թադէոսի՝ եկեալք ի լոյս ի խաւարէ· բարեբանեցէք զմարմնացեալ բանն Աստուած:

Նորոգեալք ի հնութենէ, ի ձեռն սուրբ առաքելոյն՝ ընծայորդոյ բնութեան մերոյ ի ձայն գոհութեան ամենեքեան փառաւորեցէք:

ԷՅ· Հ· Որ ի սկզբանէ սահմանելով զմիութիւն Հայաստանեայց՝ հայր անընկիզին և աստուածութ՝ մեզ ծանուցեր զմիածինդ ի ձեռն սուրբ առաքելոյն· ապաչանօք սոյա նկրեա մեզ առ Աստուած հարցն մերոյ:

1· Թերեւս – ճշ·
1· Զ· եւ Զխնգլ· – գիտութեանդ·
2· ,, – ի Հայաստան·
3· ,, – զՀայաստանեայս·
4· ,, – գիտութեամբդ·
5· Ցպ· եւ Զխնգլ· – լուսաւորեալք ժողովուրդք·

Որ ի կատարած որովհետ, ծընեալ մարմնով բանդ Աստուած ի փրկութիւն որդւոցս [1] ազամայ՝ առաքեցեր Հայաստանեայց զսուրբ առաքեալդն Թադէոս· ապաչանօք:

Որ նորոգեցեր զմարեղեսս Հոգւով անեղ հօր Հակից· լուսաւորիչ Հայաստան երկրիս՝ [2] պարգեւեցեր զսուրբ առաքեալն Բարթուղիմէոս· ապաչանօք:

Գ· Օրհնեցէք ամենայն գործք տեառն զտէր օրհնեցէք՝ բարձր արարէք զնա յաւիտեան:

Որք զարդարեցայք երկնային լուսով ժողովուրդք Հայաստանեայց՝ բարեբանելով զտէր օրհնեցէք բարձր արա:

Որք [3] ի ձեռն սրբոյն Թադէոսի ընկալայք զարդեղութիւն հօրն երկնաւորի՝ զտէր օրհնեցէք:

Որք տեսիք զսուրբ Աստուածդիտութեան ի ձեռն Բարթուղիմեայ սուրբ առաքելոյն· զտէր:

ԷՅ· Ո· Որ անքննին քո զքննութեամբ [1] իմով յերկինից բանդ Աստուած՝ և փրկեցեր զմարեղեսս ի ձեռն սուրբ առաքելոցն· ողորմեա ի քեզ հաւատացելոցս:

Որ զմատուռն Արզար Հայոց՝ բժշկեցեր ի չար ախտէն՝ ի ձեռն սուրբ և [2] երջանիկ առաքելոյն Թադէոսի· ողորմ:

Որ զուսաւար կառավարութեան վարատեցեր յերկրէս Հայոց և ծանուցեր զքեզ բանիւ սուրբ առաքելոյն Բարթուղիմեայ՝· ողորմ:

ԷՅ· Ի· Որ չնորհեցեր Հայաստանեայց զսուրբ առաքեալդն Թադէոս· և ծանուցեր զքս միածինդ՝ ներօղ զքննած հայր երկնաւոր· օրհնեմք զքեզ անլռելի ձայնիւ:

Որ յայտնեցեր մեզ զՀայր քո անեղական [1] բանդ Աստուած՝ ի ձեռն սուրբ և երջանիկ առաքելոյն Բարթուղիմեայ՝· օրհ:

Որ մարգեցեր զմարեղեսս ի պիտապատուս մեղուս թեանդ՝ և արարեր երկրպագուս հօր և որդւոյ և քեզ հոգւոյդ օրհ:

1· Զխնգլ· – որդւոց·
2· ,, – երկրի·
3· ,, – որ·
4· Ցպ· – գիտութեամբդ·
2· Զ· եւ Զխնգլ· չունեն – եւ·
1· Ցպ· – հօր բանդ Աստուած·

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

ԱՑԲՒԲԵՆԱՐԱՆ առանց ուսուցչի կարդալ սովորելու համար, պատկերներով. յօրինեց Ց. Տ. Միրաքեանց։

ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ, նոյն հեղինակի։

Ա յս երկու տետրակներով պ. Տ. Միրաքեանցն այն մարդկանց շարքն է կանգնում, որոնք կուզե՜նային ժողովրդեան մէջ գրագիտութիւն՝ լոյս տարածել, յիշեցնելով այն առածը, թէ եթէ սարը ինքը գնալ քեզ չի գալիս, դու գնա գնալ սարը։ Ուրեմն այսպիսի ցանկութիւնն իրագործելու փորձն անգամ շատ համակրելի է և գովելի։ Իսկապէս գրախօսութիւնը այստեղ կարող էր վերջանալ և մենք պէտք է վերջակէտ դնէինք։

Բայց հեղինակը ուրիշ գափնիների յետևից է ընկած. նա խօսում է յանուն հոգեբանութեան և «մանկավարժական կեդրոն»-ի, և տալիս է մի նոր տեսութիւն։ Ընթերցողի առաջ մենք պարտական ենք մնում, որ մի երկու խօսքով բացատրութիւն տանք այս մասին։

Տողերիս գրողը խիստ նախապաշարուած է և չի հաւատում «առանց ուսուցչի սովորելու» կամ «երկու շաբաթի մէջ կարդալ-գրել սովորեցնելու» կամ հեռու քաղաքից «նամակագրութեամբ լեզու ուսուցանելու» խոստումներին։ Դրանք փորձուած են և միշտ—անյաջող։ Ի զուր կարծում է պ. Տ. Միրաքեանցը, թէ իւր «թէօրիան» անծանօթ է, նա յայտնի է իւր սնանկութեամբ։ Յիշեցէք շաքարահացով թխած այբբեն գրերը՝ յիշեցէք „Fischbuch“-ների պարագաները, որոնք վերաբերութիւն ունին ձեր թէօրիային. յիշեցէք Աւետարանով օտար լեզու սովորելու առաջարկը,—և ահա այս բոլորից դուք անշուշտ կունենաք ձեր նոր թէօրիայի բաղադրիչ մասերը։

Պ. Տ. Միրաքեանի «թէօրիան» շատ պարզ է. նա ուզում է (բաւական մաքուր նկարած) պատկերներով հասկացնել տալ այս կամ այն տառը, իսկ ապա կարդացնել տալ նոյն համբակին իւր անգիր գիտեցածները («Առաւօտ լուսոյ», «Հայր մեր». . . . «Հաւատոյ», «Հաւատ—Զուլօ»—այնպէս չէ՞, մեր հայ քրիստոնէի համար, գրագիտութեան ծարաւողի համար, այսպիսի ղեկավարութիւնը շատ հրաշալի պիտի լինի .՞.՞.՞)։

Մենք փորձեցինք գրքի պատկերները կարդացնել մի համբակի. փորձի հետևանքները «տեղնուտեղը արձանագրեցինք», ինչպէս որ հեղինակն է արել, որ և շտապում ենք պարոնին հաղորդել.

ածիլը (ա)	անուանեցին՝	մուրակ (մ)
ուրագը (ու)	»	կացին (կ)
կատուն (կ)	»	շուն (շ)
լիզուն (ու)	»	սոկոն (ն)
օձը (օ)	»	Թոկ (թ)
օդապիր (օ)	»	եկեղեցի (ե)
կտուցը (կ)	»	Հաւի գլուխ (հ)
ձեռքը (ձ)	»	մատներ (մ)
ճիշխարը (ն)	»	խաչ (խ)
թագը (թ)	»	յուրան (գրաքին—յի)
շերեփը (շ)	»	սաղ (ս)
գուլպան (գ)	»	ոտք (ո)
չադրը (չ)	»	սար (ս)
քայտօնը (ք)	»	կառք (կ)
փոչան (ֆ)	»	գոնտիկի կոթ (գ)
բօղը (ռ)	»	կրավաթ (թ)
ճանճը (ճ)	»	բզեզ (բ)
ձրագը (ձ)	»	ջրցան (յեկայ—ջէ)
յիմոնը (լ)	»	դեղձ (դ)
ընկուզը (ը)	»	ձմերուկ (ձ)
դուռը (դ)	»	շկափ (շ)
խաւտցը (ց)	»	ովշար (դպշոյն—րէ)
նուռը (ռ)	»	ձուլի բուն (ն)
պչեչտը (պ)	»	աքասի (ա)

Ուրեմն՝ ա դարձաւ՝ մ
ու » կ և ն
ռ » գ և ն
լ » է
օ » գ
և այլն։ *

Հապա եթէ այսպիսի խառնիճաղանճ գրագիտութեան ընտելացած համբակը ուզենայ տպած գրքից կարդալ զոր օր. «առաւօտ լուսոյ» երկու բառը՝ կարդացողը հարկաւ իւր նորահնար բանալիով այսպէս կարտաբերէ տեսած բառերը

(ա—ռ—ա—ւ—օ—տ լ—ու—ս—ոյ)
մ—թ—մ—վ—ե—ա գ—կ—ս—է

Նա ուրեմն «առաւօտ լուսոյ» կը կարդայ «մթմվետ—գկսե»։ Եւ այդպէս կը կարդայ այն ենթադրութեամբ, եթէ տառեր ճանաչելուց յետոյ՝ մի հրաշքով կարողութիւն կունենայ նաև գիր կապել, որ պարոնի հոգեբանութեամբ աներկբայ պիտի լինի. ??? Հետևապէս մեր համբակի համար առաւօտ լուսոյ նոյն է, թէ «մթմվետ—գկսե», և այսպէս կըլինի նորա ամբողջ գրագիտութիւնը. հիանալի թէօրիա է, այնպէս չէ՞։

Մեր մերմիեջ-դկսե-թէօրիայի յափշտակուողները զարմանալի յամառութեամբ չեն ուզում տեսնել, թէ Կոլումբոսները արդէն գտել են Ամերիկան։ Բայց և այնպէս համոզմամբ կրկնում ենք, թէ նոքա իրանց այնքան եռանդով կարող կին մեծ ծառայութիւն մատուցանել իրանց սիրած գործին, —

Երկրորդ տետրակի մասին չենք խօսում, որովհետև արդէն յայտնի է «Մուրճ» ամսագրից։

Ս. Մ.

* Ով որ գրքի պատկերները տեսնէ, նա չի զարմանայ, որ համբակը մէկի անունը՝ բոլորովին տարբեր անունով է կոչել։ Ուստի եւ մենք չենք ուզում երկարել, թէ այսպիսի բնական շփոթութիւնները առաջ են գալիս ոչ թէ նկարչի անհմտութիւնից, այլ յօրինողի փոքր ինչ խառնակ հոգեբանական հայեացքներից։

ՏՊԱՐԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ

Վաճառուում են
ՀԵՏԵԻԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ·

		ր·	կ·
1·	Վկայաբանութիւն Գործիա և Շմաւնի· (Նգաբանգեղոսի աղբիւրներից), —գրեց Գ· Տէր—Մկրտչեան	—	50
2·	Պարզ քարոզներ· (Գ· գրքոյկ) —գրեց Եմմանուէլ Քահ· Նազարեանց	—	20
3·	Սրբազան Պատմութիւն Հին Ուխտի· Ամբրոսիոս Վ· Գալֆայեանցի · · ·	1	—
4·	Նոյն, Նոր Ուխտի (Պատկերազարդ) ·	—	50
5·	Կրօնական—բարոյական խորհրդածութիւններ· Թարգմանեց Գերմանէրէնից Գրիգոր Եպիսկոպոս Ղազիրեան Ա—Զ· գիրք, իւրաքանչիւր գիրքը ·	—	20
6·	Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղ· պատմ· Աշխատ· Մեսրոպ Վ· Տ· Մովսիսեան	2	—
7·	Սոկրատայ (փոքր) պատմ եկեղ· Մ·Վ·Տ·Մ	—	60
8·	Տէր—Պետրոս Ա Գեսարդարջ· Կ· Կոստանեան	—	10

Շուտով լոյս կը տեսնեն

1· Կրօնական—բարոյական խորհրդածութիւնները Է—Ժ· գիրքը
2· Պարզ քարոզներ, Դ· գրքոյկ,
3· Դաստիարակութիւն եւ ժառանգականութիւն Մ· Գուսկո-ի, թարգմանեց Ս· Մ·

Մատուցի տակ է

1· Հայաստանեայց եկեղեցւոյ Ս· կարգը, Արշակ Տէր Միքելեանի,

Գնա—մատով գնողներին 20% զեղչ—ով։

ՏՊԱՐԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱՏՈՒՑ Ա·ԹՈՌԻՍ ՏՊԱՐԱՆՈՒՄ
Տպագրութեան Համար
ՄԱՏՋԵԼԻ ԳՆԵՐՈՎ
Ընդունուում են
Դասական, Դրական, Դէպական
ԳՐՔԵՐ·

ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
Տօմարներ, Հաշուեքերթեր, Հաշուեկշիռներ,
Ծանուցագրեր:
Վէրնագրուկներ, Նամակի և Ծրարի·
ԻՒՂ
ԿԱԶՄԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ
Ընդունուում են կազմելու
Տօմարներ, Տետրակներ, Գրքեր,
ՊԱՐԶ ԵՒ ՈՍԿԵԶՕԾ·

Պատուիրների համար պէտք է դիմել Տպարանական Ժողովին:

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՌԵՂԻՆ
ԶԱՆԳԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԻՆՔՆԵՐՆԵՐ
ԵԱՐԱԼԵԱՆԻ ԵՒ ԱԼԻԽԱՆԵԱՆԻ
ՏՓԽԻՍՈՒՄ
ՁՈՒԼՈՒՄ Է ՆՈՐԵՐԸ ԵՒ ՎԵՐԱՁՈՒԼՈՒՄ Է ՀՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ
(*մինչև* 1000 *փութ կշռով*).

Գործարանում ձուլուած զանգակները յայտնի են իւրեանց գեղարուեստական ձևերով և հիանալի ձայնով. զանգակի վերայ նկարուում են սրբերի պատկերներ Համաձայն պատուէր տուողների ընտրութեան: Մակագրութիւնները՝ ամեն լեզուներով: Խնդրում են պատուէրներն ուղղել՝ Въ контору чугунно—литейнаго, машино—строительнаго и колокольнаго заводовъ инженеровъ Яралова и Алиханова, Тифлисъ, Александровская ул., собственный домъ, вблизи вокзала.